



Հայաստանում
Կանանց քաղաքական
կարիերայի
առանձնահատկությունները
Հետազոտության արդյունքների
վերլուծական զեկուլյց

Նոյեմբեր 2025

Հետազոտությունն իրականացվել է «Կանանց տեղեկատվական վերլուծական ցանց» ՀԿ-ի փորձագիտական թիմի կողմից, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» և Օքսֆորդի հիմնադրամի աջակցությամբ, «ՀԱՎԱՍԱՐ, ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Օքսֆորդի հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության (EPD) - շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի գործունեությունը միտված է ողջ աշխարհում ժողովրդավարության աջակցմանը: Այն յուրօրինակ ցանց է, որը համախմբում է 20 եվրոպական կազմակերպություններ, որոնք զբաղվում են ժողովրդավարության աջակցությամբ Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Լատինական Ամերիկայի երկրներում: Աշխատելով Եվրոպայի մեջ և Եվրոպայից դուրս՝ կազմակերպությունն առաջնորդվում է այն համոզմունքով, որ ժողովրդավարությունը համընդհանուր ձգտում է, որի առջև այսօր ծառայած մարտահրավերներն ու հնարավորությունները իսկապես գլոբալ բնույթ ունեն: Հենվելով անդամ կազմակերպությունների ձեռք բերած արժեքավոր փորձի վրա՝ կազմակերպությունը հզորացնում է ժողովրդավարական մասնակցայնությունը, հաշվետվողականությունը և կայունությունը համատեղ նախաձեռնությունների և գործակցության միջոցով: Լրացուցիչ տեղեկատվությունը կազմակերպության մասին հասանելի է www.epd.eu կայքում:

«Օքսֆորդ» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ նպատակ ունի ամրապնդել կանանց և երիտասարդների դերը հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում՝ իրականացնելով ծրագրեր, որոնք ուղղված են առաջնորդության, աշխատանքային իրավունքների և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի խթանմանը: Օքսֆորդը համագործակցում է տեղական և միջազգային գործընկերների, պետական և ոչ պետական կառույցների հետ՝ նպաստելով երկխոսության կայացմանը և ավելի հավասար, ներառական և կայուն հասարակության ձևավորմանը Հայաստանում: <https://oxygen.org.am/>

«Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ-ն (WomenNet NGO) անկախ վերլուծական կենտրոն է, որի առաքելությունն է կանանց առաջընթացի խթանումը և կանանց իրավունքների և շահերի պաշտպանությունը: Կազմակերպությունը միավորում է գենդերային փորձագետներին և գենդերային լրագրության ոլորտում մասնագիտացված լրագրողներին: Կազմակերպության անդամները հարուստ փորձ, անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ ունեն կանանց առաջնորդության կրթական ծրագրերի և դասընթացների կազմակերպելու, գենդերային հետազոտություններ և մշտադիտարկումներ անցկացնելու, ինչպես նաև մեդիայում հանրային քարոզարշավներ կազմակերպելու համար: <https://womennet.am/>

Շնորհակալական խոսք

Հետազոտության հեղինակները շնորհակալություն են հայտնում խորքային հարցազրույցներին և ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած բոլոր կանանց և փորձագետներին՝ իրենց ժամանակը տրամադրելու, ինչպես նաև արժեքավոր տվյալներ ու տեղեկություններ ներկայացնելու համար:

Բովանդակություն

Հապավումների ցանկ	4
Հետազոտության ամփոփագիր	5
Թեմայի արդիականությունը	16
Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի գնահատում	18
Հետազոտության մեթոդաբանությունը	23
Մաս 1. Կանանց քաղաքական կարիերայի շարժառիթներ	33
1.1. Կանանց քաղաքականություն ներգրավվելու հանրային և անձնական շարժառիթները	34
1.2. Քաղաքականություն մուտք գործելու հանգամանքները և աջակցող մարդիկ	36
1.3. Քաղաքականություն մուտք գործելու գաղափարախոսական հիմքերը	39
Մաս 2. Առաջնորդական հմտություններ ու բնութագրիչներ	44
2.1. Հմտություններ և անձնական որակներ	44
2.2. Ինքնաբնութագրում՝ որպես քաղաքական գործիչ	46
Մաս 3. Քաղաքականության մեջ հաջողության ընկալում	49
3.1. Կին քաղաքական գործիչների հաջողության բանաձևերը	49
3.2. Քաղաքականության մեջ կանանց համերաշխության մասին պատկերացումները	51
3.3. Կին քաղաքական գործիչների օրինակելի կերպարներ	54
Մաս 4. Կանանց քաղաքական առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոններ	57
4.1. Նպաստող և խոչընդոտող գործոնների ընկալումները	57
4.2. Կանանց անձնական փորձառությունը քաղաքականության մեջ	60
4.3. Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը	64
4.4. Ընտանիքի դերը կանանց քաղաքական առաջընթացի հարցում	70
4.5. Գենդերային քվոտայի արդյունավետության ընկալումները	75
Մաս 5. Հանրային կապերը որպես քաղաքական գործունեության հիմնական գրավական	81
5.1. Ընտրողների հետ կապերը	81
5.2. Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ	85
5.3. Մամուլի հետ հարաբերությունների կառուցման խնդիրները	86
5.4. Տեխնոլոգիաների դերը կանանց քաղաքական գործունեության մեջ	88
Մաս 6. Կուսակցությունների դերը կանանց առաջընթացում	96
Մաս 7. Ապագա կարիերայի տեսլականը	105
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	111

Հապավումների ցանկ

CEDAW	Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women/ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիա
CoE/ԵԽ	Council of Europe /Եվրոպայի խորհուրդ
CRRC/ ՀՌԿԿ	Caucasus Research Resource Center Armenia/«Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն – Հայաստան» հիմնադրամ
EPD	European Partnership for Democracy/ Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության
IRI	International Republican Institute/ Միջազգային հանրապետական ինստիտուտ
IPU	Interparliamentary Union/ Միջխորհրդարանական միություն
NDI/ ԱԺԻ	National Democratic Institute / Ազգային ժողովրդավարական ինստիտուտ
ODIHR/ ԺՀՄԻԳ	OSCE Office for Democratic Institutions and Human Rights /Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
OSCE/ ԵԱՀԿ	Organization for Security and Co-operation in Europe/Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
OxYGen/ՕքսԵՋեն	OxYGen Foundation for Protection of Youth and Women Rights/ «ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ
PACE/ ԵԽԽՎ	Parliamentary Assembly of the Council of Europe /Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
UN/ՄԱԿ	United Nations/ Միավորված Ազգերի կազմակերպություն
UNDP/ՄԱԶԾ	United Nations Development Programme/Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր
USAID/ԱՄՆ ՄԶԳ	United States Agency for International Development/ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման գործակալություն
WFD	Westminster Foundation for Democracy/ Վեստմինստերի ժողովրդավարության հիմնադրամ
ԱԺ	Ազգային ժողով
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՔՀԿ/ ՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն / Հասարակական կազմակերպություն

Հետազոտության ամփոփագիր

Թեմայի արդիականությունը և կանանց քաղաքական մասնակցության իրավիճակը Հայաստանում

Հայաստանում գենդերային հավասարության ոլորտում վերջին տարիներին արձանագրվել է կարևոր առաջընթաց՝ հատկապես օրենսդրական բարեփոխումների և միջազգային պարտավորությունների իրականացման տեսանկյունից: Հայաստանը միացել է գենդերային հավասարությանը վերաբերող մի շարք միջազգային փաստաթղթերի և գործընթացների, որոնք ազգային օրենսդրության և գենդերային քաղաքականության ռազմավարության մշակման հիմք են հանդիսացել: 2025 թ. ընդունված «ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը»¹ սահմանում է վեց գերակայություն՝ ուղղված կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովմանը: Առաջին գերակայությունը կենտրոնանում է կառավարման համակարգում գենդերային խտրականության հաղթահարման և կանանց առաջխաղացման ապահովման վրա:

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության ցուցանիշները զգալիորեն աճել են վերջին տարիներին՝ հատկապես Ազգային ժողովում կանանց 38.3% ներկայացվածության² շնորհիվ, ինչը պայմանավորված է գենդերային քվոտայի և պարզ համամասնական ընտրակարգի կիրառմամբ: Սակայն թվային առաջընթացը դեռևս չի վերածվել կանանց առաջնորդության և որոշումների կայացման մակարդակում լիարժեք ներգրավվածության. կանայք ներկայացված չեն Ազգային ժողովի փոխնախագահների պաշտոնում, չեն ղեկավարում խմբակցություններից ոչ մեկը և գլխավորում են 12 մշտական հանձնաժողովներից միայն 2-ը (16.8%)³: Այս անհամաչափությունը վկայում է կուսակցությունների ներսում նրանց առաջընթացի հնարավորությունների պակասի մասին և հաստատում միջազգային ուսումնասիրությունների դիտարկումները այն մասին, որ քվոտաները բավարար չեն գենդերային հավասարությունը լիարժեք ապահովելու համար:

Կուսակցությունների ներսում կանանց առաջխաղացման սահմանափակումները, խորհրդարանի ղեկավար կազմում նրանց ցածր ներկայացվածությունը, ինչպես նաև գործադիր և դատական իշխանությունների որոշումների ընդունման մակարդակում դեռևս պահպանվող կանանց թերներկայացվածությունը վկայում են համակարգային խոչընդոտների մասին: Թեև որոշակի առաջընթաց է արձանագրվել նախարարների պաշտոններում կանանց նշանակման առումով և 2024 թվականի դեկտեմբերից ՀՀ կառավարության կազմում 12 նախարարից 4-ը կին են (33%)⁴, կանայք երբևէ չեն ղեկավարել երկրի բարձրագույն պաշտոնները, իսկ մարզային և ՏԻՄ մակարդակների ղեկավար պաշտոններում նրանց ներկայությունը մնում է նվազ՝ կանայք ներկայացված չեն մարզպետների պաշտոններում և ղեկավարում են Հայաստանի 71 համայնքից ընդամենը 4-ը կամ 5.6 %-ը⁵: 2020 թվականին ՏԻՄ համակարգում գենդերային քվոտայի ներդրումը նպաստել է ավագանիներում

1 Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարություն և միջոցառումների ծրագիր <https://www.arlis.am/hy/acts/206364>

2 Ազգային ժողովի պաշտոնական կայք 2025թ. օգոստոսի 1-ի դրությամբ: <http://parliament.am/>

3 ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք 2025թ. օգոստոսի 1-ի դրությամբ: <http://parliament.am/>

4 ՀՀ կառավարության պաշտոնական կայք 2025 թ. օգոստոսի 1-ի դրությամբ: <https://www.gov.am/am/>

5 2025թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ՝ <https://www.mtad.am/>

կանանց թվի աճին՝ կազմելով 2025 թվականի դրությամբ 29%⁶, սակայն քվոտայի արդյունավետությունը սահմանափակվում է ինքնաբացարկների և մանդատից հրաժարվելու դեպքերով, ինչի դեմ են ուղղված ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները:

Ընդհանուր առմամբ, կանանց քաղաքական առաջընթացը պայմանավորված է ոչ միայն ընտրական մեխանիզմների կատարելագործմամբ, այլև կուսակցությունների գենդերազգային քաղաքականությամբ, հանրային ընկալումներում առկա կարծրատիպերի հաղթահարմամբ: Կանանց քաղաքական առաջխաղացմանը խոչընդոտում են ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև մշակութային և ոչ ֆորմալ գործոններ: Կուսակցություններում հաճախ բացակայում են կանանց առաջընթացի աջակցման մեխանիզմներ, իսկ հովանավորչական համակարգերը հակված են աջակցել տղամարդ թեկնածուներին:

Այս իրավիճակը հաստատում է կանանց քաղաքական կարիերայի հնարավորությունների խորքային ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով քաղաքականություն մուտք գործելու կանանց շարժառիթները, նրանց անձնական փորձառությունները և համակարգային խոչընդոտները:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակն էր բացահայտել ՀՀ Ազգային ժողովում և ՏԻՄ-երում ներգրավված կանանց ընկալումները քաղաքականության մեջ իրենց առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոնների, ինչպես նաև իրենց հետագա քաղաքական կարիերայի հնարավորությունների մասին:

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդներով՝ ներառելով մասնագիտական գրականության և բաց աղբյուրների բովանդակային վերլուծություն, խորքային հարցազրույցներ և փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկում: Տեղեկատվությունը հավաքագրվել է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աղբյուրներից՝ ընդգրկելով թեմային առնչվող իրավական փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ, կուսակցությունների ծրագրերի վերլուծություններ, մեդիա և սոցիալական ցանցերի բովանդակության մշտադիտարկումների արդյունքներ:

Հիմնական գործիք են հանդիսացել 40 խորքային հարցազրույցները, որոնցից 15-ը՝ Ազգային ժողովի կին պատգամավորների և 25-ը՝ ՏԻՄ-երում ներգրավված կանանց հետ: Ընտրանքը ձևավորվել է մի շարք չափանիշներով՝ կուսակցական պատկանելիություն, տարիք, ղեկավար դիրք, քաղաքական փորձ, ազգային փոքրամասնությանը պատկանելիություն, հաշմանդամություն, ինչպես նաև հանրային ակտիվություն:

Աժ պատգամավորների ընտրանքում ընդգրկվել են խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի ներկայացուցիչներ՝ իշխանություն և ընդդիմություն ներկայացնող խմբակցություններում և Աժ տարբեր մշտական հանձնաժողովներում ներգրավվածությամբ: Ընտրանքի 27%-ը անկուսակցական է: Տարիքային կազմի առումով ընտրանքի 47%-ը մինչև 40 տարեկան է: Աժ ղեկավար պաշտոններից ընտրանքում ներկայացված

6 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն <https://www.mtad.am/>
7 ընտրական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին (հոդված 76) . Ընդունվել է 05.12.2024 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9566&lang=arm>

են մշտական հանձնաժողովների կին ղեկավարներ: ներկայացված են նաև ազգային փոքրամասնությունների և հաշմանդամություն ունեցող կանայք:

ՏԻՄ ընտրանքում ընդգրկվել են 25 կին ավագանու անդամներ՝ ընտրված ըստ մարզային բաշխվածության, կուսակցական պատկանելիության, տարիքային խմբերի և ղեկավար դիրքի: Հաշվի է առնվել նաև քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը որպես լրացուցիչ գործոն: Հետազոտության ընտրանքում ընդգրկվել են Հայաստանի 10 մարզերից 7-ում գործող 14 համայնքների կին ավագանիներ և համայնքի ղեկավարներ, ինչպես նաև Երևանի ավագանու անդամներ: Ընտրանքում ներկայացված են նաև համայնքի ղեկավարի, տեղակալի և խմբակցության ղեկավարի պաշտոններ զբաղեցնող կանայք: Ընտրանքի 25 կանանցից 17-ը կուսակցական են, որոնք 12 քաղաքական ուժ են ներկայացնում, իսկ 8-ը՝ անկուսակցական: Տարիքային առումով՝ ընտրանքի 52%-ը մինչև 44 տարեկան է, 32%-ը՝ 45–59 տարեկան, իսկ 16%-ը՝ 60-ից բարձր տարիքային խմբում է:

Հետազոտության մեթոդաբանության կարևոր բաղադրիչ է **փորձագետների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկումը**, որի նպատակն էր հաստատել հետազոտության արդյունքներն ու դրանց կիրառելիությունը: Քննարկմանը մասնակցել են 10 մասնագետ՝ ներառյալ հետազոտողներ և լրագրող-փորձագետներ, որոնք անդրադարձել են կանանց քաղաքական կարիերայի խոչընդոտներին, հանրային ընկալումներին, համերաշխության դրսևորումներին և առաջընթացի խթանման ուղիներին: Ֆոկուս խմբի արդյունքները հաստատել են հետազոտության արդիականությունն ու դրա համադրելիությունը նախկին ուսումնասիրությունների և մասնագիտական փորձի հետ:

Հետազոտության արդյունքներ

1. Կանանց քաղաքական կարիերայի շարժառիթները

Հետազոտության շրջանակում հարցված կանանց քաղաքական ներգրավվածության շարժառիթները բազմաշերտ են՝ ներառելով գաղափարական, անձնական, մասնագիտական և հանրային բնույթի դրդապատճառներ: Քաղաքականություն մուտք գործելու որոշումը հաճախ պայմանավորված է ինչպես ռացիոնալ նպատակներով (օրինակ՝ որոշումների կայացման գործընթացում ներգրավվելը), այնպես էլ հուզական մղումներով՝ հայրենասիրություն, բողոքի զգացում, փոփոխությունների ձգտում:

Հարցված կանանց շարժառիթները մեծապես պայմանավորված են նրանց քաղաքականություն մուտք գործելու սցենարներով, որոնցից առավել տարածված են՝ քաղաքացիական ակտիվությունից, մասնագիտությունից (մանկավարժության, լրագրության, առողջապահության, բիզնեսի և այլ ոլորտներից), կուսակցության երիտասարդական թևից, համայնքապետարանում աշխատանքից դեպի քաղաքականություն սցենարները: ՏԻՄ համակարգում ներգրավված կանայք հաճախ ունեն մանկավարժական կամ համայնքային ծառայության փորձ և նրանց առաջադրման գործընթացում կարևոր դեր է խաղում համայնքում ճանաչելիությունը, որն էլ արժեքավոր ռեսուրս է դիտարկվում կուսակցությունների կողմից: Եթե ՏԻՄ-երում ընդգրկված կանանց մեծ մասը իրենց շարժառիթները բնութագրում է որպես ծառայություն համայնքին՝ նպատակ ունենալով բարելավել իրենց համայնքի կյանքը, լուծել համայնքային նշանակության կոնկրետ խնդիրներ, ապա ԱԺ-ում ներգրավված կանանց կողմից ներկայացվող շարժառիթները հիմնականում երկրի

իրավիճակի բարելավման և գլոբալ արժեքների հետ են կապված:

Քաղաքական ներգրավվածությունը հաճախ խթանվում է կոնկրետ իրադարձություններով՝ 2018 թ. հեղափոխություն, 2020 թ. պատերազմ, հետպատերազմյան ճգնաժամ, տեղահանություններ: Քվոտայի կիրառումը և համամասնական ընտրակարգին անցումը նույնպես խթանել են կանանց ընդգրկումը կուսակցությունների ցուցակներում:

Հարցված կանանց քաղաքականություն մուտք գործելու որոշման հարցում կարևոր դեր են խաղացել շրջապատի, կուսակցության առաջնորդների կամ ընտանիքի աջակցությունը, ինչպես նաև ընտանեկան քաղաքական ավանդույթները: Աժ որոշ պատգամավորների դեպքում նկատվում է տեղական իշխանությունից դեպի խորհրդարան անցնելու սցենարը, որտեղ կուսակցության առաջնորդի ազդեցությունը դառնում է կարիերային առաջխաղացման հիմնական գործոն:

Քաղաքականություն մուտք գործելու գաղափարախոսական հիմքերը ներկայացնելիս կանայք ոչ բոլորն են օգտագործում դասական տերմինաբանությունը (աջ, ձախ, կենտրոնամետ կամ ազատական, պահպանողական և այլն), շատերը նախընտրում են խոսել իրենց անձնական արժեհամակարգի տեսանկյունից՝ ընդգծելով ժողովրդավարությունը, հայրենասիրությունը, սոցիալական արդարությունը և կայունությունը: Գենդերային հավասարության գաղափարը գրեթե բացակայում է թե՛ կուսակցությունների ծրագրերում, թե՛ կանանց պատասխաններում, բացառությամբ եզակի դեպքերի, երբ այն կապվում է սոցիալիստական կամ մարդու իրավունքների արժեքների հետ:

Թեև գաղափարախոսությունը միշտ չէ, որ որոշիչ դեր է խաղում այս կամ այն կուսակցությանը անդամակցելու հարցում, այն հաճախ դառնում է կուսակցությունից հեռանալու կամ մանդատը վայր դնելու պատճառ: Բոլոր դեպքերում, Հայաստանում քաղաքական գաղափարախոսությունների կիրառման հարցը ընդհանուր առմամբ պահանջում է խորքային ուսումնասիրություններ:

2. Առաջնորդական հմտություններ, ինքնաբնութագրում և ռազմավարություն

Հարցված կանայք առանձնացրել են մի շարք անձնական հատկանիշներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքական առաջընթացի համար՝ հաստատականություն և նպատակասլացություն, սկզբունքայնություն, ազնվություն, բարձր պատասխանատվություն, սոցիալական զգայունություն, համբերություն և դիմացկունություն, կազմակերպչական կարողություններ և հաղորդակցման հմտություններ: Նշված հմտությունները, թեև հաճախ դիտարկվում են որպես «փափուկ», իրականում կարևոր են քաղաքական գործընթացներում կայուն և ներառական մասնակցություն ապահովելու համար:

Միջազգային և տեղական հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք առաջնորդության բազմաթիվ հմտություններում գերազանցում են տղամարդկանց՝ հատկապես նախաձեռնողականությամբ, ճկունությամբ, ազնվությամբ և հաղորդակցման ոլորտում: Սակայն նրանց առաջընթացին հաճախ խոչընդոտում է ոչ թե կարողությունների պակասը, այլ՝ հնարավորությունների բացակայությունը:

իրենց քաղաքական ինքնությունը հարցված կանայք կառուցում են ոչ թե մրցակցային, այլ համագործակցային և արժեքային հենքի վրա: Նրանք իրենց բնութագրում են որպես սկզբունքային, թիմային, ռազմավարական մտածողությամբ և հանրային խնդիրների հանդեպ զգայուն գործիչներ: Իսկ ռազմավարությունը, իրենց իսկ ներկայացնամբ, հիմնված է հանրությանը լսելու, փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու, համայնքին ներգրավման և վստահության ձևավորման վրա: Այս մոտեցումը համընկնում է մի շարք տեղական և միջազգային հետազոտությունների գնահատականների հետ⁸, ըստ որոնց կանանց քաղաքական առաջնորդության մոդելը տարբերվում է ավանդական, հիերարխիկ մոտեցումներից՝ առաջարկելով ավելի ներառական, արժեքային և հանրության վրա կենտրոնացած քաղաքականություն:

3. Քաղաքականության մեջ հաջողության ընկալում

Հարցված կանայք քաղաքականության մեջ հաջողությունը չեն սահմանափակում միայն պաշտոնեական առաջիադացմամբ: Նրանց ընկալմամբ՝ իսկական հաջողությունը գալիս է այն ժամանակ, երբ կին գործիչը կարողանում է ազդել քաղաքական օրակարգի վրա, պահպանել սկզբունքայնությունը և նպաստել հանրային փոփոխություններին: Նրանց ընկալմամբ՝ հաջողակ կինն այն է, որն արժանանում է հանրային վստահության, դառնում է արժեքային առաջնորդ և իր գործունեությամբ նպաստում է սոցիալական բարեփոխումներին՝ լինի դա համայնքային խնդիրների լուծում, կանանց իրավունքների պաշտպանություն, թե կրթական համակարգի զարգացում:

Այս հաջողությանը հասնելու ճանապարհին կարևոր դեր են խաղում կրթությունը, մասնագիտական փորձը, վստահելի ցանցերը և մենթորությունը: Սակայն հարցված կանայք ընդգծում են, որ հաջողությունը միայն անհատական ջանքերի արդյունք չէ: Այն պահանջում է թիմային աշխատանք, փոխաջակցություն և կանանց միջև համերաշխություն:

Համերաշխության գաղափարը քաղաքականության մեջ դիտարկվում է որպես ռազմավարական ռեսուրս: Թեև այն միշտ չէ, որ փաստագրված է, կան բազմաթիվ օրինակներ՝ հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակում, երբ կին գործիչները ձևավորում են փոխաջակցող խմբեր, կիսվում են փորձով և հանդես են գալիս համատեղ նախաձեռնություններով: Համերաշխությունը ոչ միայն քաղաքական գործիք է, այլ նաև մշակութային արժեք, որը հակադրվում է մրցակցային և հիերարխիկ մոդելներին: Կանայք առաջարկում են տարբեր ձևաչափեր՝ համերաշխությունը գործնական դարձնելու համար՝ մենթորություն, օրենսդրական համագործակցություն, համայնքային ցանցերի ձևավորում:

Հետազոտությունը նաև անդրադառնում է այն հարցին, թե ինչպես են կանայք ընկալում օրինակելի կին քաղաքական գործիչներին, ինչպիսի դերային մոդելներ ունեն: Հարցվածները օրինակելի են համարում ոչ միայն միջազգային ճանաչում ունեցող կանանց, այլ նաև իրենց գործընկերներին և հանրային ոլորտի այլ ներկայացուցիչներին: Դա վկայում է, որ օրինակելիության ընկալումը հաճախ ձևավորվում է անձնական փորձի, միջավայրի և մշակութային ազդեցությունների հիման վրա:

8 Gender and evaluations of leadership behaviors: A meta-analytic review of 50 years of research. The Leadership Quarterly <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S1048984324000511>
«Harvard Business Review» research: Women Are Better Leaders During a Crisis, December 30, 2020 <https://hbr.org/2020/12/research-women-are-better-leaders-during-a-crisis>

Օրինակելի կին քաղաքական գործիչը, ըստ հարցվածների, պետք է գործի ազնիվ, հետևողական և հանրային շահի հիման վրա: Նա պետք է կարողանա համադրել մասնագիտական կարողությունները, հանրային նվիրվածությունը և դիմակայել համակարգային խոչընդոտներին՝ պահպանելով սկզբունքայնությունը: Օրինակելիության ընկալումը սերտորեն կապված է հարցված կանանց քաղաքական հաջողության պատկերացման հետ՝ ընդգծելով հանրային ազդեցությունը, արժեքային առաջնորդությունը և սոցիալական ներգրավվածությունը:

4. Կանանց քաղաքական առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոններ

Հետազոտությունը վկայում է, որ Հայաստանում կանայք քաղաքականություն են մուտք գործում բարդ միջավայրում, որտեղ հաջողության հասնելու համար անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական հմտություններ, այլ նաև դիմացկունություն՝ հաղթահարելու մշակութային կարծրատիպերն ու կողմնակալությունը, ընտանեկան պարտականություններով պայմանավորված կրկնակի ծանրաբեռվածությունը և համակարգային խոչընդոտները:

Հարցված կանանց ներկայացմամբ՝ կանանց առաջընթացին նպաստում են կրթությունը, մասնագիտական զարգացումը, աջակցող ցանցերը, մեդիայում տեսանելիությունը, միջազգային ծրագրերը, քաղաքացիական ներգրավվածությունը և գենդերային քվոտաները: Սակայն խոչընդոտները՝ ֆինանսական սահմանափակումները, կուսակցական փակ համակարգերը, կրկնակի ծանրաբեռնվածությունը, սոցիալական ցանցերում և մեդիայում թիրախավորումը շարունակում են սահմանափակել կանանց լիարժեք ներգրավվածությունը և առաջընթացը:

Կանայք քաղաքականության մեջ ձեռք են բերում արժեքավոր փորձառություն՝ համայնքային խնդիրների լուծման, հանրային ներգրավվածության և նոր հմտությունների զարգացման միջոցով: Սակայն նրանք հաճախ ստիպված են կրկնակի ապացուցել իրենց արժանիությունը և բախվում են՝ կարծրատիպերով պայմանավորված «երկակի ստանդարտների» և խտրական վերաբերմունքի:

Գենդերային կարծրատիպերը՝ թե՛ տեղական, թե՛ միջազգային մակարդակներում, դիտարկվում են որպես կառուցվածքային խոչընդոտներ, որոնք ազդում են կանանց ինքնավստահության և քաղաքական մասնակցության վրա: Կանայք հաճախ թիրախավորվում են սեռի, արտաքինի և ընտանեկան կարգավիճակի հիմքով: Հարցված կին քաղաքական գործիչների վերաբերմունքը կարծրատիպերին տարբեր է. մի մասը պայքարում է դրանց դեմ, մյուսները ընդունում են դրանց առկայությունը, իսկ որոշ կանայք նույնիսկ կիսում են հանրային կարծրատիպերը: Կանայք գործում են մի միջավայրում, որտեղ գերիշխում են տղամարդկային նորմերը, ինչը սահմանափակում է նրանց ինքնարտահայտման հնարավորությունները:

Ընտանիքը կարող է լինել թե՛ աջակցող, թե՛ արգելակող ուժ: Աջակցող ընտանիքը նպաստում է կնոջ կայացմանը, իսկ արգելողը՝ սահմանափակում նրա ընտրությունը: Քաղաքականություն մուտք գործելուց հետո կանայք հաճախ բախվում են նաև իրենց ընտանիքների թիրախավորման խնդրին, ինչը կարող է հանգեցնել կոնֆլիկտների և նրանց գործունեության սահմանափակման:

Գենդերային քվոտաները գնահատվում են հարցվածների կողմից որպես

կարևոր և արդյունավետ միջոց՝ կանանց քաղաքական մասնակցությունն ապահովելու համար: Չնայած որոշ բացասական հետևանքներին՝ հարցված կանայք դիտարկում են դրանք որպես անհրաժեշտ քայլ՝ սեռային հավասարության և քաղաքականության մեջ կանանց լիարժեք ներգրավվածության ուղղությամբ: Քվոտաները նաև նպաստել են կանանց համախմբմանը և իրավունքների պաշտպանության օրակարգի առաջնորդմանը:

Ընդհանուր առմամբ, կանայք ունեն մեծ ներուժ, սակայն դրա իրացմանը խոչընդոտող գործոնները հաղթահարելու համար անհրաժեշտ է համակարգային աջակցություն՝ կրթական, ֆինանսական, մշակութային և քաղաքական մակարդակներում:

5. Հանրային կապերը որպես քաղաքական գործունեության հիմնական գրավական

Հետազոտության շրջանակում ներկայացվում է, թե ինչպես են ընտրողների, քաղաքացիական հասարակության, մամուլի և տեխնոլոգիաների հետ կապերը ազդում Հայաստանի կին քաղաքական գործիչների առաջընթացի վրա:

Ընտրողների հետ շփումները հարցված կանայք բնութագրում են որպես շատ ակտիվ՝ օգտագործելով այդ նպատակով թե՛ անձնական հանդիպումները, թե՛ սոցիալական ցանցերում իրենց անձնական և պաշտոնական էջերը: Փոքր համայնքներում գերակշռում է անմիջական շփումը, իսկ մեծ համայնքներում՝ թվային հարթակները: Շփումը ներառում է նաև էմոցիոնալ պատասխանատվություն, սակայն խոչընդոտվում է կրկնակի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված ժամանակի սղությամբ, հանրային վստահության խնդիրներով և հատկապես մարզային համայնքներում ֆինանսական ռեսուրսների և ենթակառուցվածքների պակասով:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը կարևորվում է հատկապես իրավապաշտպան փորձ ունեցող կանանց կողմից: Համագործակցության շրջանակում հարցված կանայք հեղինակել են օրենսդրական նախաձեռնություններ՝ ուղղված կանանց իրավունքների պաշտպանությանը, շատերը ներգրավված են եղել մի շարք կանանց առաջնորդության ծրագրերում:

Մամուլի հետ հարաբերությունները միանշանակ չեն: Ոմանք ակտիվ են և կարողանում են ճիշտ կառուցել իրենց հարաբերությունները լրատվական դաշտի հետ, մյուսները՝ խիստ զգուշավոր՝ կապված կողմնակալ լուսաբանման և գենդերային կարծրատիպերի վերարտադրման հետ: Կանայք հաճախ նախընտրում են տեղեկատվությունը տարածել սոցիալական մեդիայում իրենց էջերի միջոցով՝ վերահսկելով բովանդակությունը:

Տեխնոլոգիաները դիտարկվում են որպես առաջընթացի խթան, սակայն ուղեկցվում են մարտահրավերներով՝ սեքսիզմ, ատելության խոսք, անձնական և ընտանիքի անդամների թիրախավորում: Սոցցանցերում ակտիվությունը կարող է լինել և՛ հնարավորություն, և՛ սպառնալիք՝ կախված օգտագործման ձևից և կիբեռանվտանգության կանոնների մասին իրազեկվածությունից:

Ընդհանուր առմամբ, կանայք ունեն մեծ ներուժ, սակայն դրա իրացման համար անհրաժեշտ է վստահության մթնոլորտ, մեդիագրագիտություն և պաշտպանական մեխանիզմներ՝ թվային միջավայրում անվտանգ և արդյունավետ գործելու համար:

6. Կուսակցությունների դերը կանանց առաջընթացում

Հետազոտությունը վերլուծում է կանանց դերակատարումը կուսակցություններում, նրանց ազդեցությունը որոշումների կայացման վրա և առաջխաղացման համար հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ պատկերացումները: Չնայած կուսակցություններում կանանց ներգրավվածության աճին՝ նրանց ներկայացվածությունը ղեկավար մարմիններում շարունակում է ցածր մնալ: Հետազոտությունները փաստում են⁹, որ օրենքով նախատեսված խթանող մեխանիզմները, որոնք կապում են կանանց ներկայացվածության ցուցանիշները կուսակցությունների տարածքային և ղեկավար մարմիններում պետական նպատակային ֆինանսավորում ստանալու հետ, դեռևս չեն ապահովել ցանկալի արդյունքներ:

Հարցված կանանց մեծ մասը կուսակցության անդամ է: Նրանց թվում կան կուսակցությունում կամ խմբակցություններում ղեկավար կամ որոշում կայացնող պաշտոններ զբաղեցնող կանայք, մյուսները մասնակցում են կարծիք հայտնելով, որը ոչ բոլոր դեպքերում է, որ լսելի է որոշումների վրա ազդեցության առումով: Կանանց մի մասը բարձր է գնահատում կուսակցությունում կամ խմբակցությունում առկա ժողովրդավարական մշակույթը, մյուսները նշում են, որ որոշումները կախված են ղեկավարության դիրքորոշումից:

Կանայք հաճախ ազդեցություն են ունենում իրենց անձնական որակների՝ կառուցողականության, ընկերականության և լսելու ունակության շնորհիվ: Նրանք հիմնականում ընտրում են համագործակցային մոտեցում, ինչը կարող է լինել և՛ առավելություն, և՛ սահմանափակում քաղաքական պայքարում:

Անկուսակցական կանայք նշում են, որ կուսակցական չլինելը սահմանափակում է իրենց ազդեցությունը, սակայն երբեմն դա հնարավորություն է տալիս ավելի ազատ կարծիք արտահայտելու: Նրանց ազդեցությունը խմբակցությունների որոշումների վրա միանշանակ չէ և կախված է կոնկրետ իրավիճակից ու խմբակցության քաղաքական մշակույթից:

Կուսակցություններում տիրող մշակույթը հաճախ դիտարկվում է որպես «հայրիշխանական», որտեղ կանայք ընկալվում են որպես աջակցողներ, ոչ թե որոշում կայացնողներ: Անկուսակցական կանայք իրենց կուսակցական չլինելը պայմանավորում են հենց այդ փակ և հիերարխիկ մշակույթով:

Հետազոտությունը նաև ընդգծում է, որ կուսակցությունների ներսում սահմանված ներքին գենդերային քվոտաները, հատկապես իշխող կուսակցության դեպքում, կարող են նպաստել կանանց ներկայացվածության ընդլայնմանը: Այս մեխանիզմները դիտարկվում են որպես պատասխանատու քայլ պետական գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ:

Հարցված կանայք առաջարկում են մի շարք կոնկրետ քայլեր՝ ներառյալ մենթորության և վերապատրաստման ծրագրերի ներդրում, թափանցիկ առաջխաղացման մեխանիզմներ, գենդերային ռազմավարության մշակում և ռեսուրսների հասանելիության հավասարություն: Նրանք պահանջ են ներկայացնում ոչ թե խորհրդանշական, այլ իրական մասնակցության՝ հիմնված արժեքային առաջնորդության և ներառական քաղաքական մշակույթի վրա:

9 Հայաստանի կուսակցություններում գենդերային հավասարության և կանանց առաջընթացի ապահովման խնդիրներ. իրավիճակի գնահատման զեկույց. ՄԱԶԾ, 2024:

7. Ապագա կարիերայի տեսլականը

Հետազոտությունը ներկայացնում է նաև հարցված կանանց պատկերացումները իրենց հետագա քաղաքական կարիերայի վերաբերյալ՝ բացահայտելով միջարք մոտեցումներ և կապելով այն քաղաքականություն մուտք գործելու կանանց շարժառիթների հետ:

Շատ կանայք քաղաքականությունը դիտարկում են ոչ թե որպես կարիերա, այլ որպես արժեքային ընտրություն և հանրային ծառայություն: Նրանք առաջնորդվում են սոցիալական պատասխանատվությամբ՝ նպատակ ունենալով լուծել հասարակական խնդիրներ, հետևապես իրենց հետագա կարիերան կապվում է այդ խնդիրների լուծման հետ:

Մյուսները ցուցաբերում են անորոշություն՝ պայմանավորված քաղաքական իրավիճակով, ընտանեկան հանգամանքներով կամ կուսակցության դիրքորոշմամբ: Այս խմբի կանայք հաճախ դժվարանում են կողմնորոշվել, հատկապես եթե քաղաքականություն են մուտք գործել արտաքին ազդակներով:

Համայնքային մակարդակում ներգրավված կանայք նախընտրում են տեղական խնդիրների լուծումը՝ առանց ձգտելու պաշտոնի բարձրացման կամ ազգային մակարդակում ներկայացված լինելու: Նրանց համար քաղաքականությունը ավելի իմաստալից է տեղական մակարդակում, երբ կապված է համայնքի հետ: Որոշ կանայք իրենց ապագան կապում են կոնկրետ ոլորտների հետ՝ կրթություն, սոցիալական քաղաքականություն, կանանց իրավունքներ: Նրանք քաղաքականությունը դիտարկում են որպես գործիք՝ ոլորտային բարեփոխումներ իրականացնելու համար, սակայն չեն նշում, որ ձգտում են դա անել գործադիր իշխանությունում ղեկավար պաշտոն գրադեցնելու միջոցով:

Կանայք, որոնք քաղաքականությունը ընկալում են որպես իրենց ինքնության մաս, պատրաստ են շարունակել պայքարը՝ անկախ պաշտոնից: Նրանք կարևորում են քաղաքական խոսքի և հանրային դերակատարման շարունակականությունը:

Միաժամանակ, որոշ կանայք կտրուկ մերժում են քաղաքական կարիերայի շարունակությունը՝ հիասթափված լինելով քաղաքական միջավայրից, ատելության խոսքից և գործընթացների աղճատվածությունից: Ոմանք նշում են, որ իրենց նպատակներն արդեն իրականացվել են, կամ որ ժամանակն է ճանապարհ բացելու երիտասարդների համար:

Ընդհանուր առմամբ, կանանց քաղաքական ապագայի վերաբերյալ պատկերացումները բազմազան են՝ տատանվելով քաղաքական պայքարում գաղափարական ներգրավվածությունից և քաղաքական դաշտում իրենց գործունեությունը շարունակելու պատրաստակամությունից մինչև հիասթափություն և հրաժարում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով, հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ

- Հարցված կանայք նշում են, որ մուտք են գործում քաղաքականություն

ոչ թե անձնական շահի, այլ հանրային ծառայության, գաղափարական համոզմունքների և համայնքային պատասխանատվության հիմքով: Դրա հետ մեկտեղ գենդերային հավասարության հարցը դեռևս քիչ է արտացոլված նրանց մոտիվացիայում:

- Հարցված կանանց կողմից ներկայացվող առաջնորդության մոդելը հիմնված է համագործակցության, արժեքայնության և հանրային զգայունության վրա՝ հակադրվելով մրցակցային և հիերարխիկ մոտեցումներին:
- Հաջողությունը հարցված կանայք կապում են հանրային ազդեցության, սկզբունքայնության և սոցիալական փոփոխությունների վրա ունեցած ազդեցության հետ՝ ընդգծելով համերաշխության և թիմային աշխատանքի կարևորությունը:
- Չնայած կանանց մեծ ներուժին՝ նրանց առաջընթացը սահմանափակվում է համակարգային խոչընդոտներով, կարծրատիպերով և ընտանեկան պարտականությունների բեռով, ինչը պահանջում է բազմաբնույթ և համակարգային աջակցություն:
- Ընտրողների, քաղաքացիական հասարակության, մեդիայի և տեխնոլոգիաների հետ արդյունավետ կապը կարևոր նախապայման է կանանց քաղաքական հաջողության համար, սակայն թվային միջավայրում առկա ռիսկերը պահանջում են պաշտպանական մեխանիզմներ:
- Կուսակցությունները հաճախ գործում են փակ և հայրիշխանական մշակույթի շրջանակում, ինչը սահմանափակում է կանանց իրական ներգրավվածությունը և նրանց քաղաքական առաջխաղացումը, սակայն ներքին քվոտաների և գենդերազգային ռազմավարությունների միջոցով հնարավոր է ապահովել հնարավորությունների հավասարություն:
- Հարցված կանանց պատկերացումները իրենց քաղաքական ապագայի մասին բազմազան են՝ տատանվելով շարունակական ներգրավվածությունից մինչև հիասթափություն և հրաժարում, ինչը վկայում է միջավայրի, իրավիճակի, արժեքների և հնարավորությունների վրա հիմնված ընտրության մասին:

Հետազոտության հիման վրա կատարված առաջարկությունները հասցեագրված են բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ կին քաղաքական գործիչներին, կուսակցություններին, ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Կառավարությանը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և լրատվական դաշտին, ինչպես նաև Հայաստանում կանանց զորացմանն ուղղված ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպություններին:

Առաջարկությունները միտված են հետազոտության ընթացքում բացահայտված խնդիրների լուծմանը և ենթադրում են կանանց քաղաքական առաջընթացին աջակցող գործողություններ հետևյալ ուղղություններով.

- **Ինստիտուցիոնալ և օրենսդրական աջակցություն:** Կանանց քաղաքական առաջընթացի խթանման համար անհրաժեշտ է մշտադիտարկել նրանց առաջընթացի միտումները առաջիկա տեղական և խորհրդարանական ընտրական գործընթացներում և դրանց արդյունքում գնահատել գենդերային քվոտաների և

կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորման մեխանիզմների արդյունավետությունը կանանց մասնակցության և առաջընթացի տեսանկյունից, բարելավել կուսակցությունների ներքին քաղաքականությունը ու ընթացակարգերը թափանցիկության և գենդերային զգայունության ուղղությամբ, բարձրացնել կուսակցությունների և Ազգային ժողովի պատասխանատվությունը կանանց քաղաքական առաջընթացն ապահովելու և պետական գենդերային քաղաքականության ռազմավարությամբ նախանշված նպատակներն իրագործելու ուղղությամբ, ապահովել օրենսդրական ու ինստիտուցիոնալ աջակցություն՝ քաղաքականության ազգային և տեղական մակարդակում կանանց ու տղամարդկանց առաջընթացի համար հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով:

- **Կարողությունների և հմտությունների զարգացում, կրթական ծրագրեր:** Կանանց քաղաքական առաջնորդության զարգացման համար անհրաժեշտ է ներդնել քաղաքական հաղորդակցության, բանակցային, լրատվամիջոցների հետ շփման, ժամանակի կառավարման, սթրեսի հաղթահարման հմտությունների կատարելագործման հատուկ դասընթացներ, զարգացնել թվային կարողությունները, բարձրացնել կիբեռանվտանգության կանոնների մասին իրազեկվածությունը, ընդլայնել մենթորական ցանցերը, ապահովել միջազգային ծրագրերի շարունակականությունը և ստեղծել տեղեկատվական հարթակ՝ կանանց քաղաքական առաջխաղացմանը և ցանցային համագործակցությանը աջակցելու նպատակով:
- **Հանրային աջակցություն և կանանց համերաշխություն:** Կանանց քաղաքական մասնակցությունը և առաջխաղացումը խթանելու համար անհրաժեշտ է ձևավորել համերաշխության և համագործակցության հարթակներ, զարգացնել մեդիայում կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ դրական պատկերացումները, իրականացնել կանանց քաղաքական առաջընթացը խոչընդոտող կարծրատիպերի դեմ ուղղված հանրային քարոզարշավներ, օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով բարելավել ընտանիք-աշխատանք հավասարակշռությունը և ապահովել կանանց քաղաքական ակտիվության տեսանելիությունը՝ հիմնված նրանց գործունեության վերաբերյալ տվյալների մշտադիտարկման վրա:
- **Տղամարդկանց որպես դաշնակիցների ներգրավում:** Կանանց քաղաքական առաջընթացը պահանջում է տղամարդ գործընկերների ակտիվ ներգրավում՝ որպես գենդերային հավասարությանը և արդարությանը աջակցող դաշնակիցներ: Համագործակցային և ներառական քաղաքական մշակույթը հնարավոր է խթանել՝ ընդլայնելով կանանց ու տղամարդկանց կողմից տարբեր ոլորտներում օրենսդրական նախաձեռնությունների համատեղ մշակման պրակտիկան, ապահովելով կանանց ու տղամարդկանց համատեղ մասնակցությունը հանրային շահերի ու մարդու իրավունքների պաշտպանության հանրային քարոզարշավներին, կանանց կողմից նախաձեռնվող ակցիաներին և տարբեր այլ միջոցառումներին և ծրագրերին:

Թեմայի արդիականությունը

Վերջին տարիներին Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության ընդլայնման ուղղությամբ՝ մասնավորապես խորհրդարանի և տեղական ընտրություններում գենդերային քվոտաների կիրառման շնորհիվ: Սակայն ձեռքբերումների հետ մեկտեղ կանայք շարունակում են էապես թերի ներկայացված լինել բարձրագույն ղեկավար պաշտոններում և որոշումների կայացման մակարդակում, տարածքային կառավարման համակարգում և կուսակցությունների ղեկավար կազմում: Ընտրովի մարմիններում կանանց ներկայացվածության և քաղաքական որոշումների վրա նրանց իրական ազդեցության միջև այս տարանջատումը հաստատվում է նաև գլոբալ մակարդակով, այդ թվում հեղինակավոր միջազգային կազմակերպությունների՝ ԵԱՀԿ¹⁰-ի և ՄԱԿ-ի հետազոտություններով¹¹, ըստ որոնց միայն քվոտաները բավարար չեն կառավարման ոլորտում գենդերային հավասարության իրական ապահովման համար:

Այնուհանդերձ, Հայաստանի իրավական դաշտը ամուր հիմք է ապահովում գենդերային հավասարության խթանման համար: Հայաստանը միացել է մի շարք կարևոր միջազգային փաստաթղթերի և իրավական գործիքների, որոնք ուղղված են գենդերային հավասարության խթանմանը և կանանց իրավունքների պաշտպանությանը:

Նախևառաջ, Հայաստանը 1993 թվականին վավերացրել է կանանց իրավունքների պաշտպանության հիմնարար միջազգային փաստաթուղթը՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան¹², ինչպես նաև այդ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը¹³: Բացի այդ, Հայաստանը պարտավորվել է իրականացնել նաև Պեկինի հռչակագրի և գործողությունների հարթակի դրույթները¹⁴, որոնք ընդունվել են 1995 թվականին՝ որպես կանանց զորացման և գենդերային հավասարության ապահովման գլոբալ ռազմավարություն: ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների¹⁵ շրջանակում Հայաստանը ակտիվորեն ներգրավված է 2030 օրակարգի իրականացման գործընթացում, մասնավորապես, գենդերային հավասարությանը և կանանց ու աղջիկների զորացմանը վերաբերող նպատակ 5-ի ուղղությամբ: Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի¹⁶ և ԵԱՀԿ-ի¹⁷ շրջանակում Հայաստանը նույնպես ստանձնել է մի շարք հանձնառություններ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:

Նշված փաստաթղթերի և գործընթացների միասնությունը ձևավորում է այն միջազգային իրավական և քաղաքական շրջանակը, որի հիման վրա Հայաստանը մշակում և իրականացնում է իր ազգային օրենսդրությունը:

10 Gender-responsive Governance, OSCE Office for Democratic Institutions and Human Rights, 2024; <https://www.osce.org/odihr/575958>

11 Gender Equality in Public Administration, UNDP; University of Pittsburgh, 2021 <https://digitallibrary.un.org/record/3931368?v=pdf>

12 «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա <https://www.arlis.am/hy/acts/60505>

13 «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրություն <https://www.arlis.am/hy/acts/31426>

14 Պեկինի հռչակագրի և գործողությունների հարթակ <https://www.unwomen.org/en/digital-library/publications/2015/01/beijing-declaration>

15 Հայաստանում ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների իրականացում <https://armenia.un.org/hy/sdgs>

16 Gender Equality <https://www.coe.int/en/web/genderequality>

17 Gender Equality <https://www.osce.org/gender-equality>

Այսպես, 2013 թ. ընդունվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը¹⁸, որը հաստատում է գենդերային հավասարության սկզբունքի ապահովումը հանրային կյանքի բոլոր ոլորտներում, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից և հավասար հնարավորությունների ապահովումը: 2017 թ. ընդունվեց «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքը¹⁹, որով ամրագրվեցին գենդերային բռնության դեմ պաշտպանության և ինստիտուցիոնալ հաշվետվողականության ապահովման մեխանիզմները:

2025 թվականին ՀՀ կառավարությունն ընդունել է նաև «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը»²⁰: Ռազմավարությունը սահմանում է վեց գերակայություն, որոնք ուղղված են նշված ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների ու հնարավորությունների իրացման համար բարենպաստ և դրական միջավայրի ստեղծմանը՝ առաջնորդվելով նաև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններով: Գերակայություններից առաջինը վերաբերում է կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարմանը, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործմանը, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովմանը և ընդլայնմանը: Գերակայության շրջանակում մի շարք նպատակներ են դրված, որոնք միտված են քաղաքական և կառավարման ոլորտներում կանանց առաջխաղացմանն ուղղված ազգային կառուցակարգերի վերանայմանը և կատարելագործմանը, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների և ՏԻՄ համակարգում կառավարմանուորոշումների կայացման մակարդակներում, այդ թվում՝ ընտրովի և նշանակովի ղեկավար պաշտոններում, կանանց ներկայացվածության և մասնակցության խթանմանը:

Հայաստանում կանանց առջև ծառայած խոչընդոտները ոչ միայն ինստիտուցիոնալ են, այլև խորապես արմատավորված են ոչ ֆորմալ նորմերում և քաղաքական մշակույթում: Կուսակցությունները թեև պաշտոնապես հանձնառու են գենդերային հավասարության ներառմանը, հաճախ չունեն կանանց առաջխաղացումը ապահովելու ներքին մեխանիզմներ: Ոչ ֆորմալ ցանցերը և հովանավորչական համակարգերը հակված են աջակցելու տղամարդ թեկնածուներին, իսկ կանայք հաճախ բախվում են դիմադրության՝ վերընտրվելու կամ կուսակցական կառույցներում առաջխաղացման փորձեր կատարելիս: Այս երևույթները արձանագրվել են նաև բազմաթիվ հետազոտություններում, որոնք ընդգծում են քաղաքական ինստիտուտների և մշակույթների վերափոխման անհրաժեշտությունը՝ կանանց քաղաքական կարիերայի ուղիները ձևավորելու համար:

Հայաստանի կառավարման համակարգում փոփոխություններ առաջարկելու համար անհրաժեշտ են ավելի խորքային տվյալներ կանանց քաղաքական կարիերայի առանձնահատկությունների վերաբերյալ: Թվային ցուցանիշները

18 «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք <https://www.arlis.am/hy/acts/83841>

19 «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականին ընդունված օրենքի վերնագիրը խմբագրվել է. 12.04.24 ՀՕ-169-Ն փոփոխություններով <https://www.arlis.am/hy/acts/194267>

20 «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարություն և գործողությունների ծրագիր» <https://www.arlis.am/hy/acts/206364>

ներկայացնում են կանանց քաղաքական մասնակցության ընդհանուր պատկերը, սակայն չեն արտացոլում քաղաքականության մեջ կանանց իրական փորձառությունները, դրդապատճառները և ձգտումները: Սույն հետազոտությունը, կենտրոնանալով Հայաստանում կանանց քաղաքական կարիերայի առանձնահատկությունների վրա, նպատակ ունի լրացնել այդ բացը:

Հետազոտությունը ունի նաև ռազմավարական նշանակություն՝ 2026 թվականի խորհրդարանի և ՏԻՄ ընտրություններին ընդառաջ հնարավորություն տալով ազդելու կուսակցությունների ծրագրերի, թեկնածուների ընտրության գործընթացների և ընտրողների ներգրավման մեխանիզմների վրա:

Կառավարման ոլորտում գենդերային հավասարության ապահովումը պահանջում է ոչ միայն կանանց թվային ներկայացվածության ընդլայնում, այլև քաղաքական համակարգերի, մշակույթների և ինստիտուտների վերափոխում և այդ համատեքստում Հայաստանում կանանց քաղաքական կարիերայի առանձնահատկություններն ամփոփող սույն հետազոտությունը կարող է ուղղակիորեն նպաստել և՛ կանանց շահերի պաշտպանությանը, և՛ ինստիտուցիոնալ բարեփոխումներին:

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի գնահատում

Կանանց քաղաքական մասնակցության հիմնական ցուցանիշներից մեկը նրանց ներկայացվածությունն է ընտրովի մարմիններում՝ ազգային և տեղական մակարդակում: Այդ ցուցանիշները բնորոշում են ոչ միայն կանանց ընտրական իրավունքի իրացման, քաղաքական ինստիտուտների ձևավորման վրա նրանց ազդեցության աստիճանը, այլ նաև ժողովրդավարության կայացման մակարդակը երկրում: Որոշումների ընդունման մակարդակի վրա կանանց ազդեցությունը գնահատելու համար պակաս կարևոր չեն նաև գործադիր և դատական իշխանության բարձրագույն պաշտոններում նրանց ներգրավվածության ցուցանիշները, սակայն հատկապես խորհրդարանական կառավարման համակարգում կանանց ներկայացվածությունը օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում, լավագույնս բնութագրում է կանանց քաղաքական առաջընթացի հնարավորությունները:

Օրենսդիր իշխանությունում կանանց ներկայացվածության իր 38.3% ցուցանիշով Հայաստանն այսօր Միջխորհրդարանական միության վարկանիշային աղյուսակում²¹ զբաղեցնում է 37-րդ տեղը 181 երկրի շարքում: Համեմատության համար՝ կանանց ներկայացվածության միջին ցուցանիշն աշխարհի միապալատ խորհրդարաններում 27.1% է²²: Ընդ որում, եթե աշխարհում վերջին ութ տարվա կտրվածքով այդ ցուցանիշն աճել է ընդամենը 4.1 տոկոսային կետով (23% — 27.1%)²³, ապա Հայաստանում այդ նույն ժամանակահատվածում (խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո)²⁴ այն աճել

21 2025 թ. օգոստոսի 1-ի դրությամբ՝ IPU Parline data https://data.ipu.org/women-ranking/?date_year=2025&date_month=10

22 IPU Parline data https://data.ipu.org/women-averages/?date_year=2025&date_month=10

23 Women in parliament 1995-2025. IPU <https://www.ipu.org/resources/publications/reports/2025-03/women-in-parliament-1995-2025>

24 Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո առաջին

է 20.3 տոկոսային կետով (18% → 38.3%)²⁵: Այդ զգալի առաջընթացը հնարավոր դարձավ ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված գենդերային քվոտայի շնորհիվ, ըստ որի կուսակցությունների ընտրացուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը²⁶: Իր դերն է խաղացել նաև պարզ համամասնական ընտրակարգի կիրառումը, որը, ի տարբերություն մինչ այդ գործող տարածքային (ռեյթինգային) ցուցակներով խառը համամասնական ընտրակարգի, երաշխավորում է ընտրված քաղաքական ուժի համամասնական ընտրացուցակներում ընդգրկված բոլոր թեկնածուների, այդ թվում՝ կանանց, մուտքը Ազգային ժողով: Արդյունքում՝ ԱԺ գործող գումարման կազմում ներկայացված քաղաքական ուժերն ապահովում են կանանց ավելի մեծ՝ 38.3% ներկայացվածություն, քան ընդգրկել էին 2021 թ. ընտրություններին իրենց ընտրացուցակներում (մինչև 35%)²⁷: Այլ հարց է, որ կանանց նման բարձր ներկայացվածությունը խորհրդարանում դեռևս չի հանգեցրել կանանց «կրիտիկական զանգվածի» հետ կապված ակնկալիքների արդարացմանը, և դա կանանց առաջնորդության ձևավորման խնդիր է:

Ինչպես ցույց են տալիս Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ ավելի վաղ իրականացված հետազոտությունները²⁸, պարզ համամասնական ընտրակարգը, մի կողմից, զգալիորեն հեշտացնում է կանանց ընտրվելու հնարավորությունները՝ վերացնելով ընտրությունների ընթացքում բոլոր խոչընդոտները՝ կապված ռեսուրսների պակասի և տղամարդ թեկնածուների հետ ոչ հավասար մրցակցության հետ, մյուս կողմից՝ չի նպաստում ընտրողների շրջանում կանանց ճանաչելիության, ընտրությունների ընթացքում նրանց տեսանելիության բարձրացմանը, կանանց առաջնորդական հատկանիշների զարգացմանը՝ տեղափոխելով կանանց քաղաքական առաջընթացի խնդիրները կուսակցությունների պատասխանատվության և ընտրված կանանց ակտիվության դաշտ: Ըստ էության, կանանց քաղաքական կարիերայի աճն այսօր մեծապես պայմանավորված է երկու գործոնով, այն է՝ կուսակցությունների ներսում նրանց առաջընթացի հնարավորություններով և ընտրված պաշտոնում տվյալ կնոջ ծավալած գործունեության որակներով:

Խորհրդարանի ղեկավար կազմում կանանց ընդգրկվածության ցածր ցուցանիշները փաստում են կուսակցությունների ներսում նրանց առաջընթացի հնարավորությունների պակասի մասին: 2025 թվականի օգոստոսի տվյալներով²⁹, խորհրդարանում կանանց 38.3% ներկայացվածության պայմաններում կանայք ներկայացված չեն փոխնախագահների պաշտոնում, չեն ղեկավարում խմբակցություններից ոչ մեկը և գլխավորում են 12 մշտական հանձնաժողովներից միայն 2-ը (16.8%)³⁰: Կանայք երբևէ չեն զբաղեցրել ԱԺ նախագահի պաշտոնը, մինչդեռ աշխարհում խորհրդարանում կանանց ներկայացվածության հետ զուգընթաց աճում է նաև նրանց թիվը խորհրդարանների ղեկավար կազմում, 2025 թ. մարտի տվյալներով կազմելով նախագահների պաշտոնում 23.8%,

Խորհրդարանական ընտրությունները անցկացվել են 2017 թվականին, 6-րդ գումարման Ազգային ժողով:
25 Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր, 2022 թ. https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief_to-Support_Women- Political_Participation_Nov-2022-Final-Arm.pdf

26 ՀՀ ընտրական օրենսգրքը, հոդված 83, 4-րդ և 10-րդ կետերը. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109081>

27 Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր, Երևան 2022 թ https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief_to-Support_Women- Political_Participation_Nov-2022-Final-Arm.pdf

28 Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում. Օքսեջեն, Երևան 2021 թ https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Women-PP_ENG.pdf

29 ՀՀ ԱԺ պաշտոնական կայք. <http://parliament.am/>

30 2025 թ. օգոստոսի 1-ի դրությամբ՝ կանայք ղեկավարում են ՀՀ ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովները:

նախագահների տեղակալների պաշտոնում՝ 32.6%, խորհրդարանական մշտական հանձնաժողովների ղեկավարների թվում՝ 27%³¹:

Կանանց քաղաքական առաջընթացի տեսանկյունից կարևոր հանգամանք է նաև վերջին տարիներին տեղի ունեցած խորհրդարանի կազմի զգալի երիտասարդացումը, ինչը վկայում է քաղաքական դաշտում կատարված սերնդափոխության մասին: Հայաստանի Ազգային ժողովում պատգամավորների միջին տարիքը 41.7 տարեկանն է³²: Միջխորհրդարանական միության տվյալներով³³ Հայաստանի խորհրդարանը երրորդն է ամենաերիտասարդ խորհրդարաններ (միջին տարիքը՝ մինչև 45 տարեկան) ունեցող 10 երկրի շարքում: Բավականին բարձր է Հայաստանի խորհրդարանում երիտասարդների, այդ թվում՝ կանանց թիվը մինչև 40 տարեկան տարիքային խմբում, այն 56% է կազմում: Համեմատության համար՝ աշխարհում այդ տարիքային խմբի պատգամավորները ընդամենը 18.6% են³⁴: Մեծ թվով երիտասարդ կանանց մուտքը քաղաքականություն ինքնին խթանող դեր կարող է խաղալ կանանց քաղաքական մասնակցության մասին կարծրատիպերը հաղթահարելու և կանանց առաջխաղացման գործում:

Գործադիր իշխանության քաղաքական պաշտոններում կանանց թիվը միայն վերջերս համադրելի դարձավ Ազգային ժողովում կանանց ներկայացվածության ցուցանիշի հետ: 2024 թվականի ղեկտեմբերից ՀՀ կառավարության կազմում 12 նախարարից 4-ը կին են (33%)³⁵, ինչն ավելի բարձր ցուցանիշ է, քան միջինը աշխարհում՝ 22.9%³⁶, ինչպես նաև ամենաբարձր ցուցանիշն է Հայաստանի նախարարների կաբինետների համար՝ սկսած 1990 թվականից: Կանայք ղեկավարում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Առողջապահության, Արդարադատության և ներքին գործերի նախարարությունները, ընդ որում՝ ներքին գործերի նախարարի պաշտոնում առաջին անգամ կին է նշանակվել միայն 2024 թվականին: Փոխնախարարների պաշտոններում³⁷ կանանց ներկայացվածությունը 15% է կազմում, ընդ որում՝ 12 նախարարությունից 5-ում կին փոխնախարարներ չկան³⁸:

Կարծրատիպերի հաղթահարման տեսանկյունից հատկապես կարևոր են կանանց նշանակումները մինչ այդ տղամարդկային համարվող այնպիսի պաշտոններում, ինչպիսին են՝ գլխավոր դատախազի, Արտաքին հետախուզության ծառայության պետի, Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնները:

Դրա հետ մեկտեղ կանայք երբևէ չեն զբաղեցրել ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնները:

Տարածքային կառավարման համակարգում կանայք չկան մարզպետների պաշտոններում և ընդամենը 4 կին է փոխմարզպետի պաշտոն զբաղեցնում³⁹:

31 Women in Politics: 2025 IPU-UN Women <https://www.ipu.org/resources/publications/infographs/2025-03/women-in-politics-2025>

32 IPU Parline data <https://data.ipu.org/parliament/AM/AM-LC01/data-on-youth/>

33 IPU Parline data <https://www.ipu.org/impact/youth-participation>

34 IPU Parline data <https://data.ipu.org/age-brackets-aggregate/>

35 ՀՀ կառավարության պաշտոնական կայք <https://www.gov.am/am/>

36 Women in Politics: 2025 IPU-UN Women <https://www.ipu.org/resources/publications/infographs/2025-03/women-in-politics-2025>

37 Ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ նախարարի տեղակալի քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը գործում է նախարարից պատվիրակված լիազորությունների ուժով և սեփական պատասխանատվությամբ քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված չէ:

38 ՀՀ կառավարության պաշտոնական կայք. <https://gov.am/>

39 կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ 2024թ. <https://armstat.am/am/?nid=82&id=2700>

Դատական իշխանության համակարգում կանայք թերներկայացված են դատարանների նախագահների պաշտոններում (18%): Վերաքննիչ և մասնագիտացված դատարանների նախագահների թվում կանայք չկան, Վճռաբեկ դատարանի նախագահը կին է⁴⁰: ՀՀ Սահմանադրական դատարանի կազմում 9 դատավորից մեկն է կին՝ 11%: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կազմում 9 անդամից 3-ը կին են՝ 33%, ընդ որում՝ ԲԴԽ անդամների թվում սեռերի ներկայացվածությունը կարգավորվում է ՀՀ դատական օրենսգրքով⁴¹:

Թեև ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ արդարադատության նախարարի, Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնները կանայք են զբաղեցնում, դատաիրավական ոլորտում կանանց առաջընթացի և ղեկավար պաշտոններում նրանց ներկայացվածության ընդլայնման խնդիրը դեռևս մնում է օրակարգում:

ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության զգալի աճ նկատվեց միայն 2021 թվականից հետո, երբ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ՏԻՄ ընտրություններում ներդրվեց համամասնական ընտրակարգը, և ըստ այդմ կիրառվեց գենդերային քվոտան⁴²: Արդյունքում՝ ավագանիների կազմում արձանագրվեց կանանց ներկայացվածության զգալի առաջընթաց՝ 11% → 29%⁴³: Մեծամասնական ընտրակարգով ձևավորվող համայնքներում, որտեղ գենդերային քվոտան չի գործում, ավագանիներում կանանց ընդգրկման ցուցանիշը 17% է⁴⁴:

Չնայած քվոտայի կիրառմամբ պայմանավորված առաջընթացի՝ ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության ցուցանիշը ավելի ցածր է, քան աշխարհում միջին ցուցանիշը՝ 35.5%⁴⁵: Բացի այդ, ՏԻՄ ընտրություններում քվոտայի արդյունավետությունն ավելի ցածր է, քան ՀՀ Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրություններին արձանագրված արդյունքները: Այսպես, Հանրապետության 71 համայնքի ավագանիներից մոտ մեկ երրորդում կանանց ներկայացվածության ցուցանիշը զգալիորեն ցածր է սահմանված քվոտայից: Հայաստանի ավագանիներում կանանց ներկայացվածությունը տարբերվում է նաև ըստ մարզերի՝ հասնելով առավելագույնի՝ 35%-ի Շիրակի մարզում և նվազագույնի՝ 14 %-ի Արագածոտնի մարզում⁴⁶:

Ուսումնասիրությունները⁴⁷ մի շարք խնդիրներ են բացահայտում՝ կապված ՏԻՄ ընտրություններում քվոտայի կիրառման հետ: Մասնավորապես, տարբեր համայնքներում ավելի քան 30 դեպք արձանագրվեց, երբ որոշ քաղաքական ուժերի ընտրացուցակներում ընդգրկված գրեթե բոլոր կանանց ինքնաբացարկների ու մանդատից հրաժարվելու արդյունքում ավագանիները կամ առանձին խմբակցությունները ձևավորվել են առանց կանանց: Բոլոր այդ դեպքերում խախտվել է Ընտրական օրենսգրքի 141.8-րդ հոդվածով սահմանված

40 Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ, 2024 թ.:
ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայք. <https://court.am/hy>
41 ՀՀ դատական օրենսգրքի 76.3-րդ և 109.5-րդ հոդվածներ: <https://www.arlis.am/hy/acts/119531>
42 ՀՀ ընտրական օրենսգրք, հոդված 104.1. Ընտրական համակարգը. <https://www.arlis.am/Document-View.aspx?DocID=172405>
43 Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր, Օքսեյն, Երևան 2022 թ. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief-to-Support-Women-Political-Participation-Nov-2022-Final-Arm.pdf>
44 Նույն տեղում
45 Facts and figures: Women’s leadership and political participation <https://www.unwomen.org/en/articles/facts-and-figures/facts-and-figures-womens-leadership-and-political-participation>
46 կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ 2024թ. <https://armstat.am/am/?nid=82&id=2700>
47 քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր, 2022 թ. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief-to-Support-Women-Political-Participation-Nov-2022-Final-Arm.pdf>

քվտայի պահպանման որոշակի երաշխիքը, ըստ որի «..եթե մանդատից հրաժարվելու դեպքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25%-ից, ապա մանդատը տրվում է ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա»⁴⁸:

2024 թվականին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առաջարկով ՀՀ ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերը լրացվել են հետևյալ ձևակերպմամբ. «Եթե ընտրական ցուցակում նվազ ներկայացված սեռի թեկնածուներ չկան, ապա այդ մանդատը/մանդատները մնում են թափուր»⁴⁹: Ակնկալվում է, որ այդ փոփոխությունը կօգնի 2026 թվականին սպասվող ՏԻՄ ընտրություններին հաղթահարելու ընտրացուցակներում կանանց «ձևական ներգրավման»⁵⁰ արատավոր պրակտիկան:

ՏԻՄ համակարգում համայնքի ղեկավարի պաշտոնում կանանց ներկայացվածությունը չի կարգավորվում քվտայով և համամասնական ընտրակարգի դեպքում մեծապես կախված է քաղաքական ուժերի կողմից ներկայացվող ընտրացուցակներից, որոնք եզակի դեպքերում են կանայք գլխավորում: Հազվադեպ են նաև կանանց առաջադրումները համայնքի ղեկավարի պաշտոնում մեծամասնական ընտրակարգի դեպքում: Արդյունքում, 2025թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ՝ կանայք ղեկավարում են Հայաստանի 71 համայնքից 4-ը կամ 5.6%-ը⁵¹: Կանայք թերներկայացված են նաև խոշորացված համայնքների կազմի մեջ մտնող բնակավայրերի/շրջանների վարչական ղեկավարների նշանակովի պաշտոններում (5.1%)⁵²:

Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության հետ կապված ձեռքբերումների, թերացումների և խոչընդոտների գնահատումը բացահայտում է նրանց քաղաքական առաջընթացը, նրանց ներկայացվածությունը ընտրովի և նշանակովի բարձրագույն պաշտոններում ապահովելու հնարավորությունների պակասը: Միաժամանակ, իրավիճակի գնահատականը հաստատում է կանանց քաղաքական կարիերայի հնարավորությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը, ընդ որում դիտարկելով խնդիրը կին քաղաքական գործիչների ընկալումների հարթությունում, մասնավորապես, նրանց շարժառիթների, փորձառության, նպաստող հանգամանքների, հանրության և մամուլի հետ կապերի, կուսակցությունում նրանց առաջընթացի, կարծրատիպային և այլ բնույթի գործոնների համատեքստում:

48 ՀՀ ընտրական օրենսգրքի, հոդված 83, 4-րդ և 10-րդ կետերը. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109081>

49 ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին (հոդված 76) . Ընդունվել է 05.12.2024 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9566&lang=arm>

50 Ընտրացուցակներում կանանց «ձևական ներգրավման» երևույթը մատնանշվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության 2018 թ. խորհրդարանի ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցում. <https://www.osce.org/odihr/elections/armenia/413567>

51 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն <https://www.mtad.am/>

52 Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ 2024թ. <https://armstat.am/am/?nid=82&id=2700>

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակը.

- բացահայտել օրենսդիր իշխանությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում (ՏԻՄ) ներգրավված կանանց ընկալումները քաղաքականության մեջ իրենց ձեռքբերումների, առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոնների, ինչպես նաև իրենց հետագա քաղաքական կարիերայի հնարավորությունների մասին:

Հետազոտության մեթոդներն ու գործիքակազմը

Ուսումնասիրության գործիքակազմը ներառել է որակական հետազոտությունների համար կիրառվող հետևյալ մեթոդները.

1. Հետազոտության թեմայով **մասնագիտական գրականության**, այդ թվում՝ փաստաթղթերի, տեղական և միջազգային հետազոտությունների արդյունքների հավաքագրում և բովանդակային վերլուծություն .
2. Հետազոտության ժամանակահատվածում կին քաղաքական գործիչների գործունեությանը վերաբերող **բաց աղբյուրներից տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն .**
3. **խորքային հարցազրույցներ** ՀՀ Ազգային ժողովում և ՏԻՄ-երի ընտրովի պաշտոններում ներգրավված կանանց հետ .
4. **փորձագետների հետ ֆոկլուս խմբի անցկացում**՝ ստացված արդյունքները և նրանց կիրառելիությունը հաստատելու, ինչպես նաև հարցազրույցների ժամանակ հավաքագրված խնդրահարույց տեղեկատվությունը քննարկելու նպատակով:

Հետազոտության մեթոդների և ընտրանքի նկարագրությունը

1. **Մասնագիտական գրականության հավաքագրումը և բովանդակային վերլուծությունը.**

հիմք է ծառայել հետազոտության թեմայի արդիականության հիմնավորման, կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի գնահատման, հարցաշարի մշակման, ինչպես նաև հետազոտության շրջանակում հավաքագրված հարցազրույցների վերլուծության համար:

Հետազոտության շրջանակում օգտագործվել է կանանց քաղաքական մասնակցությանը վերաբերող հետևյալ տեղեկատվությունը .

- միջազգային և տեղական իրավական փաստաթղթերը .
- վերջին 10 տարվա կտրվածքով (Հայաստանի խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո) տեղական և միջազգային հետազոտությունների, սոցիոլոգիական հարցումների, ընտրություններում կանանց մասնակցությանը վերաբերող վերլուծությունների արդյունքները .
- միջազգային և տեղական վիճակագրական տվյալները (համադրության նպատակով) .

- Հայաստանի կուսակցությունների ծրագրերի և ընթացակարգերի գենդերային զգայունության վերլուծությանը վերաբերող հետազոտությունները.
- կանանց կերպարին, կանանց մասնակցությանը Հայաստանում անցկացված ընտրություններին, ատելության խոսքի դրսևորումներին, գենդերային ապատեղեկատվությանը վերաբերող լրատվամիջոցների, սոցիալական ցանցերի մշտադիտարկումների արդյունքները:

2. Բաց աղբյուրների տեղեկատվության ուսումնասիրությունը

հիմք է ծառայել հետազոտության ընտրանքի ձևավորման, հարցաշարի մշակման, ինչպես նաև հավաքագրված հարցազրույցների վերլուծության համար:

Մասնավորապես, հետազոտության ժամանակահատվածում (2025 թ. հունիս-սեպտեմբեր) ուսումնասիրվել են.

- Ազգային ժողովի պաշտոնական կայքում կին պատգամավորների կենսագրությունները.
- համայնքների պաշտոնական կայքերում առկա տեղեկատվությունը ավագանու կին անդամների մասին.
- Ազգային ժողովում կին պատգամավորների, ինչպես նաև ավագանու կին անդամների, համայնքների կին ղեկավարների գործունեությանը վերաբերող լրատվական հոսքերը.
- կին քաղաքական գործիչների ֆեյսբուքյան գրառումները.
- կուսակցությունների կողմից տարածվող պաշտոնական նորությունները.
- կին քաղաքական գործիչների հետ լրատվամիջոցներում հրապարակված հարցազրույցները.
- վերջին 8 տարիների կտրվածքով կանանց առաջնորդությանը նվիրված ծրագրերի հետ կին պատգամավորների համագործակցության փորձը.
- կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ միջազգային և տեղական մասնագիտացված կայքերի տվյալներ (Միջխորհրդարանական միություն, ՄԱԿ-Կանայք կառույց, Parliament monitoring⁵³, WomenNet.am).
- այլ աղբյուրների տեղեկատվությունը, այդ թվում՝ «ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագրի (այսուհետ՝ «Հավասար» ծրագրի)⁵⁴ հետ համագործակցող կին ավագանիների մասին տեղեկությունները:

53 Ծրագիրն ու կայքը փակվել է 2023 թվականին:

54 «ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է 2022-2025 թթ., իրականացնող գործընկերներն են՝ ՕքսեՋեն հիմնադրամ, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ՝ «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: <https://oxygen.org.am/%d5%ae%d6%80%d5%a1%d5%a3%d6%80%d5%a5%d6%80/equal-2022-2025/>

3. Խորքային հարցազրույցները ՀՀ Ազգային ժողովում և ՏԻՄ-երի ընտրովի պաշտոններում ներգրավված կանանց հետ

հիմնական գործիքն են եղել հետազոտության նպատակն իրագործելու համար:

Հարցազրույցների հարցաշարը. հարցազրույցները անցկացվել են նախօրոք մշակված հարցաշարի միջոցով:

Հետազոտության ընտրանքը. հետազոտության շրջանակում անցկացվել է **40 հարցազրույց**, որոնցից 15-ը՝ Ազգային ժողովի պատգամավորների, 25-ը՝ ավագանու անդամ կամ համայնքի ղեկավար հանդիսացող կանանց շրջանում: Հարցազրույցներն իրականացվել են անանունության սկզբունքով:

Հետազոտության ընտրանքի սահմանափակումները. հետազոտության նախնական փուլում հարցազրույցներից հրաժարվել են 6 կին պատգամավոր և 1 ավագանու անդամ, ինչից հետո ընտրանքը համալրվել է այլ կին քաղաքական գործիչներով: Ավագանու անդամը հրաժարվել է հարցազրույցից դպրոցի տնօրեն նշանակվելու և ավագանու կազմից դուրս գալու պատճառով: Պատգամավորների հրաժարման պատճառներն են՝ խիստ զբաղվածությունը, հարցազրույցի թեմայի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքը, կապի դուրս չգալը հարցաշարին ծանոթանալուց հետո: Հետազոտության համատեքստում նշված պատճառները կարելի է բնութագրել որպես կին պատգամավորների հասանելիության պակաս՝ պայմանավորված կանանց հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրվածության պակասով կամ այլ ոչ տեսանելի հանգամանքներով:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրանքի նկարագրություն

ՀՀ Ազգային ժողովի կազմում ներկայացված 41 կին պատգամավորներից հետազոտության ընտրանքի մեջ ընդգրկվել են 15-ը:

ՀՀ Ազգային ժողովի կազմը⁵⁵
107 պատգամավոր, որոնցից 41-ը՝ կին (38.3%)

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն
Ընդգրկված է 69 պատգամավոր, որոնցից 27-ը՝ կին (39%)

«Հայաստան» խմբակցություն
Ընդգրկված է 28 պատգամավոր, որոնցից 12-ը՝ կին (43%)

«Պատիվ ունեմ» խմբակցություն
Ընդգրկված է 6 պատգամավոր, որոնցից 2-ը՝ կին (33%)

Խմբակցություններում չընդգրկված պատգամավորներ
4 պատգամավոր, կին չկա

ՀՀ Ազգային ժողովի կին պատգամավորների ընտրանքը ձևավորվել է շարք չափանիշների հիման վրա, որոնց թվում են՝ կուսակցական

55 ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք , 2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ <http://www.parliament.am/>

պատկանելիությունը, խմբակցությունը, մշտական հանձնաժողովը, տարիքը, քաղաքական փորձի առկայությունը, ընտրված մարմնում ղեկավար դիրքը, ԱԺ մշտական հանձնաժողովում ընդգրկվածությունը: Հաշվի են առնվել նաև լրացուցիչ գործոններ՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելը, հաշմանդամություն ունենալու հանգամանքը, ակտիվությունը հանրային կապերում:

Կուսակցական պատկանելիությունը

Ընտրանքում ընդգրկված 15 կին պատգամավորներից՝

- 11-ը (73%) կուսակցության անդամ են՝ «Քաղաքացիական պայմանագիր» (7), Հայ Յեղափոխական Դաշնակցություն (3), «Վերածնվող Հայաստան» (1).
- 4-ը (27%) անկուսակցական են:

Խմբակցություն, իշխանություն / ընդդիմություն

Ընտրանքում ներառված են իշխանություն և ընդդիմություն ներկայացնող երկու ամենամեծ խմբակցությունների կին պատգամավորներ.

- «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 7 կին պատգամավորներ.
- «Հայաստան» խմբակցության 8 կին պատգամավորներ:

Խորհրդարանական գործունեության ուղղվածությունը

ՀՀ Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովներից երկուսում կանայք ընդգրկված չեն:

Դրանք են՝ տնտեսական հարցերի ու տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովները:

Ընտրանքի մեջ ընդգրկված կին պատգամավորները աշխատում են 12 մշտական հանձնաժողովներից հետևյալ 8 հանձնաժողովներում՝

- 2-ը՝ աշխատանքի և սոցիալական հարցերի.
- 3-ը՝ առողջապահության հարցերի.
- 2-ը՝ եվրոպական ինտեգրման հարցերի.
- 3-ը՝ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի.
- 1-ը՝ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի.
- 2-ը՝ արտաքին հարաբերությունների.
- 1-ը՝ պաշտպանության և անվտանգության հարցերի.
- 1-ը՝ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի:

Ազգային ժողովում ղեկավար դիրքը

Կանայք ՀՀ Ազգային ժողովի ղեկավար կազմում⁵⁶:

- ներկայացված չեն նախագահի և նախագահի տեղակալների պաշտոններում,
- չեն ղեկավարում խմբակցություններից ոչ մեկը,
- գլխավորում են 12 հանձնաժողովներից միայն 2-ը:
- Մշտական հանձնաժողովների տեղակալների պաշտոնում 4 կին է ներկայացված:

Հարցազրույցների ընտրանքում ընդգրկված 15 կին պատգամավորներից 4-ն են ղեկավար դիրք զբաղեցրել.

- 1-ը՝ մշտական հանձնաժողովի նախագահ է.
- 3-ը՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ են.
- 1-ը՝ ԱԺ նախագահի նախկին տեղակալ է:

Տարիքային կազմը

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների միջին տարիքը 41.7 տարեկանն է:

Պատգամավորների 56%-ը մինչև 40 տարեկան տարիքային խմբում է: 41 կին պատգամավորներից 27-ը կամ 66%-ը մինչև 40 տարեկան տարիքային խմբում են:

Ընտրանքի մեջ ընդգրկված 15 կին պատգամավորներից՝

- 7-ը կամ 47%-ը մինչև 40 տարեկան են.
- 5-ը կամ 33%-ը 40-50 տարեկան են.
- 3-ը կամ 20%-ը 50 տարեկան են:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Հետազոտության ընտրանքում ընդգրկված է հաշմանդամություն ունեցող մեկ կին:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ

Հետազոտության ընտրանքում ընդգրկված է 2 կին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից, որոնցից մեկն անցել է խորհրդարան ազգային փոքրամասնությունների քվոտայով:

56 ՀՀ ԱԺ պաշտոնական կայք. 2025 թ. օգոստոսի դրությամբ <http://parliament.am/>

Փորձառությունը պատգամավորի պաշտոնում

Ընտրանքի մեջ ընդգրկված 15 կին պատգամավորներից 7-ը ՀՀ Ազգային ժողովի երկու կամ ավելի գումարումների պատգամավոր են եղել:

Ակտիվությունը հանրության հետ կապերում

Ընտրանքի մեջ ընդգրկված 15 կին պատգամավորներից 8-ը մասնակցել են ԱԺ—քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ԱԺ—ԲՀԿ) համագործակցության հարթակի⁵⁷ աշխատանքներին և այլ նախաձեռնությունների, հանդես են եկել կանանց իրավունքներին և շահերին առնչվող օրենսդրական նախաձեռնություններով:

ՏԻՄ-երում ընդգրկված կանանց ընտրանքի նկարագրությունը

Ընտրագոտության ընտրանքի մեջ ընդգրկվել է 25 կին ՏԻՄ համակարգում ներկայացված 415 ավագանու կին անդամներից:

Կանանց ներկայացվածությունը ավագանիներում. Երևանում և մարզերում

- Հայաստանի ավագանիներում կանանց ներկայացվածության ցուցանիշներն անհամաչափ են ըստ մարզերի՝ հասնելով առավելագույնի՝ 35%-ի Շիրակում և նվազագույնի՝ 14%-ի Արագածոտնի մարզում:
- Ավագանիներում կանանց ներկայացվածության ընդհանուր ցուցանիշը՝ 29%, զգալիորեն ցածր է, քան Երևանի նորընտիր ավագանիում արձանագրված 38.5%-ը⁵⁸:

Կին ավագանիների և համայնքի ղեկավարների ընտրանքի ձևավորման հիմնական չափանիշներն են եղել՝ ըստ մարզերի, ըստ կուսակցական պատկանելիության, ըստ քաղաքական փորձի, ըստ տարիքի, ըստ ընտրված մարմնում ղեկավար դիրքի, ըստ ազգային փոքրամասնության պատկանելիության: Լրացուցիչ գործոն է հանդիսացել «Հավասար» ծրագրի հետ համագործակցությունը⁵⁹:

Մարզեր, համայնքներ

Ընտրանքի մեջ ընդգրկվել են կին ավագանիներ և համայնքի ղեկավարներ հանրապետության 11 մարզերից 7-ից՝ Սյունիքի, Վայոց ձորի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Արմավիրի, Արարատի⁶⁰, ինչպես նաև մայրաքաղաք Երևանից:

Հանրապետության 71 համայնքից ընտրանքի մեջ ներառվել են 14 համայնքի (20%) կին ավագանիներ և համայնքի ղեկավարներ՝ Գորիս (Սյունիքի մարզ),

57 Համագործակցություն հանուն հավասարության. ԱԺ-ԲՀԿ հարթակի գործունեություն. <https://hav-asar-infohub.am/hamagorcakcutyun/>

58 Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ 2024:

59 «ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է 2022-2025 թթ.: Իրականացնող գործընկերներն են՝ ՕքսեՋեն հիմնադրամ, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ՝ «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: <https://oxygen.org.am/%d5%ae%d6%80%d5%a1%d5%a3%d6%80%d5%a5%d6%80/equal-2022-2025/>

60 Մարզերի ընտրության հարցում որոշակի դեր է խաղացել այն փաստը, որ «Հավասար» ծրագիրը, որի շրջանակում կատարվել է սույն հետազոտությունը, իրականացվել է նշված մարզերում:

Գյումրի, Աշոցք, Ախուրյան (Շիրակի մարզ), Վանաձոր, Սպիտակ, Փամբակ (Լոռու մարզ), Բերդ, Իջևան, Դիլիջան (Տավուշի մարզ), Ջերմուկ (Վայոց ձորի մարզ), Արմավիր (Արմավիրի համայնք), Վերին Դվին (Արարատի մարզ), Երևան համայնքները:

Ավագանիներում զբաղեցրած դիրքը

Ընտրանքի մեջ ներկայացված են հանրապետությունում համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող 3 կանանցից 2-ը, համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոն զբաղեցրած 8 կանանցից 1-ը, ինչպես նաև խմբակցության ղեկավարի պաշտոն զբաղեցնող 2 կին:

Կուսակցական պատկանելիությունը

Հանրապետության ավագանիները ձևավորած 52 քաղաքական ուժերն ապահովել են իրենց խմբակցությունների կազմում⁶¹.

- 28-ը՝ 30%-ից բարձր կանանց ներկայացվածություն,
- 11-ը՝ 25-30% կին,
- 13-ը՝ 25% - 0% ցածր կանանց ներկայացվածություն:

Հանրապետության ավագանիները ձևավորած 52 քաղաքական ուժերից ընտրանքի մեջ ներգրավված կանայք 12 կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչ են:

Ընտրանքի մեջ ընդգրկված 25 կանանցից՝

- 17-ը – կուսակցության անդամ են և ներկայացնում են 12 կուսակցություն՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր», «Իմ հզոր համայնք», «Լուսավոր Հայաստան», «Հայրենիք», «Ազգային առաջընթաց», «Զորավոր համայնք», «Հանրապետություն», «Բարգավաճ Հայաստան», «Վերածնվող Հայաստան», «Քաղաքացու որոշում» կուսակցությունները, «Առուշ Առուշանյան» դաշինքը.
- 8-ը - անկուսակցական են:

Տարիքը

Հանրապետության ավագանիներում ընդգրկված անդամների 56%-ը մինչև 44 տարեկան են, նրանց 50%-ը կանայք են⁶²:

61 Կանայք տեղական ինքնակառավարման համակարգում. «Հավասար» տեղեկագիր <https://oxygen.org.am/texekagir/page60455911.html>

62 Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ՎԿ 2024 թ.:

Հետազոտության մեջ ներգրավված կանանց՝

- 52%-ը մինչև 44 տարեկան են .
- 32%-ը 45-59 տարիքային խմբում են .
- 16%-ը 60+ տարիքային խմբում են:

4. Փորձագետների հետ ֆոկուս խմբի անցկացումը

Նպատակ ուներ հաստատել հետազոտության ընթացքում ստացված արդյունքները և նրանց կիրառելիությունը:

Հետազոտության մեթոդաբանության անբաժանելի մասն է փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումը, որն անցկացվել է հետազոտության արդյունքների նախնական ամփոփման փուլում, և որի նպատակն էր հաստատել ստացված արդյունքները և նրանց կիրառելիությունը, ինչպես նաև քննարկել հարցազրույցների ժամանակ հավաքագրված խնդրահարույց տեղեկատվությունը .

Մասնավորապես՝

- արդյոք հետազոտության արդյունքները ընդգրկում են ուսումնասիրվող երևույթի բոլոր կարևոր կողմերը,
- արդյոք արդյունքները հնարավոր է ընդհանրացնել այլ միջավայրերի, ժամանակների կամ մարդկանց վրա:

Ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցել են կանանց քաղաքական և տնտեսական մասնակցության խնդիրների հետազոտական փորձ ունեցող 7 փորձագետ և կանանց քաղաքական մասնակցության մշտադիտարկման փորձ ունեցող 3 լրագրող-փորձագետ:

Ֆոկուս խմբում քննարկման դրված հարցերը կարելի է բաժանել երկու խմբի՝

Հետազոտության վերաբերյալ ընդհանուր հարցադրումներ

- Ի՞նչ չափով են ստացված արդյունքները համապատասխանում ձեր փորձին:
- Ո՞ր հարցերը կամ արդյունքները կարող են ճշգրտման կարիք ունենալ և ի՞նչ կարելի է ավելացնել:

Հիմնախնդիրների շուրջ հարցադրումներ

- Ի՞նչ խնդիրներ եք տեսնում կանանց քաղաքական կարիերայի հետ կապված, ինչպիսի խոչընդոտներ կան, ի՞նչ մարտահրավերների են նրանք բախվում՝ ձեր կարծիքով:
- Ի՞նչ կարծիքի եք կանանց համերաշխության մասին, առկա՞ են դրա դրսևորումները քաղաքական դաշտում:
- Փոխվե՞լ են արդյոք վերջին տարիներին հանրության ընկալումները և վստահությունը կին քաղաքական գործիչների նկատմամբ:
- Ինչպե՞ս եք գնահատում, քաղաքացիական հասարակության և մամուլի հետ կին քաղաքական գործիչների հարաբերությունները:
- Ինչպե՞ս կարելի է ձեր կարծիքով խթանել կանանց քաղաքական առաջընթացը:

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքում հաստատվեցին հետազոտության արդիականությունն ու կարևորությունը, ինչպես նաև արդյունքների համադրելիությունը մինչ այդ կատարված հետազոտությունների և փորձագետների անձնական դիտարկումների հետ:



Մաս 1. Կանանց քաղաքական կարիերայի շարժառիթներ

Քաղաքական կարիերայի շարժառիթների բազմազանությունը մասնագիտական գրականության մեջ ենթարկվում է տարբեր տիպի դասակարգումների՝ ըստ քաղաքական վարքագծի նպատակների, արժեքային կողմնորոշումների, ձևավորման հիմքերի, գիտակցման աստիճանի, գործունեության բնույթի և այլն:

Ինչպես ցույց են տալիս Հայաստանում իրականացված հետազոտությունները⁶³, քաղաքականություն մուտք գործելու շարժառիթները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի.

Հանրային շարժառիթներ

- երկրին ու հասարակությանը օգտակար լինելու, ծառայած խնդիրների լուծմանը նպաստելու և սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական իրավիճակը բարեփոխելու (ալտրոիստական) ցանկությունները

Անձնական շարժառիթներ

- ինքնահաստատման՝ մրցակցության և դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ու դրա հետ կապված՝ հոգեկան բավարարվածություն ձեռք բերելու ձգտումը.
- ինքնադրսևորման՝ սեփական փորձի, կարողությունների, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների իրացման ցանկությունը.
- անձնական, շահադիտական նկրտումները. անձնական օգուտի, սեփական բիզնեսն ապահովագրելու, նյութական կեցությունը բարելավելու, սոցիալական դիրքը բարձրացնելու և կարգավիճակի արտոնություններից օգտվելու ցանկությունը:

Իրականության մեջ անձնական ու հանրային շարժառիթները հաճախ համակցված են և մեծապես պայմանավորված տվյալ անձի արժեհամակարգով: Այլ հարց է, որ անհատական գրույցների ժամանակ ոչ բոլոր շարժառիթներն են անկեղծ բարձրաձայնվում, հատկապես ստվերում են մնում անձնական օգուտի, սեփական բիզնեսն ապահովագրելու, նյութական կեցությունը բարելավելու, կարգավիճակի արտոնություններից օգտվելու շարժառիթները: Հատկանշական է սակայն, որ և՛ միջազգային, և՛ տեղական հետազոտությունները⁶⁴ փաստում են, որ որոշակի տարբերություններ կան կին և տղամարդ գործիչների քաղաքական կարիերայի ձգտման շարժառիթներում, մասնավորապես, կանայք ավելի հաճախ են հիշատակում հանրային շարժառիթները (գաղափարներ, արդարության ձգտում, քաղաքացիական պարտք, մարդկանց

63 «Մասնակցություն հանուն փոփոխությունների», «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, Oxfam-ի «Կանանց ձայնը և մասնակցությունը 2012 թ. ՀՀ ԱԺ ընտրություններում» ծրագրի շրջանակներում անցկացված հետազոտության արդյունքներ, Երևան, 2012: [Արտահերթ խորհրդարանական ընտրություններ – 2018. Կանանց ընտրական վարքի առանձնահատկությունները](#), Օքսֆեմ, 2019:

64 Women political leaders: the impact of gender on democracy, WFD 2021 <https://www.wfd.org/what-we-do/resources/women-political-leaders-impact-gender-democracy>
Կանանց ընտրական վարքի առանձնահատկությունները, Օքսֆեմ, 2019. https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/09/Women-Electoral-behaviour_Research_ARM.pdf

բարօրություն), իսկ տղամարդկանց դեպքում գերակշռում են անձնական բնույթի շարժառիթները (կարգավիճակի բարձրացում, իշխանություն, ինքնահաստատում): Այդ տարբերությունները բնորոշ են նաև հանրային ընկալումներին, ինչը պայմանավորված է այն կարծրատիպով, թե տղամարդը պետք է լինի իշխողն ու որոշումներ կայացնողը, հետևապես տղամարդկանց համար իշխանության ձգտելը նորմա է:

Սույն հետազոտության շրջանակում կին քաղաքական գործիչների մոտիվացիային վերաբերող հարցերը նպատակ ունեին պարզելու՝

- հարցվածների քաղաքականություն ներգրավվելու հիմնական շարժառիթները (անձնական և հանրային).
- խթանող հանգամանքները կամ մարդկանց աջակցությունը.
- գաղափարախոսության դերը:

1.1. Կանանց քաղաքականություն ներգրավվելու հանրային և անձնական շարժառիթները

Հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հարցված կին քաղաքական գործիչների շարժառիթները անձնական և հանրային բնույթի դրդապատճառների համակցման արդյունք են: Նույնկերպ համակցված են շարժառիթների ռացիոնալ և հուզական հիմքերն ու հանգամանքները: Մի կողմից՝ հարցված կանայք հստակ գիտեն, թե ինչի են ուզում հասնել, նպատակասլաց են, հասկանում են, որ քաղաքականությունը անձնական աճի, ինքնադրսևորման և հասարակական ազդեցության հարթակ է, մի մասի մեջ առկա է առաջնորդության ձգտումը, և այդ ամենը շատ կարևոր է քաղաքական կարիերայի հետագա աճը խթանելու տեսանկյունից: Մյուս կողմից՝ կանանց քաղաքական մասնակցությունը որոշակի չափով պայմանավորված է հույզերով՝ բողոքի արտահայտում, դիմադրելու ցանկություն, հայրենիքի նկատմամբ սեր, խարիզմատիկ առաջնորդի ազդեցություն: Բոլոր դեպքերում, պատասխանների մեջ գերակշռում են հանրային շահը բնութագրող գործոնները՝ քաղաքացիական պարտքի զգացումը, արդարության ձգտումը:

Քաղաքացիական ակտիվությունից դեպի քաղաքականություն

Հարցված կանանց մեծ մասը քաղաքականություն է մտել՝ ձգտելով կյանքի կոչել իրենց դավանած գաղափարները՝ ժողովրդավարություն, արդարություն, ազատություն, հավասար իրավունքներ և այլն: Այդ շարժառիթները հատկապես բնորոշ են քաղաքացիական ակտիվությունից և ՀԿ սեկտորից քաղաքականություն մտք գործած կանանց, որոնց թիվը, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, աճի միտումներ էր ցույց տալիս հատկապես վերջին երկու խորհրդարանական ընտրությունների ընտրացուցակներում⁶⁵:

Այս հարցում որոշիչ դեր է խաղացել գենդերային քվոտայի կիրառման գործոնը՝ կուսակցությունները, պարտադրված լինելով ապահովելու թեկնածուների թվում առնվազն 30%-անոց կանանց ներկայացվածություն, դիտարկում են քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող և շահերի պաշտպանության փորձ ունեցող կանանց որպես արժեքավոր ռեսուրս ընտրացուցակներում

65 Արտահերթ խորհրդարանական ընտրություններ – 2018. Ընտրական վարքի առանձնահատկությունները, ՕրսԵՋեն, 2019

ընդգրկելու համար: Քաղաքացիական ակտիվիստներն էլ իրենց հերթին մտածում են որոշումների ընդունման վրա իրենց ազդեցությունը մեծացնել քաղաքականություն մուտք գործելու միջոցով, և դա բավականին տարածված շարժառիթ է:

«Իմ մուտքը քաղաքականություն եղել է հասարակական գործունեությունից և, մասնավորապես, որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բարձրացման ուղղությամբ իրականացված գործունեությունից:»

«Իմ մոտիվացիան փոփոխություններ բերելն էր այն ոլորտում, որտեղ ես աշխատում էի, և այդ փոփոխություններն անձամբ անելը, նախաձեռնելը և դրանց մասնակից դառնալը:»

«Քաղաքականությունն ինձ համար շանս էր՝ անելու այն, ինչ ես մտածում էի, որ պետք է:»

«Մինչև ինստիտուցիոնալ քաղաքականություն մուտք գործելը, ես մշտապես ներգրավված եմ եղել կամ ինքս նախաձեռնել եմ քաղաքացիական շարժումներ:»

«Սկզբից առավելապես հասարակական շարժման մեջ էի, բարձրացնում էի տարբեր հարցեր, որոնք լուծում էին ստանում: Եվ այնպես ստացվեց, որ համայնքում սկսեցին միմյանց ասել, որ ես կարող եմ այս կամ այն հարցը լուծել, և բոլորը դիմում էին ինձ:»

«Մանկուց մեծացել էի այդ արժեհամակարգի մեջ՝ Հայաստանի անկախություն, ինքնություն, ազգային և պետական արժեքներ:»

«Իմ շարժառիթը եղել է հայրենիքի նկատմամբ սերը:»

«Իմ մոտիվացիան եղել է հասարակության համար լավ բան անելու ցանկությունը:»

Լրագրության ոլորտից դեպի քաղաքականություն

Քաղաքացիական ակտիվությունից դեպի քաղաքականություն սցենարի շարժառիթները բնորոշ են նաև լրագրության ոլորտում աշխատող կանանց, որոնք աշխատանքի բերումով առնչվելով հանրային բազմաթիվ խնդիրների, որոշում են ընդունում նպաստելու դրանց լուծմանը՝ սեփական ազդեցությունն ու կարգավիճակը բարձրացնելու միջոցով: Կուսակցությունների համար նրանք նույնպես արժեքավոր ռեսուրս են քաղաքական գործընթացների մասին իրենց իրազեկվածության բարձր մակարդակի շնորհիվ:

«Ես երկար տարիներ աշխատել եմ հեռուստատեսությունում, և իմ աշխատանքային հետաքրքրությունների շրջանակը համայնքային խնդիրներ վեր հանելն էր. . . Աստիճանաբար հասունացավ պահը, որ ես լրագրությունից գնայի դեպի քաղաքականություն, որովհետև կային էներգիան, փորձառությունը, հմտությունները, որոնք կարող էի ծառայեցնել իմ համայնքի զարգացմանը:»

«Ի սկզբանե աշխատել եմ մեդիայի ոլորտում՝ հեռուստատեսությունում և ռադիոյում՝ ժամանցային հաղորդումներում, հետո սահուն անցում կատարեցի դեպի քաղաքական լրագրություն և քաղաքական տեքստեր: Դրանից հետո 2019 թվականին առաջարկ ստացա աշխատելու Ազգային ժողովում, որտեղ միջավայրը խիստ քաղաքական էր: Շատ ինքնաբերաբար և սահուն ամեն ինչ ստացվեց, ես չեմ նստել և որոշել, որ պետք է քաղաքականությամբ զբաղվեմ, ուղղակի կյանքի փուլերը բերեցին, հանգեցրեցին դրան:»

Մանկավարժությունից, համայնքապետարանի աշխատակցից դեպի ավագանի

ՏԻՄ ընտրություններին առաջադրվելու միջոցով քաղաքականություն մուտք գործած կանանց շարժառիթները իրենց յուրահատկություններն ունեն, նրանց մեծ մասը իրենց ներգրավվածությունը ավագանիներում բնութագրում է որպես ծառայություն համայնքին՝ նպատակ ունենալով բարելավել իրենց համայնքի կյանքը, լուծել համայնքային նշանակության կոնկրետ խնդիրներ:

«Ես հասարակական ոլորտում եմ արդեն 20 տարի և դպրոցական տարիքից սկսած շատ ակտիվ եմ եղել: Այդ ընթացքում բոլոր իշխանությունների կողմից, ինչ-ինչ խնդիրների, ծրագրերի կամ, գուցե, ընդդիմադիր հայացքների կամ հակադարձելու համար եղել եմ ուշադրության կենտրոնում: Նաև իմ համայնքը, նախկինում քաղաքը, դրա խնդիրները, զարգացման հնարավորությունները միշտ իմ հետաքրքրությունների շրջանակում են եղել:»

«Քանի որ շատ եմ սիրում իմ քաղաքը, որոշեցի ինքս դառնալ ավագանի և հարցերին ինքս լուծում տալ, ոչ թե դիմեմ ինչ-որ մեկին և սպասեմ խնդիրների լուծմանը:»

ՏԻՄ-երում առավել տարածված սցենարներից է նաև **«մանկավարժությունից դեպի ավագանի» սցենարը**, և այստեղ որպես շարժառիթ կարելի է դիտարկել համայնքային մակարդակում մանկավարժների ճանաչելիության փաստը: Համամասնական ընտրակարգին անցնելուց հետո այդ ռեսուրսը նույնպես օգտագործվում է կուսակցությունների կողմից ընտրացուցակներում կանանց ընդգրկման խնդիրը լուծելու նպատակով: Ինչպես փաստում են ընտրացուցակների ուսումնասիրությունները, ՏԻՄ ընտրություններում տարածված է նաև **«համայնքապետարանի աշխատակցից դեպի ավագանի» սցենարը**:

«Երկար տարիներ աշխատելով որպես մանկավարժ՝ ես հասկացել եմ, որ բոլոր հասարակական խավերում իմ կարծիքը լսվում է, հաշվի է առնվում, ինչպես նաև զգացել եմ ներուժ, որ կարող եմ ներդնել ոլորտում:»

«Աշխատել եմ համայնքապետարանում՝ որպես կրթության, մշակույթի և սպորտի բաժնի մասնագետ, և այդ տարիների ընթացքում հասկացա, որ շատ սոցիալական խնդիրներ, որոնք վերաբերում են կանանց, երեխաներին, մշակույթին, երբեք չեն քննարկվում ավագանու նիստերում, և դա պայմանավորված էր նրանով, որ ավագանու կազմում բացառապես արական սեռի ներկայացուցիչներ էին: Այդ ժամանակ վճռեցի, որ ուզում եմ մասնակցել որոշումների կայացման գործընթացին:»

1.2. Քաղաքականություն մուտք գործելու հանգամանքները և աջակցող մարդիկ

Շատ դեպքերում որպես շարժառիթ են ներկայացվում այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել ՏԻՄ կամ ԱԺ ընտրություններին առաջադրվելու համար: Օրինակ՝ իշխող ուժի ներկայացուցիչների համար խթանիչ հանգամանք է եղել 2018 թ. հեղափոխությունը: Շատերի համար որոշիչ դեր է խաղացել 2020 թ. պատերազմը, հետպատերազմյան վիճակը ու տեղահանությունները,

որոնք մեծացրել են հատկապես կանանց քաղաքացիական ակտիվությունը, նրանց մասնակցությունը կամավորական, հումանիտար և տեղական վերականգնման նախաձեռնություններում, ինչը նաև նրանց քաղաքական մասնակցության ընդլայնման խթան դարձավ: Որպես խթան է ներկայացվում նաև համամասնական ընտրակարգին անցումը և քվոտայի կիրառումը:

«Ակտիվ քաղաքականության մեջ ներգրավվելու իմ հիմնական շարժառիթը պատերազմն է եղել: Պատերազմի կորուստները, Արցախի վիրավոր վիճակը և իմ պատկերացումները, որ այդ վտանգը հետո գալու հասնելու է Սյունիք, իմ հարազատ բնակավայր . . . Իմ հիմնական մոտիվացիան էր փոքր-ինչ ազդեցություն ունենալ և օգնել, ցավոք սրտի, արդեն անդառնալի չդարձնել այն կորուստները, որ մենք ունեցանք:»

«Առաջին հանգամանքը ընտրակարգի փոփոխությունն էր, որով կանանց ներգրավվածությունն ավելի ցանկալի դարձավ և կարևորվեց: Եվ կանայք հասկացան, որ պետությունն արժևորում է մեր դերը, գիտելիքները, հմտությունները և կարողությունները: Եվ ես օգտագործեցի այդ հնարավորությունը:»

ՏԻՄ-երում ներգրավված կանանց պատասխաններում ավելի հաճախ են հիշատակվում շրջապատի մարդկանց կամ կուսակցության առաջնորդների անունները, որոնց հորդորով կամ հրավերով են նրանք մտել քաղաքականություն: Կան նաև դեպքեր, երբ կանայք մտել են քաղաքականություն՝ շարունակելով ընտանիքի քաղաքական ավանդույթները:

«Շարժառիթը իմ կողմից չի եղել: Ինձ ճանաչել են, դպրոցում տեսել են իմ աշխատանքը և մտածել են, որ կարող եմ ինչ-որ բան նաև համայնքի համար անել, ներուժ են տեսել իմ մեջ:»

«Ես չգիտեի՝ քաղաքականությունը ինչ է, ինչ էին ուզում իմ (կուսակցական) ընկերները, բայց գործարար էի և արդեն ճանաչված էի, ու հետաքրքիր է, որ հենց ճանաչված ես դառնում, իրենք քեզ քաշում քաղաքականության մեջ են մտցնում:»

«Ինձ առաջարկեցին լինել իրենց ցուցակում 3-րդ համարը՝ որպես սոցիալական ոլորտում գործունեություն ծավալած, համայնքը ներսից ճանաչող մարդ: Սկզբում մտածում էի, որ իմ աշխատանքը համատեղելի չէր ավագանու անդամի կարգավիճակի հետ, բայց հետո, երբ մեր ցուցակի առաջին համարը հայտնվեց անազատության մեջ, հասկացա, որ թասիբի հարց է, ու կանգնեցի նրա կողքին:»

«Անկեղծ ասած, չեմ ունեցել որևէ մոտիվացիա, պարզապես դիմել են, և, այսպես ասած, տվյալ անձին ճանաչելով, միացա իր թիմին: Առանձնահատուկ մոտիվացիա կամ հավանություն որևէ քաղաքական ուժի երբեք չեմ ունեցել, ավելի շատ պատահականություն է եղել:»

«Եթե ընկերների, մտերիմների, ծանոթների, ուղղակի շրջապատի անընդհատ հորդորները, թե անպայման պետք է գնալ, ընտրվել, ինչ-որ բան փորձել փոխել, կարելի է համարել խթան, ապա իմ դեպքում այդպես է եղել:»

«Ծանոթներիս կողմից առաջարկ եղավ, ես էլ չհրաժարվեցի: Ասաց՝ «Քո ակտիվությունը, քո նվիրվածությունը կարող են օգտակար լինել»: Հետո նաև շրջապատիս մարդիկ, գործընկերներս, ռեկտորը, ընտանիքս, առաջին հերթին՝ ամուսինս քաջալերեցին: Եթե նա դեմ լիներ, ես չէի գնա դրան:»

«Հանգամանքը հոկտեմբերի 27-ն էր, իսկ դրանից առաջ՝ Վազգեն Սարգսյանի կերպարը: Ինձ ամեն կերպ ոգևորել, խթանել է մայրս, որ ինքն էլ եղել է քաղաքականության մեջ 1990-ականներին:»

Առաջնորդի անձը նշանակալի դեր է խաղացել այն ԱԺ պատգամավորների պատասխաններում, որոնք կարիերային աճ են ունեցել տեղական իշխանության մակարդակից դեպի օրենսդիր մարմին: Ընդհանուր առմամբ, դա տարածված սցենար է, քանի որ կուսակցություններում կանանց քաղաքական առաջընթացն ապահովելու հստակ մեխանիզմների բացակայության պարագայում կարիերային աճի համար որոշիչ է դառնում առաջնորդի դերակատարումը:

«Իմ կյանքում մեծ դեր է խաղացել . . . (կուսակցության առաջնորդը), ով ինձ հրավիրել է արդեն մեծ քաղաքականություն՝ մասնակցելու ԱԺ ընտրություններին: Մինչ այդ ես ինձ չէի տեսնում մեծ քաղաքականության մեջ:»

«Ես սկզբում եղել եմ ավագանի, հետո արդեն առաջարկ եմ ստացել գործունեությունս շարունակել խորհրդարանում: Եվ արդեն երկու գումարման ԱԺ պատգամավոր եմ:»

Կանանց քաղաքական կարիերայի աճի հնարավորությունների տեսանկյունից հետաքրքիր է նաև **կուսակցության երիտասարդական թևի անդամից պատգամավոր կամ ավագանի դառնալու սցենարը**, երբ հետագա կարիերայի խթան են հանդիսացել որոշակի հանգամանքներ, իրավիճակի փոփոխություն:

«Իմ դեպքում շարժառիթներ չեն եղել, հանգամանքներ են եղել: Ես արդեն կուսակցության երիտասարդական թևի մաս էի, քաղաքականությամբ էի զբաղվում, բայց անուղղակի, կուսակցության անդամ չէի: Կուսակցական դառնալու և բուն քաղաքական գործընթացներին մասնակցելու որոշումը 2018-ից հետո եղավ, և դա երկրում ստեղծված իրավիճակն էր, այսինքն՝ այն գիտակցումը, որ եթե փոփոխություններ պետք է անել, հիմա է պետք անել:»

«Փոքր ժամանակվանից շատ ակտիվ եմ եղել: Այն ժամանակ այլ կուսակցության երիտասարդական թևի մեջ եմ եղել, հետո արդեն հեղափոխությանն եմ մասնակցել և դարձել իշխող կուսակցության անդամ: Շարժառիթս եղել է քաղաքի մասին մտածելը, ինչ-որ բան փոխելու ցանկությունը:»

Ամոփելով կարելի է փաստել, որ սույն հետազոտության շրջանակում հարցված կանանց շարժառիթները մեծապես պայմանավորված են նրանց քաղաքականություն մուտք գործելու սցենարներով, որոնցից առավել տարածված են՝ քաղաքացիական ակտիվությունից, մասնագիտությունից (մանկավարժության, լրագրության, առողջապահության, բիզնեսի և այլ ոլորտներից), կուսակցության երիտասարդական թևից, համայնքապետարանում աշխատանքից դեպի քաղաքականություն սցենարները: Որոշիչ կարող են լինել հանգամանքները, այդ թվում ճգնաժամային իրավիճակը, շրջապատի մարդիկ, առաջնորդի ազդեցությունը, ընտանիքի անդամների դինաստիկ ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում և այլ գործոններ:

1.3. Բաղաքականություն մուտք գործելու գաղափարախոսական հիմքերը

Հարցազրույցների վերլուծությունը ի հայտ է բերում կուսակցությունների գաղափարական հենքերի հետ կապված բոլոր խնդիրները, որոնք նաև այլ հետազոտությունների միջոցով են բացահայտվել: Ընդհանուր առմամբ, Հայաստանում կուսակցական համակարգը շարունակում է մնալ զարգացման փուլում, իսկ քաղաքական գաղափարախոսությունների ներկայակալը սահմանափակ է և ոչ հստակ: Փորձագետների գնահատականներով՝ Հայաստանում գրանցված 119 կուսակցություններից⁶⁶ մեծ մասի անգործության պատճառներից մեկը կուսակցությունների թույլ գաղափարական հիմքերն են: Դրա հետ մեկտեղ, քաղաքական դաշտում առկա է բանավեճ երկու հակադիր տեսակետների միջև. առաջինը, որ քաղաքական գաղափարախոսությունները հնացած, արհեստական երևույթ են և պետք է ձերբազատվել «իզմ»-երից, երկրորդը, որ առանց քաղաքական գաղափարախոսությունների հնարավոր չէ ունենալ առողջ կուսակցական համակարգ, ծավալել իրական քաղաքական պայքար:

Կուսակցությունների ծրագրերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիմնականում դրանք ներառում են ազատական, սոցիալ-ժողովրդավարական, պահպանողական, ազգայնական գաղափարներ: Օրինակ՝ Հայաստանի քաղաքական դաշտում առավել ակտիվ 9 կուսակցությունների ծրագրերի գաղափարական հենքերին նվիրված հետազոտությունը⁶⁷ փաստում է, որ այդ կուսակցությունների ծրագրերում ամենաշատ ներկայացված են ձախկենտրոնամետ, սոցիալ-ժողովրդավարությանը մոտ գաղափարներ, որոնք, ի տարբերություն համաեվրոպական կուսակցությունների, հաճախ զուգորդվում են ազգայնական, չափավոր պահպանողական հռետորաբանությամբ: Ըստ հետազոտության՝ հետաքրքիր է նաև, որ «որոշ դեպքերում կուսակցության ծրագրի ուսումնասիրության հիման վրա բացահայտված գաղափարախոսությունը տարբերվում է՝ ա) գաղափարախոսությունից, որը կուսակցությունը վերագրում է ինքն իրեն և բ) գաղափարախոսությունից, որը հանրությունն է վերագրում այդ կուսակցությանը»⁶⁸:

Հայաստանի քաղաքական դաշտի մասին այս եզրակացությունները հաստատվում են նաև սույն հետազոտության արդյունքներով, ըստ որոնց որոշ կանայք իրենց պատասխաններում նշում են, որ «Հայաստանի քաղաքական համակարգն այն դասական համակարգը չէ, որ կարող ենք տեսնել բազմաթիվ այլ երկրներում, և քաղաքական ուժերը հաճախ շարժվում են ոչ այն ուղղությամբ, որը իրենց գաղափարական հիմքերին է համապատասխանում»:

Ընդհանուր առմամբ, հետազոտության շրջանակում գաղափարախոսությանը վերաբերող հարցը երկու նպատակ ուներ: Առաջինը՝ ինչ չափով են կուսակցությունների ծրագրերում ներառված գաղափարական հիմքերը շարժառիթ հանդիսացել կանանց քաղաքականության մեջ ներգրավվելու համար: Երկրորդը՝ արդյոք այդ կանայք բավարար չափով իրազեկված են իրենց կուսակցությունների գաղափարախոսության մասին:

66 2024 թ. դրությամբ իրավաբանական անձանց պետական ռեգիստր. <http://www.e-register.am>

67 Հայաստանյան կուսակցությունների քաղաքական գաղափարախոսություններն ըստ իրենց ծրագրերի. հետազոտության արդյունքները: Երևան, 2020 https://www.political.am/storage/uploads/files/arm_print.pdf

68 Նույն տեղում:

Հատկանշական է, որ հարցազրույցների արդյունքում ստացված պատասխանները համապատասխանում են քաղաքական գաղափարախոսության վերաբերյալ Հայաստանում իրականացված այլ հետազոտություններին, մասնավորապես, «Քաղաքական կոմպասի» թեստի վերլուծության արդյունքներին⁶⁹, ըստ որոնց երիտասարդ կանանց մեծ մասը սոցիալ-տնտեսական չափմամբ՝ ձախ կենտրոնամետ է, սոցիալ-մշակութային չափմամբ՝ չափավոր ազատական:

Հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ խորացված պատկերացումներ իրենց կուսակցության գաղափարախոսության մասին հիմնականում արտահայտում են այն կանայք, որոնք գաղափարական հստակ հենք ունեցող կուսակցությունների անդամ են: Այդ դեպքերում կանանց պատասխանների մեջ արտացոլվում են ինչպես տվյալ կուսակցության գաղափարախոսական ուղղվածությունը, այնպես էլ անձնական վերաբերմունքը գաղափարախոսության հիմքը կազմող արժեքների նկատմամբ:

Հարցված կանանցից ոչ բոլորն են իրենց կուսակցության գաղափարախոսության մասին խոսելիս օգտագործում դասական տերմինաբանությունը (աջ, ձախ, կենտրոնամետ կամ ազատական, պահպանողական և այլն), շատերը գերադասում են ներկայացնել սեփական արժեհամակարգը բնութագրող գաղափարները՝ ժողովրդավարությունը, հայրենասիրությունը, սոցիալական արդարությունը, կայունությունը:

«Ինձ համար միակ գաղափարախոսությունը հայրենասիրությունն է:»
«Ինձ համար հայրենասիրությունն է ավելի առաջնահերթ, քան քաղաքական գաղափարախոսությունները:»
«Ինձ համար գոյություն ունի մեկ գաղափարախոսություն, և դա հզոր, ուժեղ, տնտեսապես կայուն հայրենիք ունենալն է:»
«Ես ժողովրդավարության կողմնակից եմ և տեսլական ունեմ համայնքը դարձնել բարեկեցիկ, սոցիալական համայնք:»

Դա ավելի շատ նկատվում է ոչ կուսակցական կանանց և այն կանանց պատասխաններում, որոնք համայնքային նշանակության նորաստեղծ կուսակցություններից են՝ ստեղծված ՏԻՄ ընտրությունների համամասնական ընտրակարգին անցնելուց անմիջապես հետո: Հետազոտությունները փաստում են, որ Հայաստանում պետական գրանցում ունեցող 119 կուսակցությունից 42-ը ստեղծվել կամ պետական գրանցում են ստացել 2018 թվականից հետո, ընդ որում՝ դրանց զգալի մասը ստեղծվել է 2021 թվականի խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններին ընդառաջ⁷⁰: Հետևապես հասկանալի է, որ այդ նորաստեղծ կուսակցությունները կարող էին պարզապես չհասցնել հստակեցնել իրենց գաղափարախոսությունները:

Շատ դեպքերում խոսքն ավելի շատ գնում է, թե ի՞նչ չափով է կուսակցության գաղափարախոսությունը հոգեհարազատ կանանց կողմից բարձրաձայնվող նպատակներին և գաղափարներին: Հատկապես դա բնորոշ է այն կանանց, որոնք ընտրվել են կուսակցության ընտրացուցակով, սակայն տվյալ կուսակցության անդամ չեն:

69 Քաղաքական գաղափարախոսությունների շերտերը Հայաստանում. «Քաղաքական կոմպասի» վերլուծության արդյունքները. https://www.political.am/storage/uploads/files/zekuyc_compass.pdf
70 կուսակցություններում գենդերային հավասարության և կանանց առաջընթացի ապահովման խնդիրներ. իրավիճակի գնահատման զեկույց. ՄԱԶԾ, 2024:

«Իմ հայացքները միշտ եղել են հայրենասիրական, ազգային, պահպանողական: Ես չեմ ընդունում լիբերալիզմը, այն այլասերվածությունը, որը գալիս է Եվրոպայից: Եվ ես կգնամ միայն այն ղեկավարի հետևից, որի հետ մեր քաղաքական հայացքները համընկնում են:»

«Եթե պետության ղեկավարը կամ կուսակցության ղեկավարը ունի նման գաղափար, այն կարծրատիպը, որ ես պետք է անպայման հավանություն տամ, ես դա չեմ ընդունում: Կարևորը գաղափարն է, ոչ թե անձը կամ կուսակցությունը:»

«Ես կարող եմ ինձ և՛ պետականամետ համարել, և՛ հայրենասեր, բայց, միևնույն ժամանակ, կարող եմ ունենալ իմ անձնական մոտեցումները և համամիտ չլինել որևէ մեկի հետ: Այսինքն՝ ես կուրորեն որևէ բանի չեմ հավատում, գաղափարախոսության մասով կարող եմ ասել, ինչը միանշանակ չէ ինձ համար:»

«Ես որևէ գաղափարախոսության չեմ ենթարկվում: Ոչ մեկին չեմ ենթարկվում, ես ինքս եմ որոշում:»

«Շատ հստակ պատասխան չեմ կարող տալ, կարող եմ ասել, թե ինչ գաղափարներ հավանեցի կուսակցության մեջ, օրինակ՝ բնապահպանական, սոցիալական բաղադրիչները:»

«Ես ավելի շատ պահպանողական քաղաքականության կողմնակից եմ, թեև որոշակի հարցերում խիստ լիբերալ մոտեցումներ ունեմ, բայց ազգային հարցերում՝ խիստ պահպանողական:»

Գաղափարախոսության համատեքստում հարցված կանանցից ոչ մեկը չի անդրադարձել գենդերային հավասարության գաղափարին: Այսինքն՝ այդ գաղափարը ոչ միայն բացակայում է կուսակցությունների ծրագրերում, ինչը հաստատվում է նաև հետազոտություններով⁷¹, այլև կուսակցությունների արժեհամակարգի մաս չի կազմում: Եզակի պատասխաններում են հիշատակվում հավասարությունը և հավասար հնարավորությունները որպես սոցիալիստական կամ մարդու իրավունքների գաղափարախոսության արժեք:

«Մարդու իրավունքների և նման հարցերում ես ընդգծված ձախական եմ, համարյա \$եմի՛խստ, բայց մյուս հարցերում ազատ շուկայական հարաբերությունների և չափավոր աջականության կողմնակից եմ: Հետևաբար՝ տարբեր դրվագներում տարբեր կերպ է դրսևորվում:»

Հարցազրույցները փաստում են, որ կուսակցության անդամ հանդիսացող կանանց մեծ մասը գիտակցում է, որ պարտավոր է կիսել տվյալ կուսակցության գաղափարախոսությունը: Ավելին, նրանք պատրաստ են իրենց գործողությունները նպատակաուղղել կուսակցության գաղափարների տարածմանը և իրագործմանը նույնիսկ այն դեպքերում, երբ կուսակցության անդամ դառնալու դրդապատճառները «իզմ»-երից դուրս են եղել:

Ուշագրավ է, որ «իզմ»-երից ձերբազատվելու հայտնի տեսակետը ներկայացվում է որպես լիբերալ մոտեցում գաղափարախոսության ընտրության հարցում, քանի որ, այնուամենայնիվ, հարցվածների կարծիքով, «շատ կարևոր է գաղափարներով առաջնորդվելը»: Հարցվածների պատասխանների մեջ արտացոլվել են իրենց կուսակցությունների կողմից բարձրաձայնվող, սակայն հստակեցման կարիք ունեցող գաղափարները կամ նոր գաղափարախոսության փնտրտույթները:

71 ՀՀ կուսակցությունների նախընտրական ծրագրերի վերլուծություն գենդերային հավասարության տեսանկյունից: Օքսֆորդ, 2022. https://oxygen.org.am/wp-content/uploads/2022/08/ANALYSIS-OF-ARME-NIA-POLITICAL-PARTY-PLATFORMS_Arm_June2022.pdf

«Քանի որ մեր կուսակցությունը ու մենք «իզմ»-երից դուրս գաղափարախոսություն ունենք, ես ավելի շատ կարգավորումների մեջ լիբերալիզմի կողմնակից եմ, որովհետև համարում եմ, որ հասարակական հարաբերություններն այնքան արագ են զարգանում, որ պետք չէ դրանք դնել կաղապարների մեջ և «իզմ»-երով սահմանափակել:»

«Մենք անընդհատ խոսում ենք գաղափարների հնացած լինելու մասին, որ «իզմ»-երը կարևոր չեն, բայց ես կարծում եմ, որ շատ կարևոր է գաղափարներով առաջնորդվել: «

«Ես կարծում եմ, որ բացի նրանից, որ մենք այս կամ այն կուսակցության ներկայացուցիչ ենք և, բնականաբար, կիսում ենք դրա արժեքները, բայց մենք պետք է ունենանք արժեքային համակարգ, որը համապատասխանում է այդ կուսակցության հիմնական արժեքներին, դառնանք դրա կրողը: «

Թեև հարցվածների պատասխանները թույլ չեն տալիս միանշանակ պնդել, որ գաղափարախոսության գործոնն է որոշիչ դեր խաղում այս կամ այն կուսակցությանն անդամակցելու կամ պարզապես դրա ընտրացուցակում ընդգրկվելու հարցում, սակայն, փորձագետների դիտարկմամբ⁷², փորձը ցույց է տալիս, որ հենց կուսակցության գաղափարախոսությանը համաձայն չլինելու հանգամանքը ամենահաճախ է բարձրաձայնվում կանանց կողմից որպես կուսակցությունից հեռանալու կամ մանդատը վայր դնելու հիմնական պատճառ: Բոլոր դեպքերում, Հայաստանում քաղաքական գաղափարախոսությունների կիրառման խնդիրը խորքային ուսումնասիրությունների կարիք ունի:

72 Փորձագետների ֆոկուս խմբային քննարկումից:



Մաս 2. Առաջնորդական հմտություններ ու բնութագրիչներ

Կանանց քաղաքական կարիերային նպաստող կամ խոչընդոտող գործոնների ուսումնասիրության համատեքստում կարևոր է հասկանալ, թե ինչպիսի անձնական հատկանիշներ, հմտություններ են անհրաժեշտ կանանց առաջընթացը քաղաքականության ոլորտում ապահովելու համար:

Այդ ուղղությամբ սույն հետազոտության շրջանակում հարցվածներին երկու հարց է առաջարկվել.

- Ո՞ր անձնական հատկանիշներն ու հմտություններն են կարևոր կանանց համար քաղաքականության ասպարեզում առաջ ընթանալու համար:
- Ինչպե՞ս կբնութագրեք ձեզ որպես քաղաքական գործիչ՝ հմտություններ, ռազմավարություն, մոտեցումներ:

2.1. Հմտություններ և անձնական որակներ

Հարցված կանայք իրենց պատասխաններում ընդգծել են մի շարք հատկանիշներ, հմտություններ ու որակներ, որոնք իրենց կարծիքով և փորձից ելնելով կարևոր են քաղաքականության մեջ առաջընթացի համար:

Հաստատակամություն և նպատակասլացություն. շատերը նշում են, որ քաղաքական դաշտում կանայք պետք է լինեն համառ, ունենան հստակ նպատակներ և չընկրկեն դժվարությունների առաջ:

«Եթե չես հավատում քո ուժերին, քաղաքական դաշտը քեզ արագ կկլանի: Պետք է լինես հաստատակամ ու չվախենաս ձախողումից:»

«Եթե կինը չունի հստակ նպատակ, քաղաքականությունը նրան կկորցնի: Պետք է հավատալ, որ դու կարող ես իրավիճակը փոխել:»

Հաղորդակցման հմտություններ և վստահություն. կարևորվում է հանրային խոսքի, բանակցելու, լսելու և համոզելու կարողությունը: Վստահությունը սեփական ուժերի նկատմամբ նույնպես դիտարկվում է որպես առաջընթացի գրավական:

«Կանայք հաճախ ունեն լավ գաղափարներ, բայց չեն համարձակվում բարձրաձայնել: Վստահությունը սեփական ձայնի նկատմամբ շատ կարևոր է:»

«Քաղաքական դաշտում առանց հաղորդակցման հմտությունների հնարավոր չէ առաջ գնալ:»

«Պետք է կարողանաս լսել, հասկանալ և միավորել:»

«Կանայք ավելի լավ են աշխատում թիմում և կարողանում են կառուցել վստահություն:»

Այս հմտությունները հաճախ դիտարկվում են որպես «փափուկ» հմտություններ, սակայն հարցազրույցները ցույց են տալիս, որ դրանք իրականում կարևոր են քաղաքականության մեջ կայուն և ներառական գործընթացներ ապահովելու համար:

Բարձր պատասխանատվության զգացում և ազնվություն. քաղաքականության մեջ կանանց հաջողությունը կապվում է նաև բարոյական արժեքների, ազնվության և հանրային շահի նկատմամբ նվիրվածության հետ:

«Քաղաքականությունը պետք է հիմնված լինի ազնվության վրա: Կինը, որ ազնիվ է իր ընտրողների հետ, միշտ կունենա աջակցություն:»

Կազմակերպչական և վերլուծական հմտություններ. քաղաքական գործընթացներում կարևոր է կարողանալ համակարգել թիմեր, վերլուծել իրավիճակներ և կայացնել ռազմավարական որոշումներ:

«Կինը, որ կարողանում է վերլուծել իրավիճակները և արագ կողմնորոշվել, ունի առավելություն քաղաքականության մեջ:»

Զգայունություն սոցիալական խնդիրների նկատմամբ. կանայք հաճախ ունեն համայնքային կարիքների խորքային ընկալում, ինչը դիտարկվում է որպես քաղաքական ակտիվության խթան:

«Կանայք հաճախ ավելի զգայուն են համայնքային խնդիրների հանդեպ, ինչը նրանց դարձնում է լավ քաղաքական գործիչներ:»

«Կանայք հաճախ ավելի խոր են զգում համայնքի խնդիրները: Դա նրանց դարձնում է ավելի մոտ ժողովրդին:»

Այս հմտությունները, թեև հաճախ անտեսվում են քաղաքականության մեջ, իրականում կարող են մեծ արժեք ներկայացնել՝ հատկապես սոցիալական քաղաքականությունների մշակման և հանրային վստահության ձևավորման տեսանկյունից:

Հետաքրքրական է, որ ավագանիներում ընդգրկված կանայք, համաձայնելով Ազգային ժողովի պատգամավորների կարծիքին, այնուամենայնիվ ընդգծում են, որ քաղաքականության մեջ հաջողելու համար անհրաժեշտ են ոչ միայն գիտելիքներ և փորձ, այլև հոգեբանական պատրաստվածություն:

Համբերություն և դիմացկունություն

«Քաղաքականությունը հեշտ ճանապարհ չէ: Համբերությունն ու դիմացկունությունը շատ կարևոր են, հատկապես երբ բախվում ես անհավասար վերաբերմունքի:»

Ըստ էության, հարցված կանայք իրենց պատասխաններում թվարկել են եթե ոչ բոլոր, բայց հիմնականում այն հմտությունները, որոնցով բնութագրվում է առաջնորդությունը: Հատկանշական է, որ «Հարվարդի բիզնես սկոլարս»-ի հետազոտության տվյալներով՝ կանայք առաջնորդության 19 հմտություններից 17-ում գերազանցում են տղամարդկանց⁷³: Մասնավորապես, կանայք գերազանցել են տղամարդկանց նախաձեռնողականության, ճկուն

73 Harvard Business Review research: Women Score Higher Than Men in Most Leadership Skills, , June 25, 2019 <https://hbr.org/2019/06/research-women-score-higher-than-men-in-most-leadership-skills>

գործելու, ինքնազարգացմամբ զբաղվելու, արդյունքներ գրանցելու, առավել մեծ պարկեշտություն ու ազնվություն ցուցաբերելու հատկանիշներով: Տղամարդիկ ավելի բարձր գնահատական են ստացել միայն ռազմավարական մտածողության և տեխնիկական/մասնագիտական փորձի համար:

Արդյունքները համահունչ են Հայաստանում անցկացված կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ **Միջազգային հանրապետական ինստիտուտի և Բրեվիս ընկերության հարցման արդյունքներին**⁷⁴, ըստ որոնց կանայք գերազանցում են կամ հավասար են տղամարդկանց քաղաքական գործիչներին սովորաբար վերագրվող 10 բնութագրից 7-ով, մասնավորապես՝ ապրումակցելու, լսելու, հաղորդակցվելու ունակություններով, ազնվությամբ և անկաշառելիությամբ, նպատակասլացությամբ, կրթվածությամբ, բարոյական հատկանիշներով: Տղամարդիկ գերազանցում են կանանց ղեկավարման հմտություններով, փորձով և ուժային հատկանիշներով: Ըստ փորձագետների գնահատականների՝ կանանց առաջընթացին հաճախ խանգարում է ոչ թե կարողությունների պակասը, այլ՝ հնարավորությունների բացակայությունը:

2.2. Ինքնաբնութագրում՝ որպես քաղաքական գործիչ

Հարցված կանայք իրենց բնութագրում են որպես սկզբունքային, արժեքային առաջնորդներ, թիմային աշխատողներ, ռազմավարական մտածողությամբ և հանրային խնդիրների հանդեպ զգայուն գործիչներ:

«Ես առաջնորդվում եմ սկզբունքներով, ոչ թե շահերով: Դա ինձ օգնում է պահպանել վստահությունը:»

«Իմ ուժը թիմային աշխատանքն է: Ես կարողանում եմ միավորել տարբեր խմբեր ընդհանուր նպատակի շուրջ:»

«Ես քաղաքական գործիչ եմ, որը նախ լսում է, հետո խոսում: Դա իմ մոտեցումն է՝ հարգանքով մարդկանց հանդեպ:»

«Սկզբունքայնությունը, հետևողականությունը և թիմի անդամ լինելը շատ եմ կարևորում:»

Դատելով պատասխաններից՝ կարելի է արձանագրել, որ կանայք իրենց քաղաքական ինքնությունը կառուցում են ոչ թե մրցակցային, այլ համագործակցային և արժեքային հենքի վրա:

Ռազմավարություն և մոտեցումներ

Կանայք հաճախ նշում են, որ իրենց ռազմավարությունը հիմնված է հանրությանը ականջալուր լինելու, փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու, համայնքային մոտեցման և երկարաժամկետ ազդեցության վրա:

74 Public Opinion Survey on Women's Issues: Residents of Armenia, IRI / Breavis 2021 https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/womens_political_participation_breavis_iri_results_presentation_final_07.01.2021.pdf

«Ես նախ լսում եմ մարդկանց, հետո միայն առաջարկում լուծումներ: Դա է իմ ռազմավարությունը:»

«Իմ մոտեցումը հիմնված է համայնքի ներգրավման վրա: Առանց մարդկանց, քաղաքականությունը դատարկ է:»

«Իմ գործելաոճը հիմնված է վստահության վրա: Եթե մարդիկ չեն վստահում, ոչ մի ռազմավարություն չի աշխատի:»

Փաստորեն հարցված կանայք իրենց քաղաքական ռազմավարությունը կառուցում են ներքևից վերև մոտեցմամբ՝ շեշտադրելով հանրության մասնակցությունը և վստահության ձևավորումը: Կանայք իրենց բնութագրում են որպես համագործակցային, սկզբունքային և հանրային խնդիրների հանդեպ զգայուն գործիչներ՝ ռազմավարությունը կառուցելով ոչ թե իշխանության, այլ ներգրավման և վստահության հիման վրա: Սա վկայում է, որ կանանց քաղաքական առաջնորդության մոդելը տարբերվում է ավանդական, հիերարխիկ մոտեցումներից՝ առաջարկելով ավելի ներառական և արժեքային քաղաքականություն: Այս տեսակետը հաստատվում է նաև մի շարք միջազգային հետազոտություններով⁷⁵:

75 Gender and evaluations of leadership behaviors: A meta-analytic review of 50 years of research. The Leadership Quarterly <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S1048984324000511>



Մաս 3. Քաղաքականության մեջ հաջողության ընկալում

Հարցվածների կողմից քաղաքականության մեջ հաջողության ընկալման, ինչպես նաև հաջողված կին քաղաքական գործիչների դերային մոդելների բացահայտմանն էին միտված հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է կին քաղաքական գործիչի հաջողությունը, և ո՞ր գործոններն են նպաստում դրան:
- Կա՞ն կին քաղաքական գործիչ, որին համարում եք օրինակելի: Ինչո՞ւ:

Պատասխանները թույլ են տալիս որոշակի եզրակացություններ անել այն մասին, թե ինչպես են կանայք ընկալում քաղաքական հաջողությունը, ինչ արժեքներ են կապում դրա հետ, և ինչպիսի օրինակելի կերպարներ են ձևավորում իրենց փորձի և դիտարկումների հիման վրա:

3.1. Կին քաղաքական գործիչների հաջողության բանաձևերը

Հաջողությունը՝ որպես հանրային վստահություն և ազդեցություն. Հարցված կանայք քաղաքական հաջողությունը հաճախ կապում են հանրային վստահության, ազդեցության և հանրային շահի առաջնորդման հետ:

«Հաջողությունն այն է, երբ մարդիկ վստահում են քեզ, լսում են քո կարծիքը և տեսնում արդյունքները:»

«Կին քաղաքական գործիչի հաջողությունը չափվում է ոչ թե պաշտոնով, այլ նրանով, թե որքանով է նա կարողացել ազդել քաղաքական օրակարգի վրա:»

«Իմ համար հաջողությունն այն է, երբ քո խոսքը լսվում է, երբ կարողանում ես ազդել որոշումների վրա՝ նույնիսկ առանց պաշտոն ունենալու:»

«Հաջողությունն այն չէ, որ դու ԱԺ-ում ես, այլ այն, որ մարդիկ քեզ ճանաչում են որպես արդար և հետևողական գործիչ:»

«Քաղաքականությունը լուծումներ գտնելու արվեստ պետք է համարել, և, ըստ այդմ, եթե դու քննադատությունից բացի խնդիրների լուծումներ և դրանց հասնելու ուղիներ ես նախանշում, ապա որպես քաղաքական գործիչ հաջողելու հավանականությունը մեծանում է:»

Ի դեպ՝ հարցված կանայք հաճախ նշում են ոչ ֆորմալ ազդեցությունը՝ համայնքային ներգրավվածություն, քաղաքական օրակարգի ձևավորում, հանրային վստահություն:

Հաջողությունը՝ որպես արժեքային առաջնորդություն. բազմաթիվ կանայք հաջողությունը դիտարկում են որպես արժեքներին հավատարմություն և հանրային փոփոխության նախաձեռնություն:

«Ինձ համար հաջողությունն այն է, երբ կարողանում ես փոխել մարդկանց մտածելակերպը գենդերային հավասարության հարցում:»

«Կինը հաջողակ է, երբ կարողանում է իր արժեքները բերել քաղաքականություն և չկորցնել ինքնությունը:»

Շատերը ընդգծում են նաև, որ հաջողությունը նշանակում է սեփական արժեքներին հավատարիմ մնալ, սկզբունքայնություն ցուցաբերել՝ անկախ որևէ ճնշումներից:

«Կինը հաջողակ է, երբ չի կորցնում իր սկզբունքները, նույնիսկ երբ դա նշանակում է դուրս գալ համակարգից:»

«Իմ հաջողությունն այն է, որ կարողացել եմ պահպանել ազնվությունս, նույնիսկ երբ դա ինձ արժեցել է պաշտոն:»

«Ցանկացած քաղաքական գործչի հաջողությունը դա իր խոսքի արժեքն է:»

Փաստորեն, արժեքային առաջնորդությունը դիտարկվում է որպես հաջողության առանցքային չափանիշ, հատկապես կանանց համար, որոնք քաղաքականության մեջ փոփոխությունների շարժիչ ուժ են համարվում:

Հաջողությունը՝ որպես սոցիալական ազդեցություն և համայնքային փոփոխություն. որոշ կանայք հաջողությունը կապում են կոնկրետ սոցիալական արդյունքների հետ՝ համայնքի խնդիրների լուծում, կանանց իրավունքների պաշտպանություն, կրթական բարեփոխումներ:

«Իմ հաջողությունն այն է, որ կարողացել եմ համայնքում ստեղծել կանանց աջակցության ցանց:»

«Հաջող եմ, երբ տեսնում եմ, որ իմ նախաձեռնությամբ գյուղում աղջիկները սկսում են մասնակցել համայնքային նիստերին:»

Տվյալ դեպքում հաջողությունը դիտարկվում է համայնքի մակարդակում՝ որպես իրական փոփոխություն, ոչ թե «վերևից ներքև» իրականացված ազդեցություն:

Հաջողությանը նպաստող գործոնների թվում կանայք կարևոր են համարում կրթությունը, մասնագիտական փորձը, վստահելի ցանցերը և հանրային ճանաչումը: Ի դեպ՝ հարցված կանայք հաճախ հաջողության հասնելու ճանապարհին ապավինում են ոչ միայն անձնական ջանքերին, այլ նաև կանանց միջև փոխաջակցության հնարավորությանը:

«Կրթությունը, փորձը և թիմի աջակցությունը այն գործոններն են, որոնք ինձ օգնել են կայանալ:»

«Եթե չունես վստահելի ցանց, շատ դժվար է առաջ գնալ: Հաջողությունը միայն անձնական ջանքով չի գալիս:»

«Իմ կրթությունը ինձ տվել է այն վստահությունը, որ կարող եմ խոսել հավասարը հավասարի պես:»

«Մենթորներ ունենալը շատ կարևոր է: Ես հաջողել եմ, որովհետև ինձ աջակցել են փորձառու կանայք:»

«Ես երբեք չեմ համարել մյուս կանանց մրցակիցներ: Մենք բոլորս նույն ճանապարհով ենք գնում:»

3.2. Քաղաքականության մեջ կանանց համերաշխության մասին պատկերացումները

Կանանց միջև փոխաջակցությունը հարցվածները կարևորել են նաև «կանանց համերաշխության» մասին իրենց ընկալումները ներկայացնելիս: Ոմանք այդ առիթով հիշատակել են ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հայտնի խոսքը⁷⁶, որ դժոխքում հատուկ տեղ կա այն կանանց համար, որոնք չեն օգնում մյուս կանանց:

Քաղաքականության մեջ կանանց «համերաշխությունը» որպես փոխաջակցության, մենթորության և համատեղ պայքարի դրսևորում, Հայաստանում ամբողջությամբ փաստագրված չէ, սակայն մի շարք ուսումնասիրություններ, քաղաքական գործընթացների վերլուծություններ վկայում են դրա դրսևորումների մասին:

Օրինակ՝ «ՕքսեՋեն» հիմնադրամի «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին» հետազոտությունը⁷⁷ փաստում է, որ կանանց խմբերը՝ հատկապես ՏԻՄ մակարդակում, հաճախ գործում են որպես փոխաջակցող ցանցեր, կիսում են փորձը, միմյանց մենթորություն են անում և համատեղ հանդես են գալիս քաղաքական նախաձեռնություններով. «ՏԻՄ-երում ընտրված կանայք հաճախ ձևավորում են ոչ ֆորմալ խմբեր՝ միմյանց աջակցելու, փորձ փոխանակելու և համայնքային խնդիրները համատեղ բարձրաձայնելու համար»⁷⁸:

ԵՊՀ միջազգային հարաբերությունների հանդեսում քաղաքականության մեջ կանանց խնդիրներին նվիրված հոդվածում նշվում է, որ կանանց քաղաքական ակտիվությունը Հայաստանում հաճախ ուղեկցվում է մշակութային համերաշխությամբ, որը ձևավորվում է ընդհանուր մարտահրավերների և զենդերային խոչընդոտների դեմ պայքարի արդյունքում. «Կանանց քաղաքական ակտիվությունը Հայաստանում հաճախ դիտվում է որպես համատեղ պայքար՝ ոչ միայն անձնական առաջընթացի, այլ նաև սեռերի հավասարության հաստատման համար»⁷⁹:

Սույն հետազոտության մասնակիցները նույնպես դիտարկում են համերաշխությունը քաղաքականության մեջ որպես փոխաջակցություն, փորձի փոխանակում, միմյանց առաջ մղելու պատրաստակամություն և ընդհանուր արժեքների շուրջ միավորում, այսինքն՝ նրանց պատկերացումներում կանանց համերաշխությունը կանանց միասնական հաջողության գրավականն է:

«Կանանց համերաշխությունը նշանակում է չմրցել, այլ աջակցել միմյանց՝ հատկապես դժվար պահերին:»

«Համերաշխությունն այն է, երբ կին գործիչները միմյանց չեն խանգարում, այլ օգնում են բարձրանալ:»

«Կանանց համերաշխությունը կանանց ներգրավվածությունը խթանող կարևորագույն գործիքներից մեկը պետք է լինի, եթե բավարար չափով իրացվի:»

76 Madeleine Albright (Keynote speech at Celebrating Inspiration luncheon with the WNBA's All-Decade Team, 2006)

77 «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին». հետազոտություն, ՕքսեՋեն, 2021. <https://havas-ar-infohub.am/hamaynqner/>

78 [Նույն տեղում](#)

79 «Կանայք քաղաքականության մեջ. կարծրատիպեր և արդիականություն» (ԵՊՀ գիտական հանդես) www.journals.yasu.am

Ի դեպ՝ կանայք համերաշխությունը դիտարկում են ոչ միայն որպես քաղաքական գործիք, այլև որպես մշակութային արժեք, որը հակադրվում է մրցակցային և հիերարխիկ մոդելներին:

«Մենք բոլորս անցնում ենք նույն ճանապարհով: Եթե համերաշխություն չլինի, շատերը պարզապես դուրս կմնան:»

«Համերաշխությունը նաև ներառում է չղատել, չնսեմացնել, այլ՝ հասկանալ և ուժ տալ:»

Հարցված կանայք առաջարկում են տարբեր ձևաչափեր՝ համերաշխությունը քաղաքականության մեջ գործուն դարձնելու համար:

Համերաշխության ձևաչափեր	Հաստատող օրինակները
Փոխաջակցող ցանցեր	<ul style="list-style-type: none"> Կանանց ցանցերը կարող են դառնալ այն հարթակը, որտեղ փորձառու կանայք աջակցում են սկսնակներին:
Մենթորություն և փորձի փոխանցում	<ul style="list-style-type: none"> Ինձ շատ են օգնել այն կանայք, որոնք արդեն անցել են այդ ճանապարհով: Դա ինձ ուժ է տվել: Իմ գործունեության ողջ ընթացքում շատ մեծ ու անգնահատելի աջակցություն եմ զգացել իմ կին գործընկերների կողմից՝ հենց կանանց համերաշխության գաղափարի ծիրում: Ինքս էլ ինձանից հետո ԱԺ եկած կանանց փորձել եմ օգնել, խրախուսել: Իմ կարծիքով՝ քաղաքականությունը այն քիչ տեղերից է, որտեղ կանանց համերաշխությունը շատ ընդգծված երևում է:
Համատեղ նախաձեռնություններ և օրենսդրական համագործակցություն	<ul style="list-style-type: none"> Մենք մի քանի կին պատգամավորներով միասին ենք աշխատել գենդերային օրենսդրության բարելավման ուղղությամբ: Համատեղ նախաձեռնությունները ոչ միայն ուժ են տալիս, այլ նաև ցույց են տալիս, որ կանայք կարող են միասին գործել:
Տարածքային և համայնքային մակարդակում կանանց խմբերի ձևավորում	<ul style="list-style-type: none"> Համայնքներում կանանց խմբերը կարող են դառնալ փոփոխության շարժիչ ուժ: ՏԻՄ մակարդակում կանայք պետք է միավորվեն՝ միմյանց պաշտպանելու և առաջ մղելու համար:

Հարցազրույցները վկայում են, որ կանանց համերաշխությունը քաղաքականության մեջ ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ պայման է՝ գենդերային կարծրատիպերով պայմանավորված խոչընդոտները հաղթահարելու համար: Կանայք գործում են մի միջավայրում, որտեղ հաճախ բխվում են կարծրատիպերի, ինստիտուցիոնալ փակ համակարգերի և մեդիաթիրախավորման: Այդ համատեքստում համերաշխությունը դիտարկվում է որպես ռազմավարական ռեսուրս՝

- սոցիալական կապերի ամրապնդման,
- հոգեբանական տոկունության,
- գենդերային օրակարգի առաջնդման,
- կանանց քաղաքական ազդեցության կայացման համար:

Սույն հետազոտության շրջանակում անցկացված ֆոկուս խմբի փորձագետների դիտարկմամբ՝ Հայաստանի քաղաքական դաշտում «կանանց համախմբվածության օրինակները դեռևս սակաթիվ են», «կանայք միշտ չէ, որ միասնական և կոշտ դիրքորոշում են ցուցաբերում իրենց գործընկեր կանանց սեռի հատկանիշով թիրախավորելու դեպքերում, և հաճախ իրենց դիրքորոշումը պայմանավորված է լինում կուսակցական պատկանելիությամբ»: Ի հետևանք՝ սեքսիզմի դրսևորումները քաղաքական դաշտում անպատժելի են մնում:

Թեև հարցված կին քաղաքական գործիչների որոշ պատասխաններում նկատվում է թերահավատություն, որ կանանց համերաշխությունը հնարավոր է դրսևորել քաղաքական ծայրահեղ դիրքորոշումների պարագայում, այնուամենայնիվ, հարցվածների մեծ մասը լավատեսորեն է տրամադրված: Հատկանշական է, որ հիմնականում մարզերում բնակվող կանայք են համերաշխության հաջողված օրինակներ բերում: Օրինակ՝ երբ համայնքներից մեկում ընդդիմադիր և իշխանության դաշտի կին ավագանիները միացել էին ի պաշտպանություն առավելագույն ձայներ ստացած թեկնածուի, կարևոր դեր է խաղացել այն հանգամանքը, որ այդ կանայք որպես կայացած մասնագետներ էին հեղինակություն վայելում իրենց համայնքում և մինչև ավագանի դառնալն են շփումներունեցել իրար հետ: Այսինքն՝ կանանց որպես մասնագետ, քաղաքական գործիչ կամ առաջնորդ կայացած լինելու հանգամանքը բարձրացնում է նրանց անկախ կուսակցական պատկանելիությունից համախմբման և որևէ հարցի շուրջ միասնական դիրքորոշում ցուցաբերելու հավանականությունը:

«Կարծում եմ, մեր միասնականության պատճառն այն էր, որ մենք բոլորս, մինչև ավագանու անդամ դառնալը, մեր ոլորտներում կայացած մարդիկ ենք եղել, և միմյանց հետ շփում ենք ունեցել մինչև ավագանիում համատեղ աշխատանքը: Բացի այդ, կարծում եմ, ի տարբերություն տղամարդկանց, կանայք երբեք հարցը դեպի թշնամություն չեն տանում, շատ ավելի կառուցողական են մոտենում կոնֆլիկտային հարցերին:»

Ընդհանուր առմամբ, կանայք կարևորում են համերաշխության գաղափարի իրագործումը՝ նշելով, որ համերաշխությունը պետք է լինի ոչ միայն հռչակված արժեք, այլև գործնական մոտեցում՝ ցանցերի, մենթորության, համագործակցության և քաղաքական համախմբման միջոցով:

3.3. Կին քաղաքական գործիչների օրինակելի կերպարներ

Միջազգային մի շարք հետազոտություններում անդրադարձ է կատարվում այն հարցին, թե ո՞ր կին քաղաքական գործիչներն են առավել հաճախ հիշատակվում հանրային հարցումներում՝ որպես օրինակելի առաջնորդներ⁸⁰: Օրինակ՝ Նոր Զելանդիայի նախկին վարչապետ Զասինդա Արդերնը, Գերմանիայի նախկին կանցլեր Անգելա Մերկելը և ԱՄՆ նախկին փոխնախագահ Քամալա Հարիսը հաճախ հիշատակվում են որպես օրինակելի կին առաջնորդներ՝ իրենց ճգնաժամային կառավարման, հանրային հաղորդակցության և արժեքային առաջնորդության շնորհիվ:

Նմանատիպ ուսումնասիրությունները ոչ միայն վկայում են դերային մոդելների հանրային ընկալման մասին, այլ նաև բացահայտում են այն հատկանիշները, որոնց հիման վրա կանայք ճանաչվում են որպես հաջողակ քաղաքական գործիչներ:

Արևելյան գործընկերության երկրներում կարծրատիպերի ելակետային ուսումնասիրության⁸¹ շրջանակում Հայաստանում հարցվածներից մեկ երրորդը պատանեկության տարիներին չի ունեցել կին դերային մոդել, որով հիացել է կամ ցանկացել է նրան նմանվել: Որպես կնոջ օրինակելի կերպար հարցվածները ամենաշատը նշել են ընտանիքի անդամներին, դպրոցի ուսուցչուհիներին և հայտնի դերասաններին և աստղերին, հետո նոր կին քաղաքական գործիչներին:

Սույն հետազոտության շրջանակում հատկանշական է, որ թեև քաղաքականության մեջ օրինակելի կերպարների մասին հարցին ի պատասխան հարցված կանայք հիմնականում հիշատակել են ողջ աշխարհում հայտնի կին քաղաքական գործիչներին (օրինակ՝ Մարգարետ Թետչեր, Անգելա Մերկել, Գոլդա Մեիր), սակայն հարցվածներից մի քանիսը նշել են իրենց իսկ գործընկերներ կանանց անունները:

Հարցված կանանց համար օրինակելի են այն կին գործիչները, որոնք, իրենց կարծիքով, ազնիվ են, սկզբունքային, հետևողական , գործում են հանրային շահի հիման վրա:

<p>Օրինակելիությունը՝ որպես արժեքային և բարոյական առաջնորդություն</p>	<p>X.X.-ը ինձ համար օրինակ է, որովհետև երբեք չի շեղվել իր արժեքներից՝ անկախ քաղաքական ճնշումներից:</p> <p>YY.-ը ինձ համար օրինակելի է, որովհետև կարողանում է համադրել մասնագիտական խորությունը և հանրային մոտեցումը:</p>
--	--

80 [Inspiring the Future: The Influence of Historical and Contemporary Role Models on Women's Leadership Paths](#) (Al Naqbi, 2023)
[Theorizing compassionate leadership from the case of Jacinda Ardern: Legitimacy, paradox and resource conservation](#). ResearchGate, 2021
[Before Prime Minister: Margaret Thatcher, Angela Merkel, and Gendered Party Leadership Contests](#). *Politics & Gender* . Cambridge University Press: 2015

81 Baseline study on gender norms and stereotypes in the countries of the Eastern Partnership, UN Women/ UNFPA, 2022 <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2022/03/baseline-study-on-gender-norms-and-stereotypes-in-the-countries-of-the-eastern-partnership>

<p>Օրինակելիությունը՝ որպես պայքարի և դիմացկունության խորհրդանշան</p>	<p>Ես հիանում եմ այն կանանցով, որոնք անցել են դժվարին ճանապարհ, բայց չեն նահանջել: Դա է իրական օրինակելիությունը:</p> <p>Օրինակելի կին քաղաքական գործիչը նա է, ով կարողացել է հաղթահարել համակարգային խոչընդոտները և հավատարիմ մնալ իր սկզբունքներին:</p>
--	---

Վերլուծությունը ցույց է տալիս, որ օրինակելի կին քաղաքական գործիչի մասին պատասխանները սերտորեն կապված են քաղաքականության մեջ հաջողության պատկերացումների հետ: Հարցված կանայք քաղաքական հաջողությունը դիտարկում են ոչ թե որպես իշխանության հասնելու միջոց, այլ՝ որպես հանրային ազդեցության, արժեքային առաջնորդության և սոցիալական փոփոխության գործիք: Նրանք օրինակելի են համարում այն կանանց, որոնք կարողացել են համադրել մասնագիտական կարողությունները, հանրային նվիրվածությունը և գաղափարական պայքարը:

Ընդհանուր առմամբ, կանանց քաղաքական հաջողության ընկալումը Հայաստանում ձևավորվում է հանրային վստահության, արժեքային առաջնորդության և սոցիալական ներգրավվածության համադրությամբ: Օրինակելի գործիչները դիտարկվում են ոչ միայն պաշտոնի, այլև՝ պայքարի, ազնվության և հանրային նվիրվածության հիման վրա:



Մաս 4. Կանանց քաղաքական առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոններ

Հարցազրույցները բացահայտում են, որ կանայք քաղաքականության մեջ գործում են մի միջավայրում, որտեղ հաջողությունը հաճախ պահանջում է ոչ միայն հմտություններ, այլ նաև դիմացկունություն՝ մշակութային կարծրատիպերը, ընտանեկան պարտականությունների և ինստիտուցիոնալ խոչընդոտները հաղթահարելու համար:

Հարցվածները ներկայացրել են կանանց քաղաքական առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոնների մասին ընդհանուր պատկերացումները և իրենց անձնական փորձառությունն այդ ուղղությամբ՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ի՞նչ գործոններ կամ պայմաններ կարող են նպաստել կամ խոչընդոտել կանանց քաղաքական առաջընթացին:
- Ի՞նչ փորձառություն եք ձեռք բերել քաղաքականության մեջ, ներկայացրեք դրական և բացասական կողմերը:

4.1. Նպաստող և խոչընդոտող գործոնների ընկալումները

Կին քաղաքական գործիչների հարցազրույցներում առանձնանում են մի շարք համակարգային և միջավայրային գործոններ, որոնք կարող են նպաստել կանանց քաղաքական առաջընթացին կամ խոչընդոտել այն:

Նպաստող գործոններ

Կրթություն և մասնագիտական զարգացում. բարձրագույն կրթությունը, հատկապես հանրային կառավարման, իրավունքի և սոցիալական գիտությունների ոլորտում, դիտարկվում է որպես կարևոր նախադրյալ:

«Իմ քաղաքական ճանապարհը սկսվեց այն պահից, երբ սկսեցի ուսումնասիրել հանրային քաղաքականություն: Կրթությունը բացեց դռներ:»

«Իմ կրթությունը իրավագիտության ոլորտում ինձ տվել է այն գործիքները, որոնցով կարող եմ պաշտպանել իմ դիրքորոշումը:»

Ցանցեր և մենթորություն. կանանց համար կարևոր է ունենալ աջակցող շրջապատ և ցանցեր՝ կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների շրջանակում: Ըստ իրենց՝ մենթորների առկայությունը և աջակցությունը կարող են մեծապես նպաստել իրենց առաջընթացին:

«Եթե չունես աջակցող ցանց, շատ դժվար է առաջ գնալ: Ինձ շատ են օգնել այն կանայք, որոնք արդեն անցել են այդ ճանապարհով:»

Մեդիայում տեսանելիություն և հանրային ճանաչում. մեդիայի միջոցով կանայք կարող են բարձրացնել իրենց տեսանելիությունը, ներկայացնել իրենց դիրքորոշումները և ձևավորել հանրային վստահություն:

«Մեդիան կարող է լինել հարթակ, որտեղ կինը ներկայացնում է իր դիրքորոշումը և ձևավորում վստահություն:»
«Երբ մարդիկ ճանաչում են քեզ որպես ազնիվ և աշխատասեր մարդ, նրանք պատրաստ են վստահել նաև քո քաղաքական որոշումների:»

Միջազգային ծրագրեր և փորձ. մասնակցությունը միջազգային կրթական, քաղաքական կամ փորձի փոխանակման ծրագրերին դիտարկվում է որպես հզոր խթան:

«Մասնակցությունը միջազգային ծրագրերին ինձ օգնեց տեսնել, որ կանայք ամենուր պայքարում են նույն խնդիրների դեմ:»

Մասնակցություն քաղաքացիական նախաձեռնություններին. իրավապաշտպան գործունեության փորձը, համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ նպաստում է մարդու իրավունքների պաշպանությանն ուղղված օրենսդրական նախաձեռնություններին:

«Քաղաքացիական հասարակության մեջ ակտիվ լինելը ինձ օգնեց հասկանալ քաղաքականության մեխանիզմները:»

Գենդերային քվոտաներ. կանանց քաղաքական առաջընթացը խթանելու արդյունավետ գործիք համարվող գենդերային քվոտաների կիրառումը արդեն իսկ նպաստել է խորհրդարանում և ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության աճին, սակայն կանանց հետագա առաջընթացն ապահովելու և գենդերային կարծրատիպերը հաղթահարելու հարցում քվոտաները բավարար միջոց չեն համարվում⁸²:

«Մտավախություն ունեմ, որ եթե չլինի քվոտավորումը, շատ քիչ թվով կանայք են հայտնվելու տարբեր կուսակցությունների նախընտրական ցուցակներում:»
«Մասնակցության տեսանկյունից որոշակի հավասարություն ապահովելու առումով միանշանակ դրական եմ գնահատում քվոտաների գոյությունը, բայց ես դա բավարար չեմ համարում և տեսնում եմ շատ բացասական երևույթներ:»

Հարցազրույցները հաստատում են, որ Հայաստանում կանայք ունեն մեծ ներուժ քաղաքականության մեջ ընդգրկվելու համար, սակայն նրանց առաջընթացը պայմանավորված է ինչպես անձնական որակներով, այնպես էլ համակարգային աջակցությամբ: Հաջողության համար անհրաժեշտ է ոչ միայն զարգացնել հմտություններ, այլ նաև ձևավորել միջավայր, որը կնպաստի կանանց լիարժեք ներգրավմանը՝ կրթական, ֆինանսական, ցանցային և մշակութային մակարդակներում:

82 Կանանց քաղաքական մասնակցության խթանումը . քաղաքականության համառոտագիր ՕքսեՋեն հիմնադրամ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր 2022թ. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief-to-Support-Women-Political-Participation-Nov-2022-Final-Arm.pdf>

Կանանց քաղաքական առաջընթացը խոչընդոտող գործոններ

Հարցազրույցներում կանայք հանգամանորեն անդրադարձել են նաև այն գործոններին, որոնք կարող են **խոչընդոտել կանանց քաղաքական առաջընթացը**:

Ֆինանսական ռեսուրսների սահմանափակում. քաղաքական գործունեությունը հաճախ պահանջում է ֆինանսական ներդրումներ, ինչը կարող է սահմանափակել կանանց մասնակցությունը, հատկապես մարզային այն համայնքներում, որտեղ դեռ գործում է մեծամասնական ընտրակարգը: Պարզ համամասնական ընտրակարգի պայմաններում այդ գործոնի ազդեցությունը թուլանում է:

«Քաղաքական մասնակցությունը հաճախ կապված է ֆինանսական ծախսերի հետ, ինչը սահմանափակում է շատ կանանց:»

«Ֆինանսական ռեսուրսներն այսօրվա գործող պարզ համամասնական ընտրական համակարգի պայմաններում թերևս այդքան էլ կարևոր չեն: Իսկ մեծամասնականի պարագայում իսկապես անհրաժեշտ է ֆինանսական անկախություն, որպեսզի հատկապես կանայք հնարավորություն ունենան առաջադրվելու:»

Սոցիալական կարծրատիպեր և մշակութային արգելքներ. հարցազրույցներում հաճախ շեշտվում է, որ կանայք բախվում են հասարակության ձևավորած կարծրատիպերի՝ կապված առաջնորդության, որոշումների կայացման և հանրային դերի հետ:

«Մեր հասարակությունում դեռ կա այն պատկերացումը, որ կինը պետք է մնա ընտանիքում, ոչ թե զբաղվի քաղաքականությամբ:»

Ընտանեկան պարտականությունների բեռ. կանանց քաղաքական ակտիվությունը հաճախ սահմանափակվում է ընտանեկան պարտականությունների պատճառով, հատկապես երբ չկա աջակցող միջավայր:

«Քաղաքական ակտիվությունը հաճախ բախվում է ընտանեկան պարտականությունների հետ: Եթե չկա աջակցություն, շատ դժվար է համատեղել:»

Կուսակցական փակ համակարգեր. կուսակցությունների ներսում որոշումների կայացման գործընթացների փակ լինելը կարող է խոչընդոտել նոր կանանց մուտքը և առաջընթացը: Ավելին, արդեն իսկ ընդգրկված լինելով՝ կանայք հաճախ դուրս են մնում կուսակցությունների ներսում ազդեցիկ դիրքերից՝ անկախ իրենց փորձից կամ կարողություններից:

«Կուսակցությունների ներսում որոշումները հաճախ կայացվում են փակ, նեղ շրջանակներում, որտեղ կանայք քիչ են ներկայացված:»

«Կուսակցությունների ներսում որոշումները հաճախ կայացվում են առանց կանանց մասնակցության: Դա պետք է փոխվի:»

Ատելության խոսք. դիտարկվում է որպես կանանց քաղաքական մասնակցությունն ու առաջընթացը խոչընդոտող լուրջ մարտահրավեր: Հարցվածներն անդրադառնում են խնդրին մի քանի հարցերի համատեքստում՝ առավել խորքային ներկայացնելով իրենց դիրքորոշումները մեդիայի հետ հարաբերությունների և տեխնոլոգիաների դերի համատեքստում:

Կին քաղաքական գործիչների կողմից վերը նշված գործոնները ընդհանուր առմամբ համընկնում են այլ հետազոտություններով բացահայտված խոչընդոտների, ինչպես նաև այդ հարցի հանրային ընկալումների հետ: Օրինակ՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի և Բրեվիս ընկերության հարցման⁸³ շրջանակում կանանց մուտքը քաղաքականություն խոչընդոտող առավել տարածված (50-80%) պատճառների թվում հարցված կանայք և տղամարդիկ⁸⁴ նշում են՝ մշակութային նորմերը չեն խրախուսում կանանց ակտիվությունը, կանայք ազակցություն չունեն իրենց կուսակցություններից, չունեն ֆինանսական ռեսուրսներ, կին քաղաքական գործիչները թիրախավորվում են սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներում ատելության խոսքի միջոցով, կանայք զբաղված են երեխաների խնամքով և տնային տնտեսությամբ և այլ խոչընդոտներ:

4.2. Կանանց անձնական փորձառությունը քաղաքականության մեջ

Հարցված կանայք ներկայացրել են իրենց անձնական փորձառության դրական և բացասական կողմերը, որոնք համադրելի են քաղաքական առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոնների վերաբերյալ իրենց պատկերացումների հետ:

Դրական փորձառությունը քաղաքականության մեջ

Հարցված կանայք քաղաքականության մեջ իրենց դրական փորձառությունը կապում են հանրային ներգրավվածության, որոշումների վրա ազդեցության, համայնքային փոփոխությունների և անձնական աճի հետ:

«Ես տեսա, որ իմ մասնակցությամբ հնարավոր է փոխել համայնքի վերաբերմունքը կանանց նկատմամբ:»

«Քաղաքականությունը ինձ սովորեցրեց, որ եթե համառ ես, կարող ես հասնել նույնիսկ այն բանին, ինչն անհնար էր թվում:»

«Երբ տեսնում ես, որ քո առաջարկը դառնում է օրենք, դա աննկարագրելի զգացողություն է:»

Դատելով պատասխաններից՝ կանայք քաղաքականությունը դիտարկում են որպես ինքնահաստատման և հանրային ազդեցության հարթակ, որտեղ իրենց ձայնը կարող է իրական փոփոխություններ բերել, ինչպես նաև որպես սոցիալական արդարության և համայնքային բարեփոխումների հարթակ, փոփոխությունների շարժիչ ուժ, այլ ոչ միայն որպես իշխանություն ձեռք բերելու

83 Public Opinion Survey on Women's Issues: Residents of Armenia, IRI / Breavis 2021 https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/womens_political_participation_breavis_iri_results_presentation_final_07.01.2021.pdf

84 Հարցումն իրականացվել է ողջ հանրապետության տարածքում՝ 1511 հարցվածների շրջանում, որոնցից 46%-ը տղամարդիկ են, 52%-ը՝ կանայք:

գործիք: Այդ մոտեցումը համընկնում է քաղաքականություն մտնելու նրանց հիմնական շարժառիթների և քաղաքականության մեջ հաջողության, կանանց համերաշխության վերաբերյալ նրանց ընկալումների հետ:

«Քաղաքականությունը ինձ հնարավորություն տվեց լսելի դարձնել այն խնդիրները, որոնք տարիներ շարունակ անտեսվել էին:»

Հանրային քաղաքականության մեջ ներգրավված կանանց դրական փորձառությունը բարձր է գնահատվում նաև հանրության կողմից: ՏԻՄ-երում կանանց գործունեությանը վերաբերող այլ հետազոտություններ փաստում են, որ, հանրության կարծիքով, կանանց մասնակցությունը ՏԻՄ-երում նպաստում է համայնքների խնդիրների լուծմանը և սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: Օրինակ՝ «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման» հետազոտության⁸⁵ համաձայն՝ իրենց համայնքի ավագանու կին անդամներին ճանաչող հարցվածների 78%-ը ցանկանում է, որ այդ կանայք շարունակեն պաշտոնավարելը, իսկ կին ղեկավար ունեցող համայնքներում հարցվածների 84%-ն է ցանկանում, որ կինը շարունակի ղեկավարել իրենց համայնքը:

Հետազոտությունները փաստում են, որ կանայք քաղաքականության մեջ ձեռք են բերում նոր հմտություններ՝ հաղորդակցման, բանակցման, ռազմավարական պլանավորման ոլորտներում, ինչը նպաստում է նրանց ինքնահաստատմանը և մասնագիտական աճին: Դա հաստատվում է նաև սույն հետազոտության շրջանակում հարցված կանանց պատասխաններում:

«Ինձ համար կարևոր է հանրային խոսքի ձևավորման, քաղաքական օրակարգերի մշակման փորձառությունը:»

«Հմտությունների այն համախումբը, որ ստանում ես փորձառության ընթացքում, բացառիկ է, այսինքն՝ կարճ ժամանակում ստիպված ես և՛ հրապարակային խոսքը զարգացնել, և՛ լինել միշտ պատրաստ ամեն առումով՝ հաշվի առնելով իրադարձությունների անկանխատեսելիությունը: Դա քեզ ճկուն է դարձնում, շատ ավելի արագ մտածել և որոշումներ կայացնել է սովորեցնում, անփոխարինելի կոմունիկացիոն հմտություններ է զարգացնում. . . Որևէ համալսարան կամ դասընթաց, չեմ կարծում, թե փոխարիներ այս պրակտիկ կուրսը:»

«Ինձ համար շատ կարևոր փորձառություն էր՝ սեփական «ես»-ից հետո սկսել խոսել «մենք»-ի անունից:»

«Հիմնական փորձառությունն իմ 15 տարվա քաղաքական ճանապարհին այն է, որ ես հավատարիմ եմ մնացել իմ սկզբունքներին, և, իմ գնահատմամբ՝ իմ խոսքը բազմաթիվ դեպքերում ունեցել է որոշիչ դեր, և այս իմաստով համարում եմ, որ սա լուրջ ձեռքբերում է:»

«Հմտացել եմ քաղաքական խոսքի ձևավորման, քաղաքական մեսիջը տեղ հասցնելու, մարդկանց խնդիրներն ավելի ճիշտ հասկանալու, մարդկանց հետ շփումները ավելի ճիշտ կազմակերպելու հարցում, սկսել եմ ավելի լավ տեսնել մարդկանց կարիքները, ավելի ճիշտ կոմունիկացնել իմ գաղափարները մարդկանց հետ, չնայած որ շատ փորձառությունների կարիք դեռ ունեմ վստահաբար:»

85 «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին». հետազոտություն, Օքսիջեն, 2021. <https://oxygen.gen.am/wp-content/uploads/2021/03/Public-perception-research.pdf>

Միջազգային մի շարք հետազոտություններ, որոնք վերլուծում են կանանց քաղաքական փորձառությունը, ընդգծում են դրա դրական կողմերը.

Հանրային ազդեցություն և քաղաքական օրակարգի ձևավորում. ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-Կանայք կառույցի համատեղ գնահատման⁸⁶՝ կանանց քաղաքական ներգրավվածությունը նպաստում է այնպիսի օրակարգերի առաջնումանը, որոնք հաճախ անտեսվում են՝ սոցիալական պաշտպանություն, կրթություն, առողջապահություն, գենդերային հավասարություն. «Կանանց մասնակցությունը քաղաքականությանը ոչ միայն խորացնում է ժողովրդավարությունը, այլ նաև ապահովում է որոշումների բազմազանություն»:

Խաղաղության և դիվանագիտության խթանում. ըստ մի շարք հետազոտությունների, որոնք ուսումնասիրել են կանանց քաղաքական առաջնորդության ազդեցությունը գլոբալ հիմնախնդիրների վրա⁸⁷, կին առաջնորդները հակված են ընտրել խաղաղ բանակցություններ և դիվանագիտական լուծումներ՝ նվազեցնելով հակամարտությունների հավանականությունը. «Կանայք քաղաքականության մեջ հաճախ հանդես են գալիս որպես խաղաղարարներ՝ խթանելով կայունություն և երկխոսություն»:

Հանրային վստահություն և նոր առաջնորդության մոդելներ. «Բի-բի-սի»-ի «100 Կանայք»⁸⁸ նախաձեռնության շրջանակում բազմաթիվ կին քաղաքական գործիչներ նշվել են որպես հանրային վստահություն վայելող առաջնորդներ, որոնք ղեկավարվում են արժեքներով, ոչ թե իշխանությամբ, ինչը մեկ անգամ ևս հաստատում է սույն հետազոտության արդյունքների հավաստիությունը:

Բացասական փորձառությունը քաղաքականության մեջ

Հարցված կանայք իրենց բացասական փորձառությունը հիմնականում կապում են գենդերային խտրականության, կուսակցական փակ համակարգերի, մեդիայի կողմից և սոցիալական ցանցերում թիրախավորման և հոգեբանական ճնշումների հետ:

«Մեդիան ինձ թիրախավորեց ոչ թե իմ գաղափարների, այլ իմ արտաքինի և ընտանեկան կարգավիճակի պատճառով:»

«Մամուլից շատ եմ վախենում, միշտ խուսափում եմ մամուլից: Դու կարող ես մի բան ասել, թեկուզ միտքդ ճիշտ չձևակերպես, կարող եմ այնպես պատել ասածդ, սխալ ներկայացնել:»

«Ամենակարևոր փորձառությունը, որ պետք է հաղթահարի կին քաղաքական գործիչը, հանրային դաշտում ատելության խոսքը հաղթահարելն է: Հատկապես կին քաղաքական գործիչների նկատմամբ այնքան խոր ատելության խոսք կա հանրային դաշտում, հատկապես՝ սոցիալական ցանցերում, որ այս պարագայում դա իրոք լուրջ փորձություն է:»

86 Reflections lessons from evaluations: boosting women's political participation. UNDP 2025 https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2025-02/women_political_participation.pdf

87 The Evolving Roles of Women in National Politics: A Literature Review. Impact of Women's Political Leadership on Global Issues. 2023 <https://www.dpublication.com/wp-content/uploads/2023/09/27-iss6-2546.pdf>

88 BBC 100 Women <https://www.bbc.co.uk/programmes/p01k4f07>

Սույն հետազոտության փորձագիտական քննարկումները փաստում են, որ կին քաղաքական գործիչները հաճախ հայտնվում են ոչ միայն մասնագիտական, այլ նաև անձնական բնույթի հարձակումների թիրախում, որոնք հաճախ պայմանավորված են սեռով⁸⁹: Այն փաստը, որ ատելության խոսքը սոցիալական ցանցերի հայալեզու տիրույթում ունի մտահոգիչ ծավալներ՝ հատկապես կին հանրային քաղաքական գործիչներին թիրախավորելու առումով, հաստատվում է նաև մեդիա մշտադիտարկումների արդյունքներով⁹⁰: ՄԱԿ-Կանայք կառույցի գնահատումները նույնպես արձանագրում են, որ կին քաղաքական գործիչները հաճախ ենթարկվում են սպառնալիքների, անձնական հարձակումների և սեռական բնույթի վիրավորանքների՝ հատկապես սոցիալական մեդիայի հարթակներում:

Սույն հետազոտության շրջանակում հարցվածների պատասխանները վկայում են կին քաղաքական գործիչների նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի մասին:

«Քաղաքական դաշտում կանայք հաճախ պետք է կրկնակի ապացուցեն իրենց արժանիությունը՝ միայն այն պատճառով, որ կին են:»

«Ինձ հաճախ չեն լսում, մինչև չհաստատեմ, որ գիտեմ ինչի մասին եմ խոսում:»

«Ամենակարևոր փորձառությունն ինձ համար տղամարդկանց հետ հարաբերվելու բոլորովին ուրիշ մակարդակն է, որտեղ դու առերևույթ հավասար ես, բայց իրականում բոլորովին հավասար չես, անգամ եթե քո պաշտոնական դիրքն ավելի բարձր է, քան կողքիդ կանգնած տղամարդունը:»

«Հայաստանի համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման» հետազոտության⁹¹ տվյալները հաստատում են, որ ՏԻՄ մակարդակում կին պաշտոնյաները հաճախ առերեսվում են «միայն տղամարդկանց որոշումների» մշակույթին և չեն ընկալվում որպես հավասար գործընկերներ:

Գենդերային կարծրատիպերով պայմանավորված կին քաղաքական գործիչների նկատմամբ կողմնակալ և խտրական վերաբերմունքի մասին են փաստում նաև գլոբալ հետազոտությունները, որոնք դիտարկում են «սոցիալական նորմերի և կարծրատիպերի» ազդեցությունը՝ որպես քաղաքականության մեջ կանանց բացասական փորձառության հիմքում ընկած հիմնական գործոն և շեշտադրում են կարծրատիպերի հաղթահարումը՝ որպես կանանց քաղաքական զորացման նախապայման:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2020 թ. հարցման համաձայն՝ աշխարհի բնակչության գրեթե կեսը դեռևս կարծում է, որ տղամարդիկ ավելի լավ են հարմարեցված քաղաքականությանը, քան կանայք. «Կանայք քաղաքականության մեջ բախվում են խորապես արմատացած կարծրատիպերի, որոնք սահմանափակում են նրանց առաջընթացը»⁹²:

89 Խնդիրն առավել մանրամասն վերլուծվել է սույն հետազոտության «Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը» և «Տեխնոլոգիաների դերը» բաժիններում:

90 Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամ, 2024. <https://www.allrights.am/online-hate-speech-targeting-women-in-armenia/>

91 «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին». հետազոտություն, ՕքսեՋեն, 2021. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Public-perception-research.pdf>

92 Tackling social norms: a game changer for gender inequalities. UNDP (2020). https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2025-02/women_political_participation.pdf

Միջազգային մի շարք վերլուծությունները դիտարկում են կարծրատիպերը որպես կառուցվածքային խոչընդոտներ, որոնք ազդում են կանանց ինքնավստահության, ռեսուրսների հասանելիության և քաղաքական մասնակցության վրա: Այսպես, «Կանայք քաղաքականության մեջ մասնակցության խոչընդոտներ և ներառման ռազմավարություններ» հետազոտությունը⁹³ ցույց է տալիս է, որ քաղաքականության մեջ կանանց լուսանցքայնացումը (մարգինալացումը) կատարվում է մշակութային և ինստիտուցիոնալ խոչընդոտների միջոցով: Նշվում է, որ շատ կանայք քաղաքական համակարգում միայն ներկա են, բայց իրական ազդեցություն չունեն, քանի որ նրանց հաճախ ընդգրկում են խորհրդանշական կամ երկրորդական դերերում՝ առանց որոշումներ կայացնելու իրավասության: Այդ իմաստով կանանց նվազ ներկայացվածությունը իշխանության մեջ նրանց բացասական քաղաքական փորձառության հիմնական դրսևորումներից մեկն է:

Ըստ այդմ, կանանց բացասական փորձառության դրսևորում է հանդիսանում նաև այն փաստը, որ Հայաստանի կառավարման համակարգում շատ քիչ թվով կանայք են ներկայացված խորհրդարանի ղեկավար կազմում, համայնքների ղեկավարների մակարդակում, բարձրագույն պետական պաշտոններում: Սույն հետազոտության շրջանակում հարցված կանանց պատասխաններում բացասական փորձառության նման ընկալումը նույնպես նկատելի է:

«Միայն մի օրինակ բերեմ. Երևանում մենք երբեք չենք ունեցել համայնքապետ, մայրաքաղաքի վարչական շրջաններից որևէ մեկի կին ղեկավար: Միայն մեկ անգամ ունեցել ենք կին փոխքաղաքապետ՝ այն էլ շատ կարճ ժամանակով:»

Ընդհանուրառոմամբ, հարցված կին քաղաքական գործիչների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք քաղաքականության մեջ ձեռք են բերել բազմաբնույթ փորձառություն՝ միաժամանակ բախվելով համակարգային խոչընդոտների և մշակութային կարծրատիպերի: Դրական փորձառությունները հիմնականում կապված են հանրային ներգրավվածության, սոցիալական փոփոխությունների և արժեքային առաջնորդության հետ, մինչդեռ բացասական կողմերը՝ սեռային խտրականության և մեդիա թիրախավորման հետ:

4.3 Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը

Սոցիալական կարծրատիպերի և մշակութային արգելքների դերը առանցքային է կանանց քաղաքական գործունեության և առաջընթացի վրա ազդեցության առումով, ինչը հաստատվում է տեղական և միջազգային հետազոտությունների արդյունքներով:

Կարծրատիպերը հանրային ընկալումներում

Հայաստանում անցկացված այլ հետազոտություններ ցույց են տալիս, որ կանանց նկատմամբ տարածված կարծրատիպերը՝ կապված «ընտանեկան» և «հանրային» դերերի հետ, խոչընդոտում են նրանց քաղաքական առաջընթացը: Հատկապես տարածված է այն ընկալումը, որ քաղաքականությունը «տղամարդկանց գործ» է, իսկ կանայք պետք է կենտրոնանան ընտանիքի վրա⁹⁴:

93 Women in Politics: Barriers to Participation and Strategies for Inclusion», International Journal of Social Science Research 2024 https://www.ijssr.com/wp-content/uploads/journal/published_paper/volume-1/issue-2/IJSSR25217.pdf

94 «Կանայք քաղաքականության մեջ. կարծրատիպեր և արդիականություն» (ԵՊՀ գիտական հանդես).

Արևելյան գործընկերության երկրներում կարծրատիպերի ելակետային ուսումնասիրության⁹⁵ տվյալներով՝ Հայաստանում հարցված տղամարդկանց կեսից ավելին կարծում է, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են: Կանանց 44%-ը համաձայն է այս պնդմանը, ի տարբերություն 47%-ի, որոնք հակված են մտածելու, որ տղամարդ և կին քաղաքական առաջնորդների միջև տարբերություն չկա: Հարցման արդյունքները փաստում են, որ հայրիշխանական ընկալումները շարունակում են խոչընդոտել կանանց քաղաքական առաջընթացը դեպի ղեկավար պաշտոններ, սահմանափակում են նրանց հետագա քաղաքական կարիերայի հնարավորությունները:

Միջխորհրդարանական միության (IPU) իրականացրած «Սեքսիզմ, ոտնձգություններ և բռնություն կին պատգամավորների նկատմամբ»⁹⁶ ուսումնասիրության տվյալներով՝ հարցված կին պատգամավորների 82%-ը ենթարկվել է հոգեբանական բռնության որևէ ձևի, իսկ 20%-ը՝ սեռական ոտնձգությունների: Ավելին, կին պատգամավորները հայտնել են, որ աշխատավայրում ամեն օր են բախվում կանանց նկատմամբ ատելության (misogyny) և սեքսիզմի դրսևորումների: Հարցումները կրկնվել են մի քանի տարվա տարբերությամբ աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որոնք ոչ միայն հաստատել են առաջին հետազոտության արդյունքները, այլև համալրվել են կանանց նկատմամբ սեքսիզմի և բռնության այլ դրսևորումների վկայություններով, այդ թվում՝ մահվան, բռնաբարության կամ հարձակման սպառնալիքների, սոցցանցերում սեքսիստական վիրավորանքների, արտաքին տեսքի վերաբերյալ մեկնաբանությունների և նույնիսկ սեռական ու ֆիզիկական բռնության մասին⁹⁷:

Հայաստանում անցկացված հետազոտությունների⁹⁸ համաձայն՝ հանրային գործունեություն ծավալող կանանց թիրախավորող ատելության խոսքի 14%-ը արտաքին տվյալների հիմքով վիրավորանքներ են, 12%-ը՝ բռնության կոչեր, 20%-ը՝ հայհոյանքներ, որից 11%-ը՝ սեռական բնույթի:

Սույն հետազոտության շրջանակում կին քաղաքական գործիչները, պատասխանելով կարծրատիպերի ազդեցության մասին հարցին, անդրադարձել են հոգեբանական ճնշմանը, խտրական վերաբերմունքին, սեքսիստական վիրավորանքներին ու ատելության խոսքին, գենդերային կողմնակալությանը, օնլայն վիրավորանքներին և սպառնալիքներին, երկակի ստանդարտներին և կարծրատիպերով պայմանավորված խտրականության այլ դրսևորումների:

Կին քաղաքական գործիչների վերաբերմունքը կարծրատիպերի նկատմամբ Հարցված կին քաղաքական գործիչների վերաբերմունքը կարծրատիպերի և գենդերային խտրականության նկատմամբ կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի.

www.Journals.yso.am

95 Baseline study on gender norms and stereotypes in the countries of the Eastern Partnership, UN Women/ UNFPA, 2022 <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2022/03/baseline-study-on-gender-norms-and-stereotypes-in-the-countries-of-the-eastern-partnership>

96 Sexism, harassment and violence against women parliamentarians, IPU 2016 <https://www.ipu.org/resources/publications/issue-briefs/2016-10/sexism-harassment-and-violence-against-women-parliamentarians>

97 Addressing Violence against Women in parliaments <https://www.osce.org/odihr/532187>

98 «Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում», 2024. <https://www.allrights.am/online-hate-speech-targeting-women-in-armenia/>

- **Հարցվածների մեծ մասը՝ քաջ գիտակցելով, որ հայրիշխանական կարծրատիպերը խոչընդոտում են իրենց գործունեությունը, ընդդիմանում են կարծրատիպերով պայմանավորված խտրական վերաբերմունքին,** բազմաթիվ օրինակներ բերում իրենց անձնական փորձառությունից, խոսում են կարծրատիպերը հաղթահարելու հարցում իրենց հաջողված փորձից: Նշում են նաև, որ կարծրատիպային մոտեցումների են բախվել ոչ միայն սեռի, այլ երիտասարդ տարիքի, հաշմանդամություն ունենալու, ազգային պատկանելիության հատկանիշներով:

«Ինձ համար անընդունելի են կարծրատիպերը, և նաև իմ օրինակով փորձում եմ երիտասարդ կանանց, որոնք քիչ թե շատ հետաքրքրված են հանրային գործունեությամբ, ցույց տալ, որ դրանք հնարավոր է կոտրել, և որ դրանք միայն ու միայն նրանց կաշկանդելու, արգելակելու նպատակ ունեն:»

«Մեր հասարակությունում առկա են կարծրատիպեր, և դա վերաբերում է ոչ միայն կնոջ մասնակցությանը քաղաքականության մեջ, այլև տարբեր ոլորտներում: Եվ դրանք հիմնականում կարծրատիպեր են՝ կապված կնոջ հաջողության հետ: Վերջին տարիներին դրանք հաղթահարվում են նաև այն կանանց շնորհիվ, որոնք որպես լոկոմոտիվ փորձում են ճանապարհ հարթել:»

«Բնականաբար առնչվել եմ կարծրատիպերի, առնչվում եմ և առնչվելու եմ առաջիկայում, վստահաբար: Փորձում եմ տարիներ շարունակ ապացուցել, որ կարող եմ անել անգամ ավելին, քան իմ շատ տղամարդ գործընկերներ: Եվ միայն ժամանակի ընթացքում ես կարողանում ապացուցել, որ քո ասածը գործ է:»

Մարզերում կարծրատիպերն ու կողմնակալ վերաբերմունքը ավելի սուր են արտահայտված, քան մայրաքաղաքում:

«Կարծրատիպերը շատ ներքին արգելակներ են ստեղծում կանանց համար, նրանք անընդհատ կասկածում են իրենց կարողություններին, անընդհատ մտահոգվում են, թե ով ինչ կմտածի իրենց մասին և այլն: Դա շատ է խանգարում կանանց: Նաև շատ է վնասում համայնքին, որովհետև համայնքը կորցնում է շատ կարող ուժեր:»

«Ինձ երբեք չեն թիրախավորել իմ որևէ հմտության կամ կարողության համար, այլ՝ կին լինելու, և դա քաղաքականությամբ զբաղվելու մեջ ինձ համար ամենացավոտ կողմն է: Բայց պետք է կարողանալ վեր լինել բոլոր այդ խոսակցություններից, մեկնաբանություններից ու թույլ չտալ, որ դրանք քեզ կոտրեն կամ շեղեն:»

«Բնականաբար, մարզերում իրավիճակն ավելի սրված է, քան Երևանում: Անգամ 21-րդ դարում շատ ուղիղ կարող են թիրախավորել կնոջը և ասել՝ «թե քո ինչ խելքի բանն էր» կամ՝ «նախ ամուսնանայիր, երեխա ունենայիր, փոխարենը ինչերով ես զբաղվում»:»

«Կարծրատիպերը հաստատ մեծ ազդեցություն են ունենում: Անգամ եթե բացահայտ ոչինչ չասեն, միևնույն է, հաստատ մտածում են, որ եթե քաղաքականության մեջ է մտնում կինը, ուրեմն ինչ-որ մեկի սիրուհին է, կամ փողով է համաձայնել դրան: Շատ քիչ տոկոս են կազմում այն մարդիկ, որ հավատում են, որ դու իրոք ինչ-որ գաղափարական կռիվ ունես տալու:»

- **Հարցվածների մի մասը, ընդունելով կարծրատիպերի և խտրականության առկայությունը կանանց նկատմամբ, նշում է, որ թեև անձամբ իր նկատմամբ դա չի զգացել, սակայն պատրաստ է դրա դեմ պայքարել:**

«Ես, ճիշտն ասած, չեմ կրել կարծրատիպերի ազդեցությունն իմ վրա, երբեք նման խնդիր չի եղել գենդերային անհավասարության, բայց ես վատ եմ վերաբերվում գենդերային խտրականությանը, չի կարելի քննադատել անձին կին լինելու համար:»

«Ես իմ ողջ կարիերայի ընթացքում գենդերային խտրականության որևէ դեպքի չեմ հանդիպել, բայց դա չի նշանակում, թե դա չկա:»

«Անձամբ իմ նկատմամբ՝ չէ՛, չեմ հանդիպել, ինչ վերաբերում է ընդհանրապես քաղաքականության մեջ կնոջ նկատմամբ սեռով պայմանավորված խտրական վերաբերմունքին, ապա, այո՛, շատ եմ նկատել: Եթե կին ես ու քաղաքական դաշտ ես մտնում՝ հատկապես գյուղական շրջաններում, դա երբեմն նաև կապում են, չգիտես ինչու, բարոյականության հետ:»

- **Հարցվածներին ամեկ, թեկուզև սակավաթիվ, խմբի պատասխանները վկայում են այն մասին, որ հանրային ընկալումներում առկա կարծրատիպային մոտեցումները կիսում են նույնիսկ այն կանայք, որոնք արդեն իսկ քաղաքականության մեջ են:** Պատահական չէ, որ հարցվածները դեպքեր են հիշատակում, երբ «կանայք ավելի շատ են մյուս կանանց թիրախավորել»:

«Ամեն դեպքում տղամարդը, այն էլ հայ տղամարդը, ուժ է: Վերջնական որոշումը միշտ տղամարդունն է: Տղամարդիկ պետք է գերակշռեն:»

«Արդեն այնքան են կանանց առաջ բերել, որ տղամարդիկ կորչում են: Ես դա ճիշտ չեմ համարում, որովհետև կան դեպքեր, երբ միայն տղամարդը կարող է գլուխ հանել:»

«Մեր հայ ազգը սովոր է, որ իշխանությունը պետք է տղամարդու ձեռքին լինի: Իսկ կանայք, երբ իշխանություն են ձեռք բերում, ավելի հրամայական են դառնում:»

«Երկակի ստանդարտներ»

Հարցվածները հաճախ շեշտում են, որ կանայք քաղաքականության մեջ գործում են մի միջավայրում, որտեղ գերիշխում են տղամարդկային նորմերը, և կանանցից հաճախ սպասվում է ոչ թե քաղաքական գործչին բնորոշ վարքագիծ, այլ «կանացիության» դրսևորում: «Իմ դաստիարակությունը թույլ չի տալիս հաշվի չառնել, որ դուք կին եք, հետևաբար՝ փորձեք կնոջը վայել նազանքով, քնքշությամբ այս ամբիոնն օգտագործել⁹⁹», - **ԼԸ Ազգային ժողովում կին պատգամավորին հասցեագրված տղամարդ պատգամավորի այս խոսքը նման մոտեցման դասական օրինակ է:**

Կանայք հաճախ բախվում են «երկակի ստանդարտների» կանանց ու տղամարդկանց խոսքի տարբեր ընկալումների պատճառով, ինչը նույնպես կարծրատիպային մտածելակերպով է պայմանավորված:

99 Սեքսիզմի դրսևորումները հանրային տիրույթում և խոսքում, Օքսֆորդ, 2020. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/12/%D5%81%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF.pdf>

«Բառացիորեն նույն բանը, որ կարող են ասել և՛ կինը, և՛ տղամարդը, կնոջը դրա համար կթիրախավորեն, տղամարդուն անգամ ուշադրություն չեն դարձնի: Ես սա ասում եմ, որովհետև նման դեպք եղել է անձամբ ինձ հետ:»

«Հատկապես երբ գնում եմ մարզեր, գյուղեր և մարդկանց ասում եմ՝ ես քո խնդիրը կբարձրաձայնեմ, մի փոքր թերահավատորեն են վերաբերվում: Ակնհայտորեն այլ արձագանք են տալիս, երբ նույն բանն ասում է տղամարդ պատգամավորը:»

Տարբեր կերպ են ընկալվում նաև կանանց ու տղամարդկանց սխալները: Հարցվածները նշում են, որ «ամեն մի սխալ կարող է իրենց համար ճակատագրական լինել», իսկ տղամարդկանց դեպքում նույն արարքը կամ խոսքը հեշտությամբ մոռացվում և «ներվում» է հանրության կողմից:

«Երբեմն փոքրիկ սխալները ճակատագրական են լինում և կարող են սոցիալական ցանցերում ատելության խոսքի կապերն այնքան արձակել, որ հետո շատ դժվար է լինում:»

«Մեր հասարակությունը կանանց նկատմամբ շատ ավելի խստապահանջ է:»

«Եթե 10 տղամարդու հավաքական թերությունը ներվում է, մեկ կնոջ թերությունը դառնում է հավաքական պիտակավորում:»

Կանայք «երկակի ստանդարտների» են բախվում նաև այն դեպքում, երբ պետք է ուժեղլինել, կոշտ գնահատականներ տալ, բայց միաժամանակ նաև արդարացնել «կանացիության» կարծրատիպի հետ կապված պատկերացումները, ինչը սահմանափակում է նրանց ինքնարտահայտման հնարավորությունները:

Համարվում է, որ հաղորդակցման գենդերային ոճերը պայմանավորված են կարծրատիպերով, որոնք և ձևավորում են հանրության այն սպասումները, որ կին քաղաքական գործիչները պետք է գործեն «ինչպես կանայք», իսկ տղամարդ գործիչները՝ «ինչպես տղամարդիկ»: Այսպես, Մեծ Բրիտանիայում Քեմբրիջի համալսարանի իրականացրած քաղաքական խոսքի կարծրատիպերի վերաբերյալ հետազոտությունը¹⁰⁰ փաստում է, որ անգամ հասարակական ընկալումները կանանց խոսքի ոճի մասին (օրինակ՝ «մեղմ ձայն» և «ոչ տիրական ձայն») կարող են ազդել կանանց քաղաքական մասնակցության վրա:

«Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ իմ սեռը խանգարում է ինձ որպես քաղաքական գործիչ ընկալելուն:»

«Կանայք հաճախ փորձում են կրկնօրինակել տղամարդկանց վարքը, նրանց բառապաշարով խոսել, տղամարդկային հումորներ անել: Այդ միջավայրն է քեզ անընդհատ փորձում տղամարդայնացնել:»

100 Shaw S. Barriers to Women's Participation in Politics. In: Women, Language and Politics. Cambridge University Press; 2020

Ի՞նչ չափով են փոխվում կարծրատիպերը

Քեմբրիջի համալսարանի մեկ այլ հետազոտություն¹⁰¹ փաստում է, որ ժամանակի ընթացքում քաղաքական ոճի գենդերային մոդելները փոխվում են, և կանանց վրա հանրության կողմից գործադրվող կարծրատիպային ճնշումը թուլանում է: Դիտարկելով Մեծ Բրիտանիայի խորհրդարանական բանավեճերը քսանհինգ տարվա կտրվածքով՝ հետազոտողները նշում են, որ կարծրատիպային պատկերացումները, որ կանայք իրենց ելույթներում ավելի զգացմունքային, ապրումակցող և դրական փաստարկներ են ներկայացնում, իսկ տղամարդիկ օգտագործում են ավելի վերլուծական, ագրեսիվ և բարդ լեզու, տարիների ընթացքում փոխվել են, և կանայք խորհրդարանում ընդօրինակում են այնպիսի ոճային գծեր, որոնք սովորաբար կապված են հաղորդակցության «տղամարդկային» կարծրատիպերի հետ:

Թեև Հայաստանում կանանց ու տղամարդկանց քաղաքական ոճերի տարբերությունների մասին ուսումնասիրություններ չեն իրականացվել, սակայն սույն հետազոտության շրջանակում հարցված փորձագետների դիտարկմամբ¹⁰², Ազգային ժողովի կին պատգամավորների ելույթներում նկատելի են որոշակի փոփոխություններ համարձակության, փաստարկվածության, կոշտ գնահատականների առումով, ինչը կարող է կապված լինել և՛ երկրում իրավիճակի, և՛ քաղաքական դաշտում տեղի ունեցած սերնդափոխության հետ: Այլ հարց է՝ ի՞նչ չափով են կին քաղաքական գործիչների կողմից «տղամարդկանց ոճի» ընդօրինակման փորձերը ընդունվում կամ «ներվում» ընտրողների շրջանում, և, ընդհանուր առմամբ, ինչ չափով է Հայաստանում թուլացել հանրության ճնշումը կանանց վրա կարծրատիպերին համապատասխանելու առումով:

Հարցված կին քաղաքական գործիչների կարծիքները զգուշավոր լավատեսական են կարծրատիպերի թուլացման հարցում, մեծ մասը կարծում է, որ փոփոխություններն ակնհայտ են, սակայն կարծրատիպերի ազդեցությունը դեռևս ուժեղ է:

«Եվ անկախ այն հանգամանքից, թե որքան է փոխվել մարդկանց վերաբերմունքը, կոնկրետ կանանց առաջնորդության հարցում ես դեռ ակնհայտորեն զգում եմ այդ խտրական վերաբերմունքը:»

«Կարծրատիպերը կան, այնպես չէ, որ դրանք լիովին հաղթահարված են: Դրանք հաղթահարելու համար համակարգային աշխատանք պետք է տարվի կրթության, մշակույթի, սոցիալական ոլորտներում: Մենք դեռ շատ տեղ ունենք աշխատելու, բայց սառույցը սկսել է հալել:»

Արևելյան գործընկերության երկրներում կարծրատիպերի ելակետային ուսումնասիրության¹⁰³ տվյալներով՝ Հայաստանում կանանց 67%-ը և տղամարդկանց 55%-ը կարծում է, որ գենդերային հավասարության հասնելու ուղղությամբ առաջընթաց է գրանցվել, որ կինը և տղամարդը այսօր ավելի հավասար են իրենց մանկության համեմատ: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի կանանց 45%-ը և տղամարդկանց 56%-ն նշել է, որ չէին ցանկանա ավելի շատ

101 British Journal of Political Science [No Longer Conforming to Stereotypes? Gender, Political Style and Parliamentary Debate in the UK](#), 2022

102 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումից:

103 Baseline study on gender norms and stereotypes in the countries of the Eastern Partnership, UN Women/ UNFPA, 2022 <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2022/03/baseline-study-on-gender-norms-and-stereotypes-in-the-countries-of-the-eastern-partnership>

կանանց տեսնել քաղաքականության մեջ, ընդ որում՝ կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ նման կողմնակալ վերաբերմունք ունի նաև 18-35 տարեկան երիտասարդների 53%-ը: Դա կարող է նշանակել, որ թեև վերջին տարիներին քվոտայի շնորհիվ բավականին մեծ թվով երիտասարդ կանայք են մուտք գործել քաղաքականություն, նրանք դեռևս դերային մոդել չեն հանդիսանում իրենց հասակակիցների համար, և հանրային ընկալումներում դեռ ուժեղ են գենդերային կարծրատիպերը:

4.4 Ընտանիքի դերը կանանց քաղաքական առաջընթացի հարցում

Սույն հետազոտության շրջանակում ընտանիքի գործոնը կանանց քաղաքական առաջընթացի հարցում դիտարկվել է երկու հարթությունում.

- Ինչպիսի՞ դեր ունի ընտանիքը կանանց քաղաքական կարիերայի ձևավորման հարցում:
- Ի՞նչ մարտահրավերներ կան ընտանեկան պարտականությունները քաղաքական գործունեության հետ համատեղելու հարցում, և ի՞նչ հնարավորություններ եք տեսնում դրանք հաղթահարելու համար:

Ընտանիքի դերը բնորոշելիս հարցվածները միակարծիք էին, որ այն որոշիչ գործոն է կանանց քաղաքական կարիերայի բոլոր փուլերում՝ սկսած քաղաքականություն մուտք գործելու որոշումից՝ վերջացրած որևէ պատասխանատու պաշտոն ստանձնելու որոշում ընդունելուց: Ըստ այդմ, երկու տարբերակ է նշվում.

- ընտանիքը կարող է աջակցել և խրախուսել կնոջ առաջընթացը.
- ընտանիքը կարող է խոչընդոտել կամ պարզապես արգելել կնոջ քաղաքական մասնակցությունը:

Ընտանիքի աջակցող դերը

Ե՛վ Ազգային ժողովի կին պատգամավորները, և՛ ավագանիների կին անդամները երախտագիտությամբ են խոսում իրենց քաղաքական կարիերայում ընտանիքի աջակցության մասին:

«Ես բարեբախտություն ունեմ իմ ընտանիքի՝ թե՛ ծնողներիս, թե՛ ամուսնուս, թե՛ ամուսնուս ընտանիքի մասով պնդելու, որ նրանք ոչ միայն չեն արգելակել, այլև ամեն կերպ աջակցել, սատար են կանգնել, որպեսզի ես կարողանամ մաքսիմալ դրսևորվել քաղաքական դաշտում և առաջ տանել այն գաղափարները, որոնց հավատում եմ:»

«Եթե ընտանիքը դեմ լինի, կինը չի կարողանա քաղաքական դաշտում գործիչ լինել, էլ չեմ ասում՝ հաջողություն ունենալ: Իմ դեպքում, երեխաներիս աջակցությունը, զիտակցումը, թե ես ինչ և ինչու եմ անում, նրանց քաջալերումը միայն ու միայն առաջ են մղել: Տանը աջակցություն ունենալը շատ կարևոր է:»

«Ես 4 երեխա և 1 թոռնիկ ունեմ, բազմազբաղ եմ շատ, և իմ ընտանիքը ինձ օգնում և աջակցում է ցանկացած հարցում: Տեխնիկական հարցերում օգնում են երեխաներս, տրանսպորտի հարցում՝ ամուսինս, շատ դրական մթնոլորտ է մեր ընտանիքում, և ես իմ շրջապատում բազմաթիվ նման օրինակներ ունեմ:»

Հատկանշական է, որ բոլոր հարցված կանայք վայելում են իրենց ընտանիքների աջակցությունը՝ համոզմունք հայտնելով, որ առանց ընտանիքի աջակցության կանայք չեն կարողանա գործել քաղաքական դաշտում և ընդհանրապես մուտք գործել քաղաքականություն: Ընդ որում՝ նրանք դիտարկում են ընտանիքի աջակցությունը ոչ միայն նեղ՝ երեխաների խնամքը կազմակերպելու համատեքստում, այլևավելի լայն՝ ինկատիունենալով ընտանիքի հոգեբանական աջակցությունը:

«Մեր հասարակությունն այնպիսին է, որ մենք չենք կարող անտեսել ընտանիքի դերը կնոջ ցանկացած ոլորտում ինքնադրստորման հարցում: Եվ եթե կինը ընտանիքում չստացավ անհրաժեշտ աջակցություն, կա՛մ չի համարձակվի մտնել այդ ոլորտ, կա՛մ հետ կկանգնի կես ճանապարհից: Իմ օրինակով կարող եմ ասել. եթե չլիներ իմ ընտանիքի աջակցությունը, ես դժվար եմ պատկերացնում, թե ինչպես էի հաղթահարելու այն բարդությունները, որոնք կան քաղաքականության ճանապարհին:»

«Ընտանիքը կարող է կնոջը դարձնել տնային տնտեսուհի և թողնել միայն խոհանոցում և ընտանիքը կարող է կնոջը տալ թևեր և տանել դեպի կարիերային աճ: Շատ կարևոր է ունենալ ընտանիքում համախոհ ամուսին, ոչ թե քաղաքական հայացքների առումով, այլ որը կընդունի, որ դու մարդ ես՝ քո գաղափարներով, քո հայացքներով, որ ունես քո գործունեության ազատությունը, և որևէ կերպ չսահմանափակի այն: Դա շատ կարևոր է կնոջ համար:»

Մարզերում բնակվող կանանց պատասխաններում հատկապես շեշտադրվում է այն փաստը, որ քաղաքականություն մուտք գործելու որոշումն ընդունել են ընտանիքի տղամարդ անդամների (հայր, ամուսին, որդի) հետ:

«Երբ ստացա առաջարկը, հոգուս խորքում մտածեցի՝ ոչ, ամուսինս դեմ կլինի: Բայց երբ եկա տուն ու ասեցի, ասաց՝ ոչ մի խնդիր: Դա ինձ հաճելիորեն զարմացրեց: Նույնը՝ հայրս: Երեխաներս փոքր էին այդ ժամանակ, իրենց կարծիքն առանձնապես հաշվի չառանք, բայց հետո զգում էի, որ իրենք հպարտանում են ինձանով:»

«Իմ ընտանիքում որոշումս միանշանակ չընդունվեց: Որդիներս սկզբում դեմ էին, ամուսինս էլ հարցրեց՝ «Վստա՞հ ես, որ ուզում ես այդքան մեծ պատասխանատվության տակ մտնել: Անգամ եթե դա պետք է թիմին, քո որոշումն է կարևոր»: Ասացի՝ եթե իմանամ, որ ինձ հետ ես, ուրեմն պատրաստ եմ:»

Ընտանիքի կողմից գործադրվող արգելքները

Հարցված կանայք, անդրադառնալով ընտանիքի կողմից կնոջ քաղաքական ակտիվությունը ընտանիքի կողմից արգելելու երևույթին, բնութագրում են այն որպես կարծրատիպերով պայմանավորված բռնության դրսևորում:

«Մենք անընդհատ խոսում ենք կանանց նկատմամբ բռնությունից, բայց չենք դիտարկում հոգեբանական բռնությունը, որը համատարած է՝ արգելքների, ընտրության խոչընդոտման ձևով: Սա ինձ համար անընդունելի է:»

«Իմ դեպքում ընտանիքն ու քաղաքականությունը համատեղելը իրոք մարտահրավեր է: Ես ամուսնացած չեմ, ունեցել եմ ընկեր, շփվել ենք, բայց նա ասել է՝ «Եթե դու քաղաքականության մեջ լինես, մենք չենք ամուսնանա»: Ես ընտրել եմ քաղաքականությունը:»

Հետազոտությունները փաստում են, որ արգելքների պրակտիկան կանանց նկատմամբ տարածված է Հայաստանում ոչ միայն նրանց քաղաքականություն, այլև ընդհանրապես աշխատանքի շուկա մուտք գործելու պարագայում: Ըստ **Արևելյան գործընկերության երկրներում կարծրատիպերի ելակետային ուսումնասիրության**¹⁰⁴ Հայաստանում հարցված յուրաքանչյուր հինգերորդ տղամարդուց (23 %) գրեթե մեկը թույլ չի տվել իր ընտանիքում գտնվող կնոջը աշխատել տնից դուրս: «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին» հետազոտության¹⁰⁵ տվյալներով՝ ընտրություններին կանանց չառաջադրվելու պատճառների թվում հարցվածների 73.4%-ը նշել է ընտանիքի արգելքը:

Այս հարցի շուրջ հարցված կին քաղաքական գործիչների դիրքորոշումները վկայում են, որ բացի ցանկացած այլ զբաղվածության դեպքում առկա ընտանիք-աշխատանք համատեղման խնդրից, քաղաքականություն մուտք գործելու արգելքը պայմանավորված է լրացուցիչ գործոններով, որոնք ընտանիքի տեսանկյունից դիտարկվում են որպես մարտահրավեր:

- Անկանոն աշխատանքային գրաֆիկ, ժամանակի մեծ ռեսուրս, հանրային տեսանելիության և կապերի զգալի ընդլայնում:
- Կնոջ ու ընտանիքի թիրախավորման և նույնիսկ անվտանգության ռիսկեր:

Ընդ որում՝ պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ թիրախավորման գործոնն ամենամեծ մարտահրավերն է ընտանիքի համար:

«Շատ տղամարդկանց դուր չի գալիս, որ իրենց կանայք քաղաքականության մեջ են, ուզում են, որ նրանք աշխատանքային գրաֆիկի մեջ լինեն՝ գնան աշխատանքի, գան հստակ ժամի:»

«Ես դեռ շարունակում եմ իմ շրջապատի տղամարդկանցից լսել, որ նրանք չէին ցանկանա, որ իրենց կինը կամ քույրը զբաղվեր քաղաքականությամբ, որովհետև այդ հանրային պարսավանքին չեն դիմանա:»

«Ընտանիքի անդամները նաև մտահոգություններ ունեն անվտանգության իմաստով: Օրինակ՝ ընտրություններից հետո, մանդատների համատարած վերցնել-վայր դնելու ժամանակ, կողքից ծանոթների միջոցով շատ էին ակնարկել մորս, որ լավ կլինի, որ չվերցնեմ մանդատը: Ու նրա մեջ վախ կար, որ ինձ կփորձեն ոչ թե փողով շահագրգռել, այլ վախեցնել:»

Ընտանիքներ՝ թիրախավորման կիզակետում

Հարցվածները կարևորում են ընտանիքի պաշտպանությունը այն մարտահրավերների համատեքստում, որոնց բախվում են կանայք քաղաքականություն մուտք գործելուց հետո: Ընդ որում՝ կանանց մեծ մասը ամենամեծ մարտահրավերն է համարում ոչ այնքան իրենց անձի թիրախավորումը, որքան ընտանիքի անդամների:

104 Baseline study on gender norms and stereotypes in the countries of the Eastern Partnership, UN Women/ UNFPA, 2022 <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2022/03/baseline-study-on-gender-norms-and-stereotypes-in-the-countries-of-the-eastern-partnership>

105 «Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին». հետազոտություն, ՕքսԵՔեն, 2021. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Public-perception-research.pdf>

«Կարծում եմ՝ ամենամեծ մարտահրավերը կնոջ համար ընտանիքին այդ հանրային քննարկումներից զերծ պահելն է, որովհետև, գուցե, նրանք ընդունել են քո որոշումը, բայց միաժամանակ կրում են իրենց վրա քո որոշման հանրային հետևանքները:»

«Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում» հետազոտության տվյալներով՝ բացի հանրային գործունեություն ծավալող կանանց թիրախավորումից, տարածված է նաև նրանց ընտանիքի թիրախավորումը՝ բռնության կոչեր և հայհոյանքներ՝ ուղղված երեխաներին, ծնողներին, և հանդիմանանք ու պարսավանք հայրերին, ամուսիններին և եղբայրներին՝ տվյալ կնոջ «վարքով և կերպարով չզբաղվելու» համար¹⁰⁶:

Սույն հետազոտության շրջանակում հարցված կին քաղաքական գործիչների դիտարկմամբ՝ ընտանիքի թիրախավորումը կարող է նաև լուրջ հետևանքների հանգեցնել այն իմաստով, որ հանրային գործունեություն ծավալող կնոջը վիրավորելու կամ հայհոյելու դեպքում ընտանիքի անդամները, նրա ամուսինը կամ եղբայրը կարող են պատիվ պահանջել այս կամ այն վիրավորական մեկնաբանություն հնչեցնողից կամ գրողից:

«Ես շատ դեպքեր գիտեմ, որ իրական կոնֆլիկտներ են եղել, տղամարդիկ գնացել գտել են վիրավորողին: Իսկ դրանից հետո կանայք կա՛մ թողնում են քաղաքական գործունեությունը, կա՛մ սկսում են իրենց պահել այնպիսի ապահով քաղաքական օրակարգերի շրջանակում, որ իրենց տղամարդկանց գլխին հանկարծ փորձանք չբերեն:»

Դիտարկելով հարցվածների պատասխանները ընտանիքի թիրախավորման վերաբերյալ՝ կարելի է փաստել, որ ոչ միայն քաղաքականություն մտնող կինը պետք է պատրաստ լինի հանրային անձ լինելու բոլոր բացասական հետևանքներին, այլ նաև իր ընտանիքի անդամները:

«Ընտանիքը պետք է պատրաստ լինի կրելու այն բոլոր դժվարությունները, որոնց միջով անցնում է կինը քաղաքականության մեջ՝ հանրային տարբեր ճնշումներից սկսած մինչև ատելության խոսք: Ընտանիքները մեզ հետ հավասար կիսում են բոլոր հաջողությունները, ձեռքբերումները, անհաջողությունները, լավ ու վատ էմոցիաները, գուցե երբեմն՝ մեզանից էլ շատ:»

Դա չի նշանակում սակայն, որ հանրության համար և քաղաքական դաշտում կարող են ընդունելի լինել ընտանիքի թիրախավորումը, բարոյական սահմանները և բոլոր կարմիր գծերն հատող երևույթները: Հարցազրույցների վերլուծությունը վկայում է, որ ընտանիքի թիրախավորման գործոնը որոշիչ դեր է խաղում կնոջ համար իր քաղաքական կարիերան շարունակելու մասին որոշում ընդունելու հարցում:

Ընտանիք -քաղաքական կարիերա համատեղման խնդիրը

Հանրային ընկալումներում կանանց մուտքը քաղաքականություն խոչընդոտող հիմնական և ամենաշատը նշվող պատճառը կանանց ծանրաբեռնվածությունն

106 «, 2024թ. <https://www.allrights.am/online-hate-speech-targeting-women-in-armenia/>

է տնային տնտեսությամբ և երեխաների խնամքով: Միջազգային հանրապետական ինստիտուտի և Բրեվիս ընկերության **հարցման արդյունքներով**¹⁰⁷ այդպես է մտածում հարցված կանանց ու տղամարդկանց 80%-ը:

«Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք հղիություն են ունենում, երեխա են ունենում, երեխայի հետ որոշակի իմաստով պարտադրված գործառույթ, օրինակ՝ կրծքով կերակրումը: Սա միայն քաղաքականության մասին չէ, այլ ցանկացած զբաղվածության: Եվ եթե ընտանիքը չի աջակցում, կնոջ համար չափազանց բարդ է կարիերա անելը:»

Կին քաղաքական գործիչները, ընտանիքը և քաղաքական գործունեությունը համատեղելու մասին հարցին պատասխանելիս նշում են, որ դա հաղթահարելի խնդիր է, հատկապես որ ժամանակի ընթացքում նախադեպերը շատանում են: Դրա հետ մեկտեղ ընդունում են, որ այդ խնդիրը հատկապես սուր է դրված փոքր երեխաներ ունեցող երիտասարդ մայրերի դեպքում:

Հարցվածների մեծ մասը տեսնում է այդ խնդրի լուծումը իրենց ընտանիքի աջակցության, ընտանեկան պարտականությունների հավասար բաշխման մեջ, մի մասն ընկալում է այն ավելի լայն համատեքստում որպես պետության ընտանիքամետ քաղաքականության խնդիր: Բոլոր դեպքերում հարցվածներից ոչ մեկը այդ խնդիրը չի նշում իր քաղաքական կարիերայից հրաժարվելու պատճառ:

«Այս հարցում իմ բախտը շատ բերել է, որովհետև իմ ամուսինը և երեխաներն ինձ ամբողջությամբ աջակցում են:»

«Բոլորը գիտեն, որ շաբաթ-կիրակին իմ ընտանեկան օրերն են, և մենք այդ օրերին ֆրակցիայի նիստ չենք անում. դա նաև իմ նախապայմանն է եղել, որովհետև ինձ համար կարևոր է ունենալ զոնե երկու օր, երբ ես ամբողջությամբ իմ ընտանիքին եմ նվիրված:»

«Ամուսինս ինձ միշտ ասել է՝ ցանկացած պահի կանգնած եմ կողքիդ, որովհետև այդ աշխատանքը գրաֆիկ չունի, ամենօրյա, երբեմն գիշերային աշխատանք է: Այլապես ես չէի համաձայնի, ես նախևառաջ կին եմ, և ընտանիքս ինձ համար առաջնային է:»

«Ասեմ, որ իմ որոշմանը նպաստեց այն, որ երեխաներս արդեն մեծ էին: Ես չունեի այն խնդիրը, որ ունեն մանկահասակ երեխաներ ունեցող կանայք, որ իրենց ժամանակի 70-80 տոկոսը տրամադրում են իրենց երեխաներին:»

«Ինձ թվում է, որ ամենաամուրն այն ընտանիքներն են, որտեղ ամուսինները նաև շատ լավ ընկերներ են: Այդ դեպքում ընտանեկան պարտականություններն ընդհանուր են, չկա կնոջ կամ տղամարդու պարտականություն, կա ընտանեկան պարտականություն:»

107 Public Opinion Survey on Women's Issues: Residents of Armenia, IRI / Breavis 2021 https://www.iri.org/wp-content/uploads/legacy/iri.org/womens_political_participation_breavis_iri_results_presentation_final_07.01.2021.pdf

Հատկանշական է, որ հարցվածների թվում կան կանայք, որոնք խորհուրդ չեն տալիս երիտասարդ կանանց հետևել իրենց օրինակին և փորձեն համատեղել քաղաքական կարիերան երեխաների խնամքի հետ, քանի որ, իրենց կարծիքով, դրա հետևանքով երեխաները տուժում են:

«Ես կարծում եմ, որ կինը առաջին հերթին պետք է զբաղվի իր երեխայով, իր ընտանիքով, կրթի և կարողանա դաստիարակել այնպիսի երեխա, որ հետագայում այդ երեխան պետության համար պիտանի լինի, ոչ թե բեռ: Կամ առնվազն իր երեխային ինչ-որ տարիքի հասցնի, նոր դրանից հետո սկսի ինչ-որ գործունեություն ծավալել: Ես դա իմ անձով էլ պետք է ասեմ, որ ես էլ եմ երեխայի հարցում շատ բացթողումներ ունեցել, բայց ես պետք է աշխատեի, որ իմ երեխային պահեի:»

Այդ թեզը սակայն եզակի բնույթ է կրում, քանի որ հարցվածների մեծ մասը, այդ թվում՝ փոքր երեխաներ ունեցող կանայք, առաջ է տանում ընտանիքն ու քաղաքական կարիերան համատեղելու հնարավորությունների ապահովման գաղափարը: Հարցվածներից շատերը, հատկապես երիտասարդ կանայք, դեմ են այն հարցադրմանը, որ կինը պետք է ստիպված լինի ընտրություն կատարել ընտանիքի և քաղաքականության միջև: Նրանց կարծիքով՝ խոսք կարող է լինել ազատ, ոչ թե ստիպված ընտրության մասին, ինչը հնարավոր է միայն կանանց ու տղամարդկանց համար հավասար հնարավորություններ ապահովելու դեպքում:

«Կին թե տղամարդ՝ պետք է այնքան ազատ լինեն, որ իրենք որոշեն՝ ինչ են ընտրում: Միգուցե տվյալ կինը երջանիկ է խմորեղեն թխելով, լավ բալիկ մեծացնելով, և այդ երջանկությունը գոյության իրավունք ունի: Պետք է հավասար հնարավորություններ ստեղծվեն, ու ես ազատ կընտրեմ:»

Հարցվածների դիտարկմամբ՝ ոչ բոլոր կանայք և տղամարդիկ են ցանկանում զբաղվել քաղաքականությամբ, բայց կանանց մեջ այդ ցանկությունը հաճախ չի էլ առաջանում, քանի որ հնարավորությունների պակասի պայմաններում նրանց առջև անհաղթահարելի պատնեշներ են առաջանում:

4.5 Գենդերային քվոտայի արդյունավետության ընկալումները

Գենդերային քվոտային՝ որպես կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող միջոցի հարցվածներն անդրադարձել են դրանց կիրառման դրական և բացասական հետևանքների համատեքստում՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս եք գնահատում գենդերային քվոտաների ներդրումը: Ինչպիսի՞ դրական կամ բացասական ազդեցություն եք տեսնում դրանց կիրառման արդյունքում:
- Ի՞նչ այլ քաղաքական գործիքներ կամ մեխանիզմներ կարող են արդյունավետ լինել քաղաքականության մեջ կանանց առաջընթացը խթանելու համար:

ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված գենդերային քվոտայի¹⁰⁸ հիմնական ձեռքբերումը Ազգային ժողովում և ՏԻՄ համակարգում կանանց ներկայացվածության զգալի ավելացման առումով տեսանելի է և՛ հանրության լայն շրջանակների, և՛ հարցված կին քաղաքական գործիչների համար: Հատկապես արժևորում են այդ ձեռքբերումն այն հարցվածները, որոնք ժամանակին մասնակցություն են ունեցել քվոտաների գաղափարն առաջ տանելու գործում: Հարցվածները դրական են գնահատում քվոտան նաև այն առումով, որ այն խթան է հանդիսանում կուսակցությունների համար կանանց քաղաքական մասնակցությունը ապահովելու հարցում:

«Իմ գնահատմամբ՝ քվոտան եղել և մնում է կարևորագույն գործիքներից մեկը, քանի որ մեր հասարակությունը դեռ այնքան չի հասունացել, որպեսզի կանանց ներկայացվածությունն առավել ինքնաբերաբար լինի:»

«Եթե չլինեին քվոտաները, տղամարդիկ իրար ընկեր-բարեկամներով գնալու էին ցուցակներով առաջ և երբեք չէին մտածելու կանանց ներգրավելու մասին:»

«Ինձ համար քվոտան շատ կարևոր է, և, իմ կարծիքով, պետք է լինի 50/50 հարաբերակցությամբ: Ինձ համար ընդունելի չէ նաև այն մոտեցումը, որ դա միայն թիվ է ապահովում:»

Հարցվածները նաև համոզմունք են հայտնում, որ քվոտաների կիրառումը նպաստում է կանանց առաջընթացին, նրանց ինքնադրսևորվելու հնարավորություն է տալիս և փոխում է հանրային ընկալումները քաղաքականության մեջ կանանց դերակատարման մասին:

«Քվոտաների գուցե ֆորմալ պահանջի արդյունքում քաղաքականության մեջ հայտնված կանայք կարողանում են ինքնադրսևորվել, կայանալ որպես քաղաքական գործիչ, ակտիվանալ, աշխատել իրենց վրա: Նաև քվոտայի արդյունքում է, որ որոշ չափով փոխվել է վերաբերմունքը քաղաքականության մեջ հայտնվող կանանց նկատմամբ:»

«Եթե անգամ քվոտայի շնորհիվ քաղաքականություն մտած կանանց ներկայությունը դեռ արհեստական է, այդ կանանց մի մասը ժամանակի ընթացքում աճում է, այսինքն՝ ժամանակի ընթացքում անգամ արհեստական ներկայությունն իրական է դառնում:»

Կարևոր հանգամանք է նաև այն, որ հարցվածների մեծ մասը հասկանում է, որ քվոտաները ժամանակավոր միջոց են և անհրաժեշտ է կիրառել նաև այլ աջակցող մեխանիզմներ քվոտաների միջոցով ձեռք բերած նվաճումներն ամրապնդելու համար: Սակայն այլ մեխանիզմներ նշելու հարցին հարցվածների մեծ մասը դժվարանում է պատասխանել՝ ասելով, որ այս պահին քվոտայից ավելի արդյունավետ միջոց չի տեսնում:

«Ես չգիտեմ քաղաքական այլ գործիք, որն այս պահին կարող է փոխարինել քվոտային: Դա ժամանակավոր միջոց է, որից պետք է հրաժարվել միայն այն դեպքում, երբ այն իր գործն արել է: Այսինքն՝ միայն այն դեպքում, երբ այն բերել հավասարեցրել է սեռերի ներկայացվածությունը, կարելի է մտածել քվոտայից հրաժարվելու մասին:»

108 ՀՀ ընտրական օրենսգրք, 83.4, 100.2, 100.3, 130.2, 141.6, 141.8 հոդվածներ <https://www.arlis.am/hy/acts/201330>

Քվոտաների բացասական հետևանքներին անդրադառնալով՝ հարցված կանայք նշում են կուսակցությունների ընտրացուցակներում «պատահական» կանանց ընդգրկելու գործելաոճը, ինչը տեսանելի է և՛ ազգային մակարդակում, և՛ հատկապես մարզերում, փոքր կուսակցությունների պարագայում: Հիշատակում են նաև ՏԻՄ-երում արձանագրված կանանց «ձևական» ընդգրկելու դեպքերը, ինչի արդյունքում ընտրացուցակներում քվոտայի պահանջով ներառված կանայք մեկը մյուսի հետևից հրաժարվում են մանդատից կամ ինքնաբացարկ հայտնում:

«Թեև քվոտավորումը հենց այն ճիշտ գործիքն է, որ կարող է մեր հասարակությունում կանանց մասնակցությունն ապահովել, սակայն երբեմն ընտրացուցակներում հայտնվում են կանայք, որոնք քաղաքականության մեջ, ըստ էության, անելիք չունեն: Պարզապես այդ ցանկը լրացնելու համար երբեմն կուսակցությունները փնտրում ու գտնում են մարդկանց, որոնք երբևէ չեն մտածել քաղաքական գործունեության մասին:»

«Ընտրություններից առաջ, հապճեպությունից ելնելով, փոքր կուսակցությունները իրենց ցուցակներում ընդգրկում են այնպիսի կանանց, որոնց ներկայությունը ինքնին կասկածի տակ է դնում կանանց քաղաքական մասնակցության գաղափարը: Սա ակտուալ և խնդրահարույց թեմա է:»

Մատնանշելով քվոտայի բացասական հետևանքները՝ հարցվածների մեծ մասը չի նշում դրանք շտկելու կոնկրետ ճանապարհներ՝ համարելով, որ ժամանակի ընթացքում ամեն ինչ կուղղվի: Սակայն որոշ պատասխաններում առկա են խնդրի կոնկրետ լուծումներ, որոնք հարցվածները տեսնում են կուսակցությունների դաշտում, մասնավորապես, կուսակցությունների կողմից կանանց առաջընթացն ապահովելու, տեղերում կանանց հետ մոտիվացնող աշխատանքներ տանելու անհրաժեշտության մեջ, ինչպես նաև կանանց առաջնորդությունը զարգացնող և այլ կրթական ծրագրերը ընդլայնելու մեջ: Բոլոր դեպքերում բացասական հետևանքները մատնանշող կանանցից ոչ մեկը չի դիտարկում նշված թերությունները որպես պատճառ քվոտաներից հրաժարվելու համար: Ավելին, նրանք համոզմունք են հայտնում, որ եթե հանկարծ քվոտային համակարգը հանվի, կանանց ներկայացվածությունը զգալիորեն կնվազի:

«Անգամ եթե ինչ-որ պահի քվոտաների կիրառման արդյունքում կանանց զուտ տեխնիկական ներկայացվածություն է՝ ուղղակի թիվ է ապահովում, մի օր թիվը դառնում է որակ: Եվ մենք արդեն տեսնում ենք այդ փոփոխությունները:»

«Քվոտաներին փոխարինող այլընտրանք չեմ տեսնում, պարզապես պետք է լինեն նաև լրացնող, դրան ուղեկցող միջոցներ, կանանց մասնակցությունը խրախուսող ծրագրեր, միջոցառումներ, որոնք օգնում են ապահովել քվոտայի արդյունավետությունը:»

Որպես դրական ձեռքբերում հարցվածները հիշատակում են քվոտաների կիրառման համեմատաբար նոր, միջազգային պրակտիկայից ընդօրինակված մեխանիզմը, այն է՝ կուսակցության ներսում ներքին գենդերային քվոտաների սահմանումը, որոնք միտված են ապահովելու կանանց ներկայացվածությունը կուսակցության ղեկավար և տարածքային մարմիններում: Դրական գնահատելով ներքին քվոտաների շնորհիվ արձանագրվող արդյունքը՝ հարցվածները նաև նշում են, որ այդ քվոտաների ներդրման գործընթացը բավականին դժվար ընթացք է ունեցել, քանի որ այդ հարցում կարևոր է տղամարդ կուսակիցների դիրքորոշումը:

«Արդյոք շա՞տ են այն տղամարդիկ, որոնք իրենց մասնակցության հաշվին առաջ կմղեն կանանց, իմ պատասխանն է՝ ո՛չ: Գիտե՞ք՝ ինչպես են մեր ղեկավար կազմում ավելացել կանայք: Կազմն է ուղղակի ընդլայնվել: Հակառակ դեպքում, կարծում եմ, կոնսենսուս չէր լինի:»

Փորձագետները դրական են գնահատում ներքին քվոտաների ներդրման նախաձեռնությունները՝ համարելով, որ դրանք նպաստելու են կանանց քաղաքական կարիերային կուսակցությունների ներսում¹⁰⁹:

Գենդերային քվոտաների ակնհայտ ձեռքբերումների հետ մեկտեղ քաղաքական դաշտի որոշ շրջանակներում դեռևս պահպանվում է քվոտաներին «կողմ-դեմ» կամ «ամոթ է քվոտայով ընտրվել» դիսկուրսը: Մինչդեռ վերջին տասը տարվա կտրվածքով կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ բոլոր հարցումները ցույց են տվել, որ հայ հասարակությունը ընդհանուր առմամբ կողմ է քվոտաների ներդրմանը կանանց պատշաճ ներկայացվածությունը Ազգային ժողովում և ՏԻՄ-երում ապահովելու համար, և նույնիսկ շատ ավելի առաջադեմ է կիրառվող քվոտաների չափերի (մեծամասնությունը կողմ է մինչև 50%)¹¹⁰ և գործադիր իշխանությունում դրանք կիրառելու առումով¹¹¹, քան քաղաքական ուժերը: Հաշվի առնելով այդ փաստը, կարելի էր ենթադրել, որ քվոտաների նպատակահարմության հարցը վաղուց դուրս է եկել քաղաքական օրակարգից: Սակայն հարցվածների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնիսկ քվոտաների անմիջական շահառու հանդիսացող կին քաղաքական գործիչների կարծիքները այս հարցում միանշանակ չեն:

«Քվոտան ո՞րն է: Դա շատ լավ բան է, բայց դա տղամարդկանց իրավունքների ոտնահարում է: Արդեն այնքան են կանանց առաջ բերել, որ տղամարդիկ կորչում են:»

Այնուամենայնիվ, հարցվածների մեծ մասը մտահոգիչ է որակել այն հանգամանքը, որ քվոտայի միջոցով քաղաքականություն մուտք գործած կանայք ընդդիմանում են քվոտայի կիրառման գաղափարին՝ դիտարկելով այն զուտ տղամարդկանց խտրականության հարթությունում և մոռանալով, որ քվոտավորումը ներդրվել է որպես կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարելու գործիք:

«Մարդիկ կան՝ ասում են, որ քվոտաների կիրառումը անբավարար մրցակցային պայմաններ է ստեղծում, բայց դա ուղղակի անընդունելի է՝ հաշվի առնելով այն հազարամյա մշակույթը, երբ տղամարդիկ են մեր մասնակցային հնարավորությունները սահմանափակել:»

Քվոտաների «դեմ» դիրքորոշումները տեղավորվում են այս հարցի շուրջ ողջ աշխարհում առկա բանավեճերի շրջանակում հնչող դասական փաստարկների և հնարավոր բացասական հետևանքներով պայմանավորված մտահոգությունների շարքում: Սույն հետազոտության շրջանակում

109 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումից:

110 կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման մասին». հետազոտություն, ՕքսեՋեն, 2021 . <https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Public-perception-research.pdf>

111 Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց, ՄԱԲՀ, 2016. https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf

բացահայտված խնդիրն այն է, որ դրանք հնչեցնում են այդ քվոտաներից օգտվող կին քաղաքական գործիչներ: Փորձագետների գնահատմամբ¹¹²՝ դա կարելի է վերագրել ենթագիտակցական մակարդակում կարծրատիպերի ազդեցությանը, քվոտաների բացասական հետևանքների առկայությանը կամ կանանց առաջընթացին նպաստող և խոչընդոտող գործոնների մասին ոչ լիարժեք իրազեկվածությանը: Որոշ չափով այդ պատկերացումները կարող են պայմանավորված լինել քվոտայի՝ որպես «դրական խտրականություն» բավականին տարածված սահմանումով, որն այլևս գրեթե չի օգտագործվում թեմային առնչվող փաստաթղթերում՝ ամենուր փոխարինվելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում¹¹³ սահմանված «ժամանակավոր հատուկ միջոցներ» եզրույթով:

Բոլոր դեպքերում իրազեկվածության, կարծրատիպային մտածողության հետ կապված բացերը, փորձագետների դիտարկմամբ, շտկվում են կանանց առաջնորդության կայացմանն ուղղված կրթական ծրագրերի կամ դասընթացների միջոցով: Խնդիրը կարելի է դիտարկել նաև կանանց համերաշխության համատեքստում, քանի որ հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ քվոտաների կիրառման անհրաժեշտությունն այն միավորող գաղափարն է եղել, որը ժամանակին թույլ է տվել միասնական ճակատով հանդես գալ Ազգային ժողովում և կանանց իրավապաշտպան կազմակերպություններում ներգրավված կանանց: Այս հանգամանքի արժևորումը կարևորվում է նաև կանանց հետագա առաջընթացի ապահովման և կանանց իրավունքների պաշտպանության օրակարգն առաջ մղելու տեսանկյունից:

112 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումից:

113 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (CEDAW), հոդված 4, ժամանակավոր հատուկ միջոցներ. <https://www.arlis.am/hy/acts/60505>



Մաս 5. Հանրային կապերը որպես քաղաքական գործունեության հիմնական գրավական

Օրենսդիր մարմնում կամ ՏԻՄ-երում ներկայացված կանանց կապը ընտրողների հետ, քաղաքացիական հասարակության և մամուլի հետ հարաբերությունները նրանց քաղաքական կարիերայի հաջողությունը պայմանավորող կարևոր գործոններ են, որոնք սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են հետևյալ հարթություններում.

- հասանելիությունը և ընտրողների հետ հաղորդակցման եղանակները.
- քաղաքացիական հասարակության հետ կապերը և դրանց ուղղվածությունը.
- մամուլի հետ հարաբերությունների կառուցման խնդիրները:

5.1. Ընտրողների հետ կապերը

Բոլոր հարցվածները կարևորում են ընտրողների հետ կապը՝ դիտարկելով այն որպես իրենց գործունեության կարևորագույն բաղադրիչ և պատասխանատվություն: Նրանք գիտակցում են, որ ընտրողների հետ ակտիվ կապերը հնարավորություն են ընձեռում իրենց հանրային կարծիքը և շահերը հաղորդելու ու բարձրաձայնելու համար, բացի այդ՝ բարձրացնում են իրենց ճանաչելիությունը և վերընտրվելու հավանականությունը:

Լարցվածները բարձր են գնահատում իրենց հասանելիությունը, նշելով, որ մշտապես հասանելի են իրենց ընտրողների համար, նաև հավելելով, թե ինչ եղանակով են նախընտրում պահել կապը ընտրողների հետ:

«Քաղաքացիների հետ էլ բաց և հասանելի եմ ցանկացած տարածքում և հարթակում, նկատի ունեմ սոցիալական ցանցերը և մնացյալ հարթակները, միշտ հասանելի եմ: Իմ մեսինջերում միշտ նամակներ կան, և դրանք երբեք անպատասխան չեն մնում: Նաև մարզային այցելությունների ընթացքում եմ շփվում մարդկանց հետ:»

«Ըստ էության ես միշտ ակտիվ կապի մեջ եմ լինում ընտրողների հետ՝ փողոցում, մեքենայում, տրանսպորտի մեջ, համալսարանում ուսանողների հետ: Այսինքն՝ հանրության հետ կապը ինձ մոտ անընդհատ է և առաջին պլանում: Ավելի շատ առաջնային տեղ եմ տալիս անձնական շփումներով հարցի քննարկմանը, քան օնլայն կամ պաշտոնական նամակ գրեն, ես պատասխանեմ:»

«Ինձ թվում է՝ ամեն կուսակցական իր գործունեությամբ պետք է ապացուցի ընտրողին, ոչ թե ասի, թե ինչ կանի, այլ անի, որ ընտրողը տեսնի: Դրա համար ժողովրդից եկած՝ դա կլինեն զանգեր, նամակներ, խնդրանք, դիմում, անձամբ հանդիպել, բոլորին լսում եմ, բոլորի խնդիրներին փորձում եմ լուծումներ տալ, եթե լուծումներ չեն լինում, գոնե ասում եմ, որ այսինչ պատճառներով այս հարցը չի լուծվելու՝ միանշանակ օրենքի շրջանակներում, ես երբեք օրենքին դեմ չեմ գնա:»

ՏԻՄ մակարդակում շփումը ընտրողների հետ իր առանձնահատկություններն ու ձևաչափերն ունի և մեծապես կախված է համայնքի մեծությունից: Փոքր համայնքներում առավելությունը տրվում է անձնական շփումներին, մեծերում՝ սոցիալական ցանցերին: Սոցիալական ցանցերից չօգտվելը որպես թերություն է ներկայացվում: Մեծ համայնքներում, բացի ընդունելության ժամերից, այլ նախաձեռնություններ են իրականացվում՝ շաբաթական թերթի, ասուլիսների ձևաչափով են հանդիպումներ կազմակերպվում:

«Իմ համայնքում ինձ բոլորն էլ ճանաչում են, ես ինձ ներկայացնելու կարիք չունեմ: Ես հանգիստ կարող եմ խոսել քաղաքացիների հետ փողոցում, խանութում, ցանկացած առիթ օգտագործում եմ իմ պատկերացումները ներկայացնելու համար՝ պահպանելով անմիջականությունը մարդկանց հետ շփման մեջ:»

«Մենք պլանավորում ենք մեր աշխատանքները և զուգահեռաբար, ըստ անհրաժեշտության, անհատապես ենք կարողանում պլանավորում իրականացնել: Հանդիպումները ընտրողների հետ լինում են պարբերաբար, ամսական 1-2 անգամ, լսում ենք յուրաքանչյուրի առաջարկները, եթե խնդիրներ են առաջանում, փորձում ենք լուծել, ուղղորդել, և ես կարծում եմ, որ համագործակցության այս ձևը շատ ճիշտ է և արդյունավետ: Դա ոչ ֆորմալ մշտական հարաբերություններ են, որ իրականացվում են մշտապես:»

«Հնարավոր բոլոր հարթակները օգտագործում եմ, բոլոր միջավայրերը փորձում եմ ճիշտ օգտագործել: Դրանք էլ են հանրային կապի և տեսանելիությունը բարձրացնելու ձևեր:»

«Քաղաքացիների հետ անընդհատ շփումն ինձ համար ամենակարևոր բաներից է: Կարելի է ասել՝ իմ աշխատանքի 80 տոկոսը մարդկանց լսելն է, նրանց խնդիրները վերհանելը, լուծումներ գտնելը: Մեծ համայնքներում դա մի քիչ դժվար է, բայց կրկին պետք է շփվես, լսես մարդկանց: Մենք ընդունելության օր ունենք՝ ուրբաթ, բայց շաբաթվա մյուս օրերին էլ չի եղել մի քաղաքացի, որ գա համայնքապետարան ու հետ դառնա:»

«Փոքր համայնքներում շատ հեշտ է մարդկանց հետ աշխատելը: Ես ճանաչում եմ բոլոր քաղաքացիներին մեկ-մեկ, գիտեմ յուրաքանչյուրի խնդիրը: Անգամ եթե այդ համայնքներում պետք է ծրագիր իրականացնենք, գնում ենք, տեղում իրար հետ քննարկում, որոշում ենք, թե որ ընտանիքի համար որ ծրագիրն է ավելի նպատակահարմար:»

«Քաղաքացիների հետ ընդունելություն ենք անում, սոցցանցերն էլ հիմա լայն հնարավորություններ են տալիս հաղորդակցվելու, միմյանց հետ կապը պահելու, ինձ հաճախ են գրում, ես էլ անպատասխան չեմ թողնում որևէ նամակ:»

Ընտրողների հետ շփումներում առկա է նաև էմոցիոնալ բաղադրիչը: Մի կողմից, հարցվածները նշում են, որ դրական էմոցիաներ են ստանում ընտրողների հետ շփվելիս, մյուս կողմից՝ ընտրողների առաջ պատասխանատվության հետ կապված դժվար ապրումներ ունեն, հատկապես այն դեպքերում, երբ քաղաքացիներին տրված խոստումները իր քաղաքական ուժը չի կատարում:

«Հետաքրքիր է, որ ես անձնական, փողոցում շփումների միջոցով քաղաքացիների հետ ավելի շատ ինֆորմացիա և դրական էմոցիաներ եմ ստանում, քան համացանցով շփման դեպքում: Դրա համար նախընտրում եմ կենդանի շփումները: Անհրաժեշտության դեպքում ունենում եմք նաև հանդիպումներ: Ես իմ 9 տարվա կարիերայի ընթացքում չեմ հիշում դեպք, որ մի քաղաքացի դիմի, ու իր խնդիրը չլուծվի:»

Ընտրողների հետ շփումների հարցում կին քաղաքական գործիչները հիշատակել են մի շարք օբյեկտիվ դժվարություններ, որոնց թվում են՝

- մարզերում հանդիպումներ կազմակերպելու համար ենթակառուցվածքների և ռեսուրսների բացակայություն.
- կանանց կրկնակի ծանրաբեռնվածությունը և այդ պատճառով ժամանակի սղությունը.
- կանանց նկատմամբ վստահության գործոնը:

Մարզերում հանդիպումներ կազմակերպելու դժվարություններ

Խոշորացված համայնքների պարագայում ճանապարհային, տրանսպորտային, ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրները սահմանափակում են հեռավոր բնակավայրերում հանդիպումներ կազմակերպելու կին ավագանիների հնարավորությունները, դժվարացնում են նաև բնակիչների մասնակցությունը հանդիպումներին, եթե դրանք կազմակերպվում են մարզկենտրոնում: Եթե պատգամավորների դեպքում կազմակերպչական և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարների չափը խոչընդոտ չէ ընտրողների հետ հանդիպումների և մարզային այցերի համար, ապա ավագանու անդամների փոխհատուցումները բավարար չեն մեծ համայնքների հեռավոր բնակավայրերում այցելություններ կազմակերպելու համար: Մինչդեռ ընտրողների իրազեկվածության պակասն իրենց իրավունքների մասին, դիմումների ընթացակարգերի չիմացությունը բարձրացնում են ավագանիների և պատգամավորների հետ անհատական շփումների նշանակությունը:

Կրկնակի ծանրաբեռնվածություն

Բացի ռեսուրսներից, և՛ կին պատգամավորների, և՛ կին ավագանիների համար ընտրողների հետ իրենց աշխատանքը կազմակերպելու հարցում լրացուցիչ խոչընդոտ կարող է լինել կրկնակի ծանրաբեռնվածության և ժամանակի խնդիրները, աջակցող գրասենյակային անձնակազմի բացակայությունը: Դա չի կարող չանդրադառնալ կանանց ակտիվության, կուսակցության կողմից նրանց գործունեության գնահատականի վրա և չդժվարացնել նրանց կարիերայի աճը:

Վստահության գործոնը

Կին քաղաքական գործիչների նկատմամբ որոշակի անվստահության գործոնը կարծրատիպային հիմքեր ունի, սակայն, փորձագետների դիտարկմամբ¹¹⁴, մեծապես կախված է անձից, ինչպես նաև քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության աստիճանից:

114 հետ ֆոկուս խմբային քննարկման տվյալներով

«Ինձ համար շատ կարևոր է, որ ցանկացած շփում՝ լինի քաղաքացիական հետ, չորրորդ իշխանության հետ, թե հանրության հետ, լինի վստահության վրա հիմնված: Ես շատ կարևորում եմ իմ անձի շուրջ ստեղծված վստահության մթնոլորտի արդարացումը, և եթե քեզ հաջողվել է այս կամ այն խմբի շրջանում ձեռք բերել այդ շատ կարևոր վստահության մթնոլորտը, դրան պետք է մեծագույն պատասխանատվությամբ վերաբերվես՝ պահպանելով այն, քանի որ հեշտ է այդ միջավայրը ստեղծելը, բայց ավելի հեշտ է այն կորցնելը: Մեկ սխալ քայլ, մեկ սխալ խոսք, մեկ սխալ դիրքավորում, և կզրկվես դրանից: Հետևաբար՝ սկզբունքը պետք է լինի մտածված և անկեղծ կոմունիկացիան, որը, իմ կարծիքով, միշտ գնահատվում է:»

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (CRCC) «Կովկասյան բարոմետր 2024»-ի¹¹⁵ տվյալներով՝ Հայաստանում կուսակցությունների հանդեպ վստահության ցուցանիշը չի գերազանցում 10%-ը, Ազգային ժողովի դեպքում՝ 17%-ը: Համեմատաբար բարձր է ՏԻՄ-երի նկատմամբ վստահությունը՝ 31%: Փորձագետները նշում են¹¹⁶, որ ընդհանուր անվստահության և հիասթափության մթնոլորտում դժվարանում է քաղաքական ինստիտուտներ ներկայացնող գործիչների շփումը ընտրողների հետ, այդ թվում՝ խաթարվում է նաև վստահությունը կին քաղաքական գործիչների հանդեպ:

Մյուս կողմից՝ կին քաղաքական գործիչների նկատմամբ վստահությունը կարող է տարբերվել ինստիտուտների հանդեպ վստահությունից, և ինչպես փաստում են միջազգային հետազոտությունների տվյալները¹¹⁷, կին քաղաքական գործիչները հաճախ ընկալվում են որպես ավելի ազնիվ, ոչ կոռումպացված, սոցիալական ավելի բարձր պատասխանատվությամբ, երկխոսության համար բաց և կոնսենսուսի ավելի հակված գործիչներ, քան տղամարդիկ:

Հանրային ընկալումների վերաբերյալ Հայաստանում անցկացված հետազոտությունները փաստում են¹¹⁸, որ ընտրողները բավականին բարձր են գնահատում կանանց աշխատանքը ավագանիներում՝ նշելով, որ նրանք չեն զիջում, իսկ որոշ դեպքերում գերազանցում են տղամարդկանց, և համոզմունք հայտնելով, որ կանանց թիվն ավագանիներում պետք է մեծանա: Կին պատգամավորների նկատմամբ հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ չեն արվել, սակայն անուղղակիորեն հանրային դրական վերաբերմունքի օգտին են խոսում գենդերային քվոտաների մասին հարցումների արդյունքները, ըստ որոնց՝ հարցվածների մեծամասնությունը անհրաժեշտ է համարում ապահովել կանանց պատշաճ ներկայացվածությունը խորհրդարանում քվոտաների կիրառման միջոցով¹¹⁹:

Դրա հետ մեկտեղ կանանց հետ կապված բարձր ակնկալիքներն ավելի խոցելի են դարձնում ընտրված կանանց որևէ սխալի կամ անհաջողության դեպքում:

115 Caucasus Barometer 2024 Armenia <https://caucasusbarometer.org/am/cb2024am/codebook/>

116 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկման տվյալներով:

117 Pew Research Center-ի և Միջխորհրդարանական միության (IPU) տվյալներ.

Women politicians more likely to reply to people who reach out in need, study shows. Research brief <https://theconversation.com/women-politicians-more-likely-to-reply-to-people-who-reach-out-in-need-study-shows-147395>

Who is Afraid of More Women in Politics, and Why? An Analysis of Public Opinion in 28 European Countries <https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/1554477X.2023.2256612?needAccess=true>

118 Համայնքներում կանանց քաղաքական մասնակցության հանրային ընկալման հետազոտություն. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Public-perception-research.pdf>

119 Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ, ՄԱԲՀ, 2016 https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf

Փորձագետների դիտարկմամբ¹²⁰ կանանց ներկայացվածության ընդլայնման հետ կապվող ակնկալիքների չարդարացման դեպքում վտանգվում է հանրային ընկալումներում կանանց քաղաքական մասնակցության գաղափարը: Ի տարբերություն տղամարդկանց, երբ քննադատվում է միայն տվյալ անձը, ընդհանրացված քննադատության են արժանանում «բոլոր կանայք», ինչը դժվարացնում է այլ կանանց մուտքը քաղաքականություն:

5.2. Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

Քաղաքացիական հասարակության հետ կապերը կարևորում են բոլոր կին պատգամավորները և ավագանիներում ներգրավված կանայք: Իրավապաշտպան գործունեության փորձ ունեցող կանայք ավելի բաց են համագործակցության համար՝ նշելով, որ պահպանում են նախկին կապերը:

«Քաղաքացիական հասարակության հետ կապը պահպանվել է նաև անցյալից, քանի որ ինքս էլ ՀԿ ոլորտում եմ աշխատել երկար տարիներ: Օգտագործում եմ բոլոր հնարավոր գործիքները՝ սոցիալական մեդիայի բոլոր հարթակները, հանդիպումներ՝ նաև ֆիզիկական, քաղաքացիների ընդունելություններ եմ կազմակերպում և այլն:»

«Քաղաքացիական հասարակության հետ կապը եղել է նախորդ աշխատանքից, նոր գործիքներ, ըստ էության, չեմ ձևավորել դրա համար, որովհետև նախկին կապերս պահպանվել են:»

«Ինձ հետաքրքրող թեմաների շուրջ կարողանում եմ քաղհասարակության հետ ձևավորել երկխոսության հարթակներ, որպեսզի մեր համագործակցությունը արդյունավետ լինի:»

«Այս տարիների ընթացքում ես չեմ հիշի դեպք, որ որևէ ՀԿ-ից եկած առաջարկ ուղղակի մերժած լինեմ, որովհետև շատ կարևորում եմ քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում, այն ժողովրդավարության ապահովության բարձիկներից մեկն է: Աշխատում եմ միշտ ընդառաջել, եթե որևէ հարցով դիմում են կամ որևէ հարց բարձրաձայնում են, այսինքն՝ փորձում եմ համագործակցային լինել:»

Հարցվածների մեջ ներգրավված էին կին պատգամավորներ, որոնք համագործակցության հաջողված փորձ ունեին կանանց իրավապաշտպան կազմակերպությունների հետ և այդ համագործակցության շրջանակում հանդես են եկել կոնկրետ օրենսդրական նախաձեռնություններով՝ ուղղված կանանց աշխատանքային իրավունքներին, կանանց և երեխաների նկատմամբ բռնությանը, ատելության խոսքին և սեքսիզմին: Օրինակ՝ 2019 թվականին Ազգային ժողովում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման շուրջ ձևավորվեց ԱԺ-ԲՀԿ համագործակցության հարթակը¹²¹, որի շրջանակում անցկացված քննարկումների արդյունքում մոտ երկու տասնյակ

120 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումից:

121 Հարթակը ձևավորվել էր ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում էր ՄԱԶԾ-ի, ՀՀ Ազգային ժողովի, Օքսֆորդի հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ: <https://havasara-infohub.am/hamagorcakcutyun/>

առաջարկություններ վերածվել էին օրենսդրական նախաձեռնությունների և ընդունվել¹²²: նախաձեռնությունները վերաբերում էին ՀՀ աշխատանքային և ընտրական օրենսգրքերին, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին, կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը և պաշտպանությանը, կանանց վերարտադրողական առողջության և նպաստների խնդիրներին, «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքին, ատելության խոսքին և սեքսիզմին և այլն:

Համագործակցությունը նշված օրակարգի շուրջ շարունակվել է նաև Ազգային ժողովի գործող գումարման ընթացքում: Մասնավորապես, 2024 թվականին «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների¹²³ շուրջ ծավալված քննարկումների ընթացքում օրինագծի հեղինակ հանդիսացող կին պատգամավորները, հայտնվելով հանրային շահարկումների թիրախում, համագործակցել են խնդրով զբաղվող ՀԿ-ների հետ և կարողացել են հիմնավորել և առաջ տանել իրենց առաջարկությունները: Կանայք առաջնագծում էին նաև Ազգային ժողովի կողմից Լանգարոտեի կոնվենցիայի վավերացման ընթացքում, որը նույնպես հայտնվել էր շահարկումների թիրախում:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության համատեքստում կարելի է դիտարկել նաև մի շարք հարցված կին պատգամավորների և կին ավագանիների մասնակցությունը Հայաստանում վերջին տարիներին իրականացվող այնպիսի խոշոր ծրագրերի, ինչպիսիք են՝ ՄԱԶԾ-ի «Կանայք քաղաքականության մեջ» (2018-2025 թթ.)¹²⁴, «Կանանց մասնակցության խթանում անվտանգության և խաղաղության գործընթացներում» (2022-2025 թթ.)¹²⁵, «Կատարիներ» կանանց քաղաքական առաջնորդության դպրոց (2019-2025 թթ.)¹²⁶, «ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» (2022-2025 թթ.)¹²⁷:

Ի դեպ, սույն հետազոտության ընտրանքի մեջ ներառված 25 կանանցից 11-ը «Հավասար» ծրագրի հետ համագործակցության փորձ ունեցող կին ավագանիներ են:

5.3. Մամուլի հետ հարաբերությունների կառուցման խնդիրները

Հարցված կանանց պատասխանները փաստում են, որ հարաբերությունները մամուլի հետ միանշանակ չեն, թեև նրանք շեշտում են մամուլի կարևորությունը հանրային կարծիք ձևավորելու հարցում: Հարցվածներից շատերը մամուլի հետ

122 <https://havasar-infohub.am/hamagorcakcutyun/page21172130.html>

123 <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150320>

124 Իրականացվել է 2018-2025 թթ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսեՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

125 Իրականացվում է Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի դրամաշնորհի միջոցով՝ Միացյալ Թագավորության արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարության աջակցությամբ:

126 Ծրագիրն իրականացվում է 2019 թվականից Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ/NDI) կողմից՝ ԱՄՆ պետքարտուղարության ֆինանսավորմամբ:

127 Իրականացվում է ՕքսեՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ՝ «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

շփումները նույն հարթությունում են դիտարկում, ինչ ընտրողների հետ կապը:

«Մամուլն է այն գործիքը, որի միջոցով հանրային ընկալումներ են ձևավորվում, փորձում են հնարավորինս բարիդրացիական կապեր հաստատել մամուլի բոլոր ներկայացուցիչների հետ: Իրականում դա իմ պարտականությունն է, ես կուսակցության հանրային կապերի գրասենյակի պատասխանատուն եմ և մամուլի ներկայացուցիչների հետ աշխատելը աշխատանքային պարտականություն է նաև: Լրատվության, լրագրողների առջև միշտ բաց եմ, գրեթե չեմ մերժում: Հետո, փողոցում շատ եմ քայլում ես, քայլելը որն է, Կենտրոնում եմ ապրում, շատ հաճախ լրագրողները մոտենում են:»

«Ինձ համար սկզբունքային է բաց և հասանելի լինել բոլոր այն մարդկանց կամ լրատվամիջոցների համար, որոնք մտահոգ են Երևանի խնդիրներով, ունեն ասելիք կամ հարցեր: Այդ իմաստով երբեք ընտրողաբար չեմ մոտենում՝ խոսել այս լրատվամիջոցի հետ կամ ոչ՝ կախված դրա քաղաքական ուղղվածությունից: Ինձ համար նաև շատ կարևոր է հասանելի դարձնել այն մասնագիտական ինֆորմացիան, որը ես ունեմ, բոլոր երևանցիների համար:»

Ընդհանուր առմամբ, պատասխանները կարելի է երկու խմբի բաժանել.

Մամուլի հետ ազատ շփվող կին քաղաքական գործիչներ

«Մամուլի հետ շփումներում ևս շատ բաց եմ, միշտ պատասխանում եմ հարցերին, երբեմն ինքս էլ եմ նախաձեռնում հանդիպումներ ԶԼՄ ներկայացուցիչների հետ, երբ, օրինակ, խոսքը վերաբերում է իմ ներկայացրած օրենսդրական փոփոխություններին և այլն: Շատ հազվադեպ է լինում, որ մերժեմ որևէ մեդիայի:»

«Մամուլի հետ կապված խնդիր չունեմ, երբ ինձ պետք է ինչ-որ բան ասել, ես հանգիստ կարող եմ դա կազմակերպել:»

«Ես միշտ հասանելի եմ մեդիայի ներկայացուցիչներ համար, անգամ եթե չեմ ուզում կամ չեմ կարող գնալ որևէ հարցազրույցի, միևնույն է, միշտ պատասխանում եմ և ասում, թե ինչու ոչ:»

Մամուլի հետ առնչվելու բացասական փորձ ունեցողներ

«Մամուլի հետ, անկեղծ պետք է ասեմ, քիչ եմ շփվում, որովհետև ես այնքան եմ նեղված մեր մամուլից, մեր մամուլը շատ սովորելու բան ունի, աճելու տեղ ունի դեռ, վերապատրաստվելու: Ես մամուլին ասում եմ՝ տանձ, ինքը գրում է՝ խնձոր: Դրա համար ես մամուլի հետ քիչ եմ շփվում, միգուցե դա վատ է, բան չունեմ ասելու, բայց ես կշփվեմ միայն այն մամուլի հետ, ով աղեկվատ կլինի: Ես աղեկվատ մարդ եմ, չեմ վիրավորում և նույնիսկ սուր քննադատության դեպքում երբեք չեմ անցնում կարմիր գծերը, բայց ես տեսնում եմ, որ մեր մամուլը ոչ միայն կարմիր գծերն է հատում, այլև ոչ միայն... Ես չգիտեմ, թե ուր է հասել, դա շատ տգեղ է, շատ ոչ պրոֆեսիոնալ: Դրա համար ես մամուլի հետ չեմ շփվում, հաշվի առնենք, որ դաշտում հակաիշխանական մամուլը ավելի շատ է, քան իշխանականը, դրա համար մամուլի հետ թող շփվեն այն պատգամավորները, որ սիրում են մամուլի հետ շփվել:»

Հայաստանում իրականացված հետազոտությունները փաստում են, որ հիմնական խնդիրները մամուլի հետ կապված՝ կին քաղաքական գործիչների տեսանելիության ապահովման և ոչ կարծրատիպային կերպարի ներկայացման դաշտում են: Թեև իշխանության մեջ կանանց ներկայացվածության աճին զուգընթաց աճում են կին հասարակական և քաղաքական գործիչների լուսաբանման ծավալները, սակայն դրանք համաչափ չեն և շարունակում են զգալիորեն ցածր մնալ տղամարդ գործիչների համեմատ:

Հատկապես ակնհայտ երևում է այդ խնդիրը ընտրությունների ընթացքում: Մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունների զեկույցների տվյալներով¹²⁸՝ 2007-2021 թթ. ժամանակահատվածում կայացած երեք խորհրդարանական ընտրությունների ընթացքում կին թեկնածուների տեսանելիությունը հայաստանյան մեդիայում չի գերազանցել 10%-ը, թեև այդ նույն ընթացքում կին թեկնածուների ներկայացվածությունը ընտրությունների մեջ է գենդերային քվոտայի ներդրման շնորհիվ 22.6%-ից մինչև 37%:

Նույնը կարելի է փաստել 2021 թ. ՏԻՄ ընտրությունների մշտադիտարկման տվյալներով¹²⁹, ըստ որոնց կին թեկնածուների լուսաբանման ծավալները ընդամենը 4% են կազմել, այն դեպքում, երբ կանայք քաղաքական ուժերի ընտրացուցակներում միջինը 34% էին:

Մշտադիտարկումները¹³⁰ բացահայտում են նաև Հայաստանի զանգվածային լրատվության միջոցներում գենդերային կարծրատիպերի վերարտադրման, կողմնակալ վերաբերմունքի, գենդերային ապատեղեկատվության բազմաթիվ դեպքեր:

Ավանդական մեդիայում տեսանելիության պակասը կին քաղաքական գործիչները լրացնում են սոցիալական ցանցերում ակտիվությամբ՝ նշելով, որ հանրության հետ շփումներում գերադասում են հենվել ոչ թե ավանդական մեդիայի օժանդակության վրա, այլ սոցիալական ցանցերի՝ առաջնորդվելով «մեր մասին տեղեկատվություն տարածողը հենց մենք պետք է լինենք» սկզբունքով: Այդ դեպքում գոնե իրենք կարող են անկողմնակալ բովանդակություն ապահովել:

5.4. Տեխնոլոգիաների դերը կանանց քաղաքական գործունեության մեջ

Կանանց համար թվային հարթակների հասանելիության առումով Հայաստանում խնդիր չկա. համացանցից օգտվում է կանանց 81.9%-ը, տղամարդկանց 77.9%-ը, և դա ավելի բարձր ցուցանիշ է, քան միջինը աշխարհում՝ կանանց 65%-ը, տղամարդկանց 70%-ը¹³¹: Ինչ վերաբերում է քաղաքականության մեջ տեխնոլոգիաների դերին, ապա այն լավագույնս բնորոշվում է մեդիա սպառման մասին Հայաստանում իրականացված հետազոտությունների արդյունքներով:

128 Elections in Armenia <https://www.osce.org/odihr/elections/armenia>

129 «2021 թ. ընտրություններում կին թեկնածուների լուսաբանումը հեռուստատեսությամբ և լրատվական կայքերում»։ մշտադիտարկման արդյունքների վերլուծություն. https://oxygen.org.am/wp-content/uploads/2022/02/Final_Report_Coverage-of-female-candidates_Elections-2021_ARM.pdf

130 Խտրականությունն ու բռնությունը հեռուստատեսությամբ և լրատվական կայքերում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան. 2019 և 2021 թթ. մշտադիտարկումների արդյունքների համեմատություն, ՕքսեՋեն, «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ, 2021. https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/02/Media-Monitoring-Report_Final.pdf

Գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան լրատվամիջոցներում. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/10/GID-MEDIA-report.pdf>

131 ITU Facts and Figures 2024 https://www.itu.int/hub/publication/D-IND-ICT_MDD-2024-4/

Այսպես, Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտության (2024)¹³² տվյալներով՝ թվային հարթակները, մասնավորապես, սոցիալական ցանցերը, բլոգները, վիդեոբլոգները և փոդքասթները սոցիալական և քաղաքական նորությունների հիմնական/առաջնային աղբյուր են հարցվածների 62%-ի համար, երկրորդ տեղում՝ հարցվածների 45%-ի համար առաջնային աղբյուրը հեռուստատեսությունն է:

Սույն հետազոտության շրջանակում կանանց քաղաքական կարիերայում տեխնոլոգիաների դերին վերաբերող հարցերը հնարավորություն են տվել դիտարկել խնդիրը մի քանի հարթություններում.

- Ի՞նչ չափով են կին քաղաքական գործիչները իրենց գործունեության մեջ օգտվում նորագույն տեխնոլոգիաներից, այդ թվում՝ սոցիալական ցանցերից, և որ սոցիալական ցանցերն են գերադասում օգտագործել.
- Ի՞նչ տարիքային և բնակավայրի հետ կապված տարբերություններ կան սոցիալական ցանցերը որպես գործիք օգտագործողների միջև.
- Ի՞նչ դժվարությունների և մարտահրավերների են բախվում նրանք թվային հարթակներում և ինչպես են գնահատում տեխնոլոգիաների դերը կանանց քաղաքական առաջընթացն ապահովելու հարցում:

Թվային հարթակների առավելությունները

Հարցված կանանց մեծ մասը իրենց քաղաքական գործունեության մեջ լայնորեն օգտագործում է տեխնոլոգիաների, սոցիալական ցանցերի, արհեստական բանականության հնարավորությունները՝ ընտրողների հետ մշտական շփման մեջ լինելու, հանրային ավելի լայն շրջանակի հետ կապ հաստատելու, քարոզարշավ վարելու, փաստահենք ելույթներ կառուցելու, աջակցություն ձևավորելու համար: Տեխնոլոգիաները նրանք դիտարկում են որպես իրենց անձնական առաջընթացի, ժամանակին համընթաց քայլելու և մրցունակ լինելու գրավական:

Ընդհանուր առմամբ, սոցիալական մեդիայի և թվային հարթակների առավելություններից կին քաղաքական գործիչներն առանձնացնում են երկու հիմնական հնարավորություն՝

- սոցիալական մեդիան և թվային հարթակները թույլ են տալիս ավելի արագ ու անմիջական կապ հաստատել ընտրողների հետ.
- սոցիալական ցանցերը օգնում են շրջանցել ավանդական մեդիայի սահմանափակումները, որոնք հաճախ կողմնակալ են լինում կանանց նկատմամբ:

«Ես միմիայն կողմ եմ ժամանակին համընթաց քայլելուն և մրցունակ լինելուն: Ես և իմ թիմը հնարավորինս օգտագործում և օգտվում ենք նորագույն տեխնոլոգիաների ընձեռած բոլոր միջոցներից՝ սոցիալական ցանցերից մինչև ամենատարբեր թվային գործիքներ: Ես նաև համարում եմ, որ դրանք մեծապես ազդում են անձնական բրենդի որակների հանրայնացման վրա: Ինձ համար շատ կարևոր է տեղում չդուփելը, առաջ շարժվելը, փորձել նոր ձևաչափերում, նոր փաթեթավորմամբ ու նոր ասելիքով հանդես գալը:»

132 Խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն. Ինտերնյուս, 2024.
<https://internews.org/resource/freedom-of-expression-and-media-consumption-in-armenia/>

«Ես շատ ակտիվ սկսել եմ օգտագործել սոցիալական ցանցերը դեռ նախընտրական փուլում: Ինձ համար շատ կարևոր էր, որ իմ քաղաքական հայացքները, ելույթները հասանելի լինեին նաև աշխարհասփյուռ ասորիների համար, իսկ նրանց հետ կապ պահպանելու ամենաարագ և արդյունավետ միջոցը հենց սոցիալական ցանցերն են: Եվ դա շատ լավ աշխատեց:»

«Այսօր ցանկացած մարդ, օգտագործելով սոցիալական ցանցերը, կարող է ինքն իրեն հայտնի դարձնել և չսպասել պատեհ առիթի, որ տարին 1-2 անգամ քեզ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով ելույթ ունենալու հնարավորություն տրվի: Դա շատ մեծ առավելություն է տալիս: Բնականաբար, ես իմ քաղաքական գործունեության մասին ակտիվորեն գրում եմ նաև սոցիալական ցանցերի իմ էջերում, ստանում տարբեր տեսակի արձագանքներ և եթե անգամ բացասական արձագանք եմ ստանում և այն ֆեյք էջով չէ, այլ իրական օգտատիրոջ կողմից է, երբեք դրանք չեմ ջնջում:»

Սոցիալական ցանցերից հարցվածներն առաջին հերթին նշում են Ֆեյսբուքը, այնուհետև հիշտակվում են այլ հարթակներ՝ Ինստագրամը, ՏիկՏոկը, X սոցիալական ցանցը (նախկինում՝ Twitter), Տելեգրամը:

«Ես օգտագործում եմ սոցմեդիաների բոլոր հարթակները, բայց ավելի թիրախային, տարբերակված մոտեցմամբ: Օրինակ՝ ՏիկՏոկում ավելի երիտասարդական բաներ եմ դնում, Ֆեյսբուքում՝ ավելի մասնագիտական:»

«Հիմնականում օգտագործում եմ Ֆեյսբուքը, X-ը, Տելեգրամը, իսկ երբ սկսեցի ՏիկՏոկ օգտագործել, կար տեսակետ, որ ՏիկՏոկը հարիր չէ: Անցավ երկու տարի, և բոլորն անխտիր եկան ՏիկՏոկ: Բոլորը: Այսօր արդեն հարիր է: Ես ՏիկՏոկում հիմնականում իրազեկող բնույթի վիդեոներ եմ տեղադրում, ոչ թե անձնական: Բայց երբեմն մեկնաբանություններ եմ կարդում, թե՛ «Դու էլ պատգամավոր ես, հա՞»: Պատգամավորն ի՞նչ գործ ունի ՏիկՏոկում», առանց հասկանալու, որ դա հավելյալ գործիք է՝ հաղորդակցություն ապահովելու համար:»

Սոցցանցերում անձնական և պաշտոնական էջերի խնդիրը

Հետաքրքիր են տեսակետները անձնական և պաշտոնական էջերի մասին: Այս հարցում մոտեցումները կիսվում են. մի մասը միայն քաղաքական գործունեությանը վերաբերող էջեր է վարում, մյուս մասը երկու էջ ունի՝ անձնական և պաշտոնական: Ոմանք էլ միաձուլում են մի էջում անձնական և քաղաքական կյանքը:

«Անձնական էջը արդեն քաղաքական գործի էջ է: Ոնց որ կյանքս տարբերակված չէ քաղաքական ու անձնական, այնպես էլ սոցիալական էջերը:»

«Մինչև քաղաքական գործընթացները ակտիվ չեմ եղել սոցիալական մեդիայում, տարիներ շարունակ նկար անգամ չեմ դրել ցանցում և երբեք իմ անձնական կյանքը սոցիալական հարթակներում չեմ ցուցադրել: Բայց հասկանալով, որ այսօր հանրային մարդ լինելը, քաղաքական գործիչ լինելը ենթադրում են անմիջական կոմունիկացիա հասարակության հետ, վարում եմ քաղաքական էջ Ֆեյսբուքում: Չնայած որ ամենակտիվ պատգամավորներից մեկն եմ այդ առումով, բայց, կարծում եմ՝ պետք է ավելի ակտիվ լինել:»

«Ֆեյսբուքում ունեմ և՛ անձնական էջ, և՛ պաշտոնական, բայց բովանդակությունը գրեթե նույնն է: Չգիտեմ՝ որքանով է նպատակահարմար երկու էջ վարելը:»

«Ունենմ պաշտոնական էջ Ֆեյսբուքում, բայց այդքան շատ չեմ օգտագործում, իմ անձնական էջն ավելի շատ եմ օգտագործում: Կարծում եմ, որ քաղաքական էջը ձանձրալի է ժողովրդի համար, դա կարող է մի քիչ շեղել քաղաքականությունից, ասենք՝ քաղաքական գործիչը էլ ուրիշ ինչով է զբաղվում, ի վերջո, մարդ է սովորական: Մեկ-մեկ սիրում եմ ինչ-որ բաներ գրել սիրուն, նկարներ գցել, օրինակ՝ նկար եմ արել, գցում եմ, որ մարդիկ տեսնեն, որ այս մարդու հոբբին նաև նկարելն է:»

Անձնական և պաշտոնական էջերի համատեքստում առաջ է գալիս անձնական կարծիքի և քաղաքական դիրքորոշման տարբերակման խնդիրը, ինչը հաճախ շատ դժվար է անել, քանի որ սոցիալական մեդիայում քաղաքական գործիչ հանդիսացող անձի ցանկացած գրառում կարող է մեկնաբանվել որպես քաղաքական տեսակետ: Քիչ չեն դեպքերը, որ դա խնդիրներ է առաջացնում քաղաքական ուժերի ներսում:

«Տեխնոլոգիաներին տիրապետում եմ, ԱԲ-ն եմ հիմա շատ օգտագործում, բայց սոցիալական մեդիան օգտագործում եմ բացառապես անձնական նպատակներով: Քաղաքական մտքեր հրապարակում եմ, կարծիքս հայտնում եմ: Նույնիսկ մի դեպք է եղել, որ ինչ-որ քաղաքական միտք էի արտահայտել, քաղաքապետարանում մարդիկ կային, ասացին՝ լավ չեք արել, որ նման միտք եք գրել: Ասացի՝ դա իմ էջն է և իմ անձնական կարծիքը, ես դրա իրավունքն ունեմ: Զրույցն այդքանով սահմանափակվեց:»

Տեխնոլոգիաների օգտագործման առանձնահատկությունները

Քաղաքական գործունեության մեջ տեխնոլոգիաների օգտագործման հարցում տարիքային առանձնահատկություններ են նկատվում: Երիտասարդների պատասխաններում սոցիալական ցանցերի դերն ավելի շատ է շեշտադրվում որպես հիմնական և առավել արդյունավետ միջոց: Ավելի տարիքով և փորձառու քաղաքական գործիչները թեև ընդունում են նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը, սակայն դիտարկում են սոցիալական ցանցերը որպես օժանդակ գործիք՝ հիմնական ու ամենաարդյունավետ միջոց համարելով կենդանի շփումները ընտրողների հետ:

«Մի կողմից դա քեզ հնարավորություն է տալիս շփվել շատ մարդկանց հետ, բայց մյուս կողմից էլ՝ դու ամբողջությամբ կտրվում ես իրական շփումից: Շատ ավելի լավ կլիներ, որ ինտերնետ չլիներ, և գնայիր, տեղում ծանոթանայիր մարդկանց խնդիրներին, որովհետև նկարը, վիդեոն այլ բան են, իրականությունը՝ այլ: Ես նախընտրում եմ առերես շփումը, որը, ցավոք, ավելի ու ավելի է քչանում:»

«Հիմա շատ տարածված է օնլայն շփումը, ինձ համար անմիջական շփումն է կարևոր:»

Սոցիալական ցանցերի նկատմամբ զգուշավորությունն առկա է և՛ կին պատգամավորների, և՛ կին ավագանիների դեպքում, սակայն մարզերում կանայք ակնհայտորեն ավելի զգուշավոր են:

«Սոցիալական հարթակներում ավելի շատ որպես անձ եմ հանդես գալիս, որպես քաղաքական գործիչ չեմ ներկայանում:»

«Ունենմ սոցիալական ցանցերի էջեր, բայց երբեք գրառումներ չեմ կատարում, անգամ հարազատներիս, ընտանիքի անդամների ծնունդները չեմ շնորհավորում գրառմամբ: Միայն նկարներ եմ տեղադրում:»

Մարզերում սոցիալական ցանցերի արդյունավետությունը հարցականի տակ դնող գործիչների տեսակետը հիմնավորվում է մի քանի փաստարկներով: Առաջինը, որ հեռավոր բնակավայրերում տեխնոլոգիաների հասանելիությունն այնուամենայնիվ ավելի ցածր է, քան մարզկենտրոններում և մայրաքաղաքում, ինչն անփոխարինելի է դարձնում ընտրողների հետ կենդանի շփումների դերը: Երկրորդը՝ թվային միջավայրում դիսկուրսը շատ ավելի հեշտ է տեղափոխել մանիպուլյացիաների, շահարկումների դաշտ, և երրորդը՝ տեխնոլոգիաներից օգտվելիս անհրաժեշտ է իմանալ կիբեռանվտանգության տարրական կանոնները:

«Միայն այն, որ սոցիալական ցանցերը հնարավորություն են տալիս հասանելի դառնալ լայն զանգվածների համար, և քո կատարած գործունեությունը՝ որպես քաղաքական գործիչ, շատ ավելի տեսանելի է: Բայց, մյուս կողմից՝ կան մի շարք վտանգներ, որոնցից մեկն այն է, որ ցանկացած դիսկուրս թվային միջավայրում շատ ավելի հեշտ է տեղափոխել մանիպուլյատիվ դաշտ:»

«Դրանք շատ կարևոր են թե՛ հիմնախնդրի լուծման համար, թե՛ լոբբինգի, թե՛ տարբեր խնդրահարույց իրավիճակներում արագ լուծումների տեսանկյունից: Դա խնդրի բարձրաձայնման, միանգամից շատ մեծ թվով մարդկանց հասանելի լինելու համար է: Այլ հարց է, որ պետք է իմանալ անվտանգության պարզագույն կանոնները թվային տեխնոլոգիաներից օգտվելիս:»

Սեդիագրագիտության հետ կապված մտահոգությունները հաստատվում են հետազոտություններով: Թեև Հայաստանում համացանցից օգտվողների թիվը բարձր է, սակայն հարցվածների միայն 31%-ն է կարողանում տարանջատել փաստերը կարծիքներից և բացահայտել մանիպուլյատիվ տեխնոլոգիաները, և հարցվածների ընդամենը 18%-ն է կարողանում ճանաչել կասկածելի տեղեկությունը և ստուգել փաստերը¹³³:

Սեքսիզմը, ագրեսիան, ատելության խոսքը թվային հարթակներում

Ընդհանուր առմամբ, տեխնոլոգիաների նկատմամբ կին քաղաքական գործիչների զգուշավորության թիվ մեկ և հիմնական պատճառը և՛ պատգամավորների, և՛ ՏԻՄ անդամների դեպքում թվային հարթակներում տարածված սեքսիզմն են և ագրեսիան: Հարցվածների մտահոգությունները հաստատվում են մի շարք հետազոտություններով, ըստ որոնց օնլայն տիրույթում հարձակումներին, սեռի հատկանիշով թիրախավորմանը ամենաշատը ենթարկվում են կին քաղաքական գործիչները: Առցանց բռնության առավել տարածված ձևերից մեկը և՛ աշխարհում¹³⁴, և՛ Հայաստանում ատելության խոսքն է, ընդ որում՝ հայալեզու առցանց տիրույթում այն ունի հստակ արտահայտված քաղաքական (20.5%) և գենդերային ուղղվածություն (42.6%)¹³⁵:

133 Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն. Ինտերնյուս, 2024. <https://internews.org/resource/freedom-of-expression-and-media-consumption-in-armenia/>

134 Measuring the prevalence of online violence against women, The Economist Intelligence Unit <https://onlineviolencewomen.eiu.com/>

135 «Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում». 2024. <https://www.allrights.am/online-hate-speech-targeting-women-in-armenia/>

Կին քաղաքակա գործիչները թիրախավորվում են իրենց հայացքների, արտահայտած մտքերի համար, ընդ որում՝ քաղաքական հիմքով քննադատությունը դուրս է գալիս իր սահմաններից՝ կենտրոնանալով անհատի անձնական, հանրային գործունեությանը չառնչվող հատկանիշների վրա: Հարցված կանանց մտահոգում է սոցիալական ցանցերում խոսույթի անթույլատրելի մակարդակը, իրենց հարազատների, հատկապես երեխաների թիրախավորումը, օնլայն բուլինգից պաշտպանվելու միջոցների բացակայությունը կամ դրանց չիմացությունը:

«Մի ժամանակ ես ակտիվ էի Ֆեյսբուքում, գրառումներ էի կատարում իմ գործունեության վերաբերյալ, կարծիք հայտնում: Դրանցից հրաժարվելը խիստ անձնական պատճառ ուներ: Ընտանիքս ու զավակներիս չթիրախավորելու համար ուղղակի սառեցրեցի օգտահաշիվս: Հիմա, իհարկե, էջ ունեմ, օգնականս է բացել և վարում: Հիմնականում տեղադրում է իմ ելույթները, հայտարարությունները, բայց, բնականաբար, դա ես չեմ:»

«Վերջերս հաղորդում էի նայում, ցույց էին տալիս, թե կին քաղաքական գործիչներից ով ում սիրուհին է . . . նկարով: Ես չգիտեմ, լավ, այսքա՞ն: Սա խայտառակություն է, սա անթույլատրելի է, սա Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ոտնահարում է: Այսպես կարող ես խայտառակ միջադեպի մեջ ընկնել ու այլևս դուրս չգալ: Առհասարակ սոցիալական ցանցերն իրենց այս ազդեցությամբ աղետալի հետևանքներ ունեն: Նման հարձակումներից պաշտպանվելու ֆիլտրերը շատ քիչ կանայք են կարողանում օգտագործել, շատերը չգիտեն . . .»

«Անձամբ ինձ համար շատ մեծ հոգեբանական ճնշում է, մանավանդ երբ անհիմն են մեղադրում, ուրիշ բան, եթե հիմք դնեն կամ ապացույցներ ունենան և հրապարակեն, բայց առանց ապացույցների, անհիմն խաղալ մարդու անվան հե՞տ: Դրա համար մենք հաճախ շատ զգույշ ենք լինում կարծիք արտահայտելիս, չենք ուզում, որ մեզ հայհոյեն կամ ընտանիքի անդամներին թիրախավորեն:»

«Շատ եմ կարևորում սոցիալական ցանցերի դերը հաղորդակցության իմաստով: Դա հնարավորություն է ասելիքդ տեղ հասցնելու: Բայց ես ոչ մի պարագայում չեմ ընդունում քաղաքական, հանրային գործունեությամբ զբաղվող անձանց կողմից վերջերս տարածված հայհոյախառն բառամթերքի օգտագործումը, ատելության խոսքի տարածումը: Քաղաքականությամբ զբաղվող մարդիկ պետք է գաղափարական պայքարի մեջ լինեն, ոչ թե փողոցային խոսույթի: Ես կարծում եմ, որ քաղաքական գործիչները պետք է պատասխանատվություն կրեն հանրային վատ խոսույթ օգտագործելու համար:»

«Եթե կինը տիրապետում է գործիքներին, կարող է անասելի մեծ լսարանի համար լուսաբանել սեփական գործունեությունը: Այս իմաստով շատ կարևոր, խթանող գործիք է: Բայց մյուս կողմից էլ՝ կարող է չար կատակ խաղալ, և սոցիալական ցանցի մեկ գրառումը դառնա ճակատագրական: Սարսափելի է մեկնաբանությունների վիճակը Հայաստանում: Եթե դու կարդաս մեկնաբանությունները, ամեն վայրկյան կարող ես որոշում կայացնել՝ թողնել քաղաքականությունը:»

Փորձելով նժարների վրա դնել մի կողմից՝ տեխնոլոգիաների միջոցով ընձեռվող հնարավորությունները, մյուս կողմից՝ վտանգները, հարցված կանանց մեծ մասը որոշում է կայացնում հօգուտ հնարավորությունների:

«Առավելությունն այն է, որ դու հնարավորություն ես ստանում քո գոյության մասին հայտնել աշխարհին չմիջնորդավորված: Բայց մյուս կողմից էլ՝ որքան շատ մարդ է քեզ ճանաչում, այնքան շատ են քեզ քննարկողները և թիրախավորողները: Բայց նաև համոզմունք ունեմ, որ եթե դու զբաղվում ես քաղաքականությամբ, և որևէ մեկը քեզ չի քննարկում, ուրեմն մեռած քաղաքական գործիչ ես:»

«Հիմա սա հնարավորություն է, թե՞ սպառնալիք: Երկուսն էլ կախված են քեզնից, ես աշխատում եմ հնարավորությունները տեսնել՝ հասկանալով նաև վտանգները:»

Ամփոփելով հարցվածների կարծիքները տեխնոլոգիաների մասին՝ կարելի է փաստել, որ հարցված կանանց վերաբերմունքը սոցիալական մեդիայի վտանգներին կարող է որոշիչ դեր խաղալ ոչ միայն իրենց ակտիվության առումով, այլ նաև հարցականի տակ դնել իրենց քաղաքական կարիերան շարունակելու նպատակահարմարությունը: Հարցվածների մի մասն այնքան սարսափած է սպառնալիքներով, որ չի կողմնորոշվում իր հետագա կարիերայի հարցում: Մյուս մասը, հակառակը՝ քաջ գիտակցելով վտանգները՝ պատրաստ է պայքարելու արատավոր երևույթների դեմ և շարունակելու իր քաղաքական կարիերան:



Մաս 6. Կուսակցությունների դերը կանանց առաջընթացում

Սույն հետազոտության շրջանակում թեմային անդրադարձը ներառում է հարցված կանանց դերակատարմանը կուսակցությունում, նրանց պատկերացումները կուսակցության քաղաքականության և կուսակցական մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկվող քայլերը կուսակցություններում հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ:

Հետազոտության մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին.

- Ի՞նչ դերակատարում ունեք կուսակցությունում: Ինչպիսի՞ ազդեցություն ունեք որոշումների կայացման վրա:
- Ըստ ձեզ՝ ինչպիսին պետք է լինեն կուսակցության քաղաքականությունն ու կուսակցական մշակույթը՝ կանանց ներգրավվածությունն ու առաջընթացը խթանելու համար:
- Ինչ քայլեր կարող են ձեռնարկվել կուսակցությունների ներսում՝ հավասար հնարավորություններ ապահովելու ուղղությամբ:

Կանանց ազդեցությունը կուսակցություններում

Եթե որպես ազդեցության չափանիշ դիտարկել կանանց ներկայացվածությունը Հայաստանի կուսակցությունների ղեկավար մարմիններում, ապա այն շատ ավելի ցածր է կուսակցություններում ներգրավված կանանց թվից¹³⁶: Կանանց նվազ ներկայացվածությունը կուսակցությունների ղեկավար մարմինների կազմում հիմք է ծառայել ամրագրելու «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում¹³⁷ ղեկավար կազմում կանանց թվի ընդլայնումը խթանող դրույթը: Ըստ այդմ՝ կուսակցությունների ղեկավար կազմում կանանց ներկայացվածության ցուցանիշները կապված են պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հետ¹³⁸: Ըստ հետազոտությունների¹³⁹ և փորձագիտական գնահատականների¹⁴⁰՝ այս դրույթը դեռևս չի հանգեցրել ակնկալվող արդյունքների, և պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների մեծ մասում կանանց ներկայացվածությունը ղեկավար կազմում չի հասնում 40%-ի:

Սույն հետազոտության շրջանակում հարցված կանանցից 28-ը կամ 70%-ը կուսակցությունների անդամ են, նրանցից 17-ը որոշակի պաշտոններ են զբաղեցնում կուսակցությունում կամ ընտրված մարմիններում: Մասնավորապես՝

- 9 կին ներգրավված է կուսակցական կառույցների տարբեր մակարդակի ղեկավար օղակներում՝ սկսած տարածքային խորհուրդներից մինչև

136 Կանանց քաղաքական առաջնորդությունը Հայաստանում. ձեռնարկ կուսակցությունների համար, ՄԱԶԾ, 2021.

137 «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=87850#>

138 «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասով՝ պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրվում է կուսակցությանը ըստ հաշվետու տարում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների տոկոսի՝ կիսով չափ 40%-ի դեպքում, մեկ քառորդ մասը՝ 20-40%-ի դեպքում և չի տրամադրվում, եթե 20%-ից պակաս է:

139 Հայաստանի կուսակցություններում գենդերային հավասարության եվ կանանց առաջընթացի ապահովման խնդիրներ. իրավիճակի գնահատման զեկույց, ՄԱԶԾ 2024

140 Ֆոկուս խմբային քննարկումից:

բարձրագույն ղեկավար մարմին: Նշված կանանց պաշտոնական դերակատարումը հիմնականում սահմանափակվում է խորհրդի, վարչության կամ այլ ղեկավար մարմնի անդամությամբ: Հազվադեպ կանայք ղեկավարում են կուսակցության տարածքային կառույցները.

- 8 կին ազդեցություն ունի որոշումների ընդունման վրա՝ զբաղեցնելով ընտրված մարմիններում համայնքի ղեկավարի ու տեղակալի, ավագանիների խմբակցությունների ղեկավարների և ԱԺ մշտական հանձնաժողովների ղեկավարների ու տեղակալների պաշտոնները:

«Ես Շենգավիթի տարածքային կառույցի խորհրդի անդամ եմ... խորհրդի բոլոր անդամները ունեն ձայնի իրավունք, քվեարկության իրավունք:»

«Ես պատմության մեջ առաջին կինն եմ, որ կուսակցության բարձրագույն մարմնի անդամ է... կոտրեցի այդ սառույցը:»

«Ես կուսակցության խմբակցության ղեկավարն եմ... աշխատակազմի ղեկավարն եմ:»

«Հանձնաժողովում ոլորտային հարցերի քննարկումների ժամանակ կարողանում եմ խոսքս վճռորոշ դարձնել և կողմնորոշել գործընկերներին:»

Կուսակցությունների անդամ հանդիսացող մնացած հարցվածները ընդգծում են, որ պաշտոն չունեն, բայց ակտիվ մասնակցում են: Նրանց մեծ մասը նշում է, որ որոշումների վրա իրենց ազդեցությունը պայմանավորված է կարծիքի արտահայտմամբ, ոչ թե պաշտոնով: Մյուս մասը նշում է, որ իրենց կարծիքը միշտ չէ, որ լսված է:

«Իմ կարծիքը լսվում է, քննարկվում է, հաշվի է առնվում:»

«Կուզենայի լսված և ընկալված լինել խմբակցությունում:»

Որոշ կանայք բարձր են գնահատում իրենց կուսակցության ներսում առկա ժողովրդավարական մշակույթը, որտեղ կարծիքները քննարկվում են, և որոշումները կայացվում են խմբային ձևով: Մյուսները նշում են, որ որոշումները կախված են ղեկավարության կամ մեծամասնության դիրքորոշումից, այսինքն՝ որոշումների ընդունման վրա իրենց ազդեցության առումով կարծիքները միանշանակ չեն:

«Մինչև խմբային քննարկում չանենք, որոշում չենք կայացնում... որոշման կայացումը միանշանակ չէ:»

«Եթե անգամ իմ կարծիքը որևէ մեկը չի հարցրել, բայց ես համարում եմ, որ ասելիք ունեմ, հանգիստ կարող եմ դիմել վարչության անդամներին, աշխատակազմին, նույնիսկ կուսակցության նախագահին: Որքանով է դա ազդում, կախված է տարբեր հանգամանքներից:»

Շատ կանայք իրենց ազդեցությունը կուսակցությունում կապում են անձնական որակների հետ՝ կառուցողականություն, ընկերականություն, լսելու ունակություն: Այս հատկանիշները հաճախ դիտարկվում են որպես հաջողության գրավական կուսակցական միջավայրում:

«Ես շատ կառուցողական եմ, շատ ընկերական եմ... Երբեք չեմ բարդացնում ոչ մեկի կյանքը:»

«Ես խնդիրներ չեմ ստեղծում... մաքսիմալ խաղաղություն եմ ապահովել:»

Կանայք հաճախ ընտրում են համագործակցային մոտեցում՝ ազդեցություն ունենալու համար, ինչը կարող է լինել ինչպես ուժ, այնպես էլ սահմանափակում՝ քաղաքական պայքարի ընթացքում:

Ի դեպ, անկուսակցական կանայք, ներկայացնելով իրենց ազդեցությունը խմբակցություններում, նշում են, որ կուսակցական չլինելը սահմանափակում է իրենց ազդեցությունը որոշումների վրա, սակայն որոշ դեպքերում դա դիտարկվում է որպես առավելություն՝ ազատ կարծիք արտահայտելու տեսանկյունից: Բոլոր դեպքերում անկուսակցականների ազդեցությունը խմբակցության որոշումների վրա հնարավոր չէ միանշանակորեն նկարագրել:

«Քանի որ ես կուսակցության անդամ չեմ, իմ ազդեցությունն ու դերակատարումը չնչին են:»

«Ես կուսակցական չեմ, երբեք չեմ եղել... սակայն որոշումները կայացվում են դեմոկրատական սկզբունքներով:»

«Ես անկուսակցական եմ, բայց մեր խմբակցությունը ամենալիբերալներից է, և ցանկացած որոշում ընդունվում է պատգամավորների ակտիվ քննարկման արդյունքում, ուստի պետք է նշեմ պատգամավորներից յուրաքանչյուրի դերակատարումն ու որոշիչ ազդեցությունը որոշումների կայացման վրա:»

Կանանց առաջընթացի հարցում կուսակցությունների դերի ընկալումները

Հարցված կանայք այս խնդրի շուրջ իրենց պատկերացումները ներկայացնելիս ընդգծել են, որ կուսակցությունները պետք է ունենան ներառական, թափանցիկ և հավասարության վրա հիմնված մշակույթ:

«Կուսակցության ներսում կանանց դերը հաճախ սահմանափակվում է կազմակերպչական աշխատանքով, ոչ թե ռազմավարական որոշումներով:»

«Կուսակցությունը պետք է ոչ միայն ընդգրկի կանանց ցուցակներում, այլ նաև վստահի նրանց որոշումների կայացման մակարդակում:»

«Եթե կուսակցության ներսում չկա հստակ դիրքորոշում գենդերային հավասարության վերաբերյալ, ապա կանանց ներգրավվածությունը մնում է ձևական:»

«Մշակույթը պետք է խրախուսի կանանց նախաձեռնողականությունը, ոչ թե սահմանափակի նրանց դերը:»

Ըստ էության, կանայք ներկայացրել են իրենց ակնկալիքները՝ համադրելով դրանք իրականության հետ: Մասնավորապես, արձանագրել են, որ կուսակցությունների մշակույթը հաճախ «հայրիշխանական» է և ենթադրում է, որ կանայք պետք է խաղան «աջակցողի» դեր, ոչ թե «որոշումներ կայացնողի»: Միաժամանակ, պատասխաններից երևում է, որ կանայք պահանջում են իրական մասնակցություն, ոչ թե խորհրդանշական ներկայություն:

Ի դեպ, ոչ կուսակցական կանայք կուսակցության անդամ չլինելու իրենց որոշումը պատճառաբանում են հենց այդ հայրիշխանական մշակույթով:

«Ես անկուսակցական եմ հենց այդ պատճառով, որ, ցավոք սրտի, մեր քաղաքական դաշտում կուսակցությունները հիմնվում են մեկ անձի շուրջ, և նա, սովորաբար, լինում է տղամարդ, և մյուսները ի սկզբանե ընդունում են այն, որ շանս չունեն դառնալու, օրինակ, կուսակցության ղեկավար, իսկ ինձ համար կարևոր է, որ կուսակցությունում լինեն ներքին մրցակցություն և առաջընթացի հնարավորություն:»

Քայլեր կուսակցությունների ներսում՝ հավասար հնարավորությունների ապահովման համար

Ինչպես երևում է հարցազրույցներից, կուսակցությունների դերը կանանց քաղաքական առաջընթացում վճռորոշ է: Կանայք հաճախ բախվում են կուսակցական փակ համակարգերի, որտեղ որոշումները կայացվում են առանց նրանց մասնակցության: Նույնիսկ երբ կանայք ընդգրկվում են ցուցակներում, նրանց դերը սահմանափակվում է խորհրդանշական ներկայությամբ՝ առանց իրական ազդեցության: Կանայք բավարար չափով ներկայացված չեն կուսակցությունների ղեկավար մարմիններում:

Այդ խնդիրների համատեքստում ուշադրության է արժանի իշխող կուսակցության ներսում սահմանված «ներքին քվոտաների» պրակտիկան, որը միտված է ընդլայնելու կանանց թիվը կուսակցության ղեկավար և տարածքային մարմինների կազմում: Հարցված կանանց գնահատմամբ՝ թեև քվոտան բավականին դժվարությամբ է ընդունվել, սակայն այն արդեն տվել է իր արդյունքը՝ զգալիորեն ընդլայնելով կանանց ներկայացվածությունը կուսակցության վարչության կազմում:

«Մեր կուսակցությունում շատ դժվարությամբ, բայց կարողացանք ներքին քվոտաներ սահմանել: Գիտեմ, որ նախորդ անգամներին քվոտաների ներդրման առաջարկը մերժվել է կուսակցության կողմից, և միայն վարչության անդամների թիվն ավելացնելու հաշվին հնարավոր եղավ այն ընդունել: Կարծում եմ՝ բոլոր կուսակցություններում են պետք կանանց առաջընթացին նպաստող ներքին մեխանիզմներ:»

Փորձագետների դիտարկմամբ¹⁴¹՝ հատկապես իշխող կուսակցության կողմից կամավոր սկզբունքով ներքին գենդերային քվոտաների սահմանումը կարող է նախադեպ ծառայել այլ կուսակցությունների համար: Նախաձեռնությունը կարելի է նաև դիտարկել որպես կուսակցության պատասխանատվության դրսևորում պետական գենդերային քաղաքականության իրականացման գործում: Մասնավորապես, դա քայլ է ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարության մեջ ամրագրված նպատակներից մեկի ուղղությամբ, այն է՝ «Քաղաքական կուսակցությունների կողմից գենդերազգայուն քաղաքականությունների մշակում և պրակտիկաների կիրառում»¹⁴²:

141 Փորձագետների հետ ֆոկուս խմբային քննարկումից:

142 Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարություն և միջոցառումների ծրագիր <https://www.arlis.am/hy/acts/206364>

Հարցված կանայք կարծում են, որ կանանց առաջընթացի ապահովման ուղղությամբ հաջողելու համար կամավոր կամ օրենքով պարտադրված քվոտային մեխանիզմները բավարարչեն, անհրաժեշտ է, որ կուսակցությունների քաղաքականությունն ու մշակույթը ձևավորվեն այնպես, որ «ապահովեն կանանց իրական ներգրավվածություն, ոչ թե ձևական ներկայություն»: Հարցվածների կարծիքով՝ կուսակցությունները պետք է վերանայեն իրենց ներքին մշակույթը՝ խթանելով կանանց նախաձեռնողականությունը, ստեղծեն մենթորության և վերապատրաստման ծրագրեր, մշակեն և կիրառեն գենդերային ռազմավարություն, ապահովեն ռեսուրսների և որոշումների հասանելիության հավասարություն:

Հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցված կանայք հստակ պատկերացում ունեն այն մասին, թե ինչ քայլեր են անհրաժեշտ, որպեսզի ձևավորվի նոր քաղաքական մշակույթ՝ հիմնված ներառականության, հավասարության և արժեքային առաջնորդության վրա: Այս հարցում իրազեկվածության բարձր մակարդակ են ցուցաբերում այն կանայք, որոնք մասնակից են եղել կանանց առաջնորդության ծրագրերին կամ մինչև քաղաքականություն մուտք գործելը զբաղվել են իրավապաշտպան գործունեությամբ:

Մասնավորապես, հարցված կանայք առաջարկում են կուսակցությունների ներսում կանանց առաջընթացը խթանելու համար մի շարք գործուն քայլեր, օրինակ՝ **աջակցություն և վերապատրաստում:**

«Կուսակցությունները պետք է ներդնեն կանանց մենթորության ծրագրեր՝ հատկապես երիտասարդների համար:»
«Կուսակցության ներսում կանանց վերապատրաստումը պետք է լինի շարունակական, ոչ միայն ընտրություններից առաջ:»

Ընդգծվում է նաև թափանցիկ առաջխաղացման մեխանիզմների կարևորությունը, ինչպես նաև գենդերային ռազմավարության առկայությունը:

«Կուսակցության ներսում պետք է հստակ դրված լինի ղեկավարների ընտրությունների ընթացակարգը: Եթե չկա թափանցիկություն, կանայք դուրս են մնում:»
«Հավասար հնարավորություններ նշանակում է ոչ միայն ընդգրկում ցուցակներում, այլ նաև ռեսուրսների հավասար օգտագործում:»
«Կուսակցությունը պետք է ունենա գենդերային ռազմավարություն, ոչ միայն հայտարարություններ անի:»
«Գենդերային հավասարության հարցը պետք է լինի կուսակցության օրակարգում, ոչ թե միայն ընտրությունների ժամանակ:»

Կանանց քաղաքական առաջընթացի ապահովման հարցում կուսակցությունների դերի վերաբերյալ հարցված կանանց մատնանշած խնդիրները և դրանց լուծումները համահունչ են փորձագիտական գնահատականներին և հաստատվում են վերջին տարիներին այդ թեմայով Հայաստանում իրականացված հետազոտությունների արդյունքներով:

Մասնավորապես, կուսակցություններում կանանց առաջնորդության խնդիրներին նվիրված հետազոտությունը վկայում է¹⁴³, որ կուսակցական միջավայրը կարող է լինել թե՛ խթանող, թե՛ սահմանափակող գործոն: «**Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիրը**», ներկայացնելով 2021 թ. արտահերթ խորհրդարանական և ՏԻՄ ընտրությունների ընթացքում կանանց ներգրավվածության խնդիրները, փաստում է, որ «կուսակցությունների կողմից կին թեկնածուների առաջադրումը հաճախ պայմանավորված է ոչ թե ներքին հավասարության քաղաքականությամբ, այլ՝ Ընտրական օրենսգրքի պահանջով», **ինչպես նաև, որ** «կուսակցությունների ներսում կանանց առաջընթացի խոչընդոտներից են՝ որոշումների կայացման գործընթացից դուրս մնալը, ռեսուրսների անհավասար հասանելիությունը և մենթորության մեխանիզմների բացակայությունը»¹⁴⁴, **մեկ անգամ ևս հաստատելով**, որ կանանց ներգրավվածությունը կուսակցություններում կարող է լինել ընդամենը օրենքի պահանջ, և իրական մասնակցությունը դեռևս ժամանակ է պահանջում:

Մեկ այլ հետազոտությունում¹⁴⁵ նույնպես արձանագրվում է, որ «կուսակցությունների մշակույթը շարունակում է մնալ տղամարդկային՝ կանանցից սպասելով կազմակերպչական, ոչ թե ռազմավարական դերակատարում», և որ «կանայք հաճախ ընդգրկվում են ցուցակներում՝ առանց իրական քաղաքական ազդեցության կամ որոշումների վրա ներգործելու հնարավորության»: Այս պնդումները նույնպես ընդգծում են կուսակցական մշակույթի «հայրիշխանական» բնույթը և կանանց դերի որոշ սահմանափակումները:

Միջազգային հետազոտությունները իրենց հերթին գալիս են հաստատելու, որ կուսակցությունների դերը կանանց քաղաքական առաջընթացում վճռորոշ է՝ հատկապես այն առումով, թե որքանով են կուսակցությունները պատրաստ իրականացնել ներառական քաղաքականություն, ապահովել հավասար մատչելիություն ռեսուրսներին և վերացնել համակարգային խոչընդոտները: Օրինակ՝ ՄԱԿ-Կանայք կառուցի վերլուծության գնահատականներով¹⁴⁶, կուսակցությունները հաճախ «դարպաս» են՝ կանանց դեպի քաղաքականություն մուտքի համար, սակայն այս երևույթն ունի իր ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: «Կուսակցությունները որոշում են՝ ովքեր են առաջադրվում, ինչ դիրքերում և ինչ ռեսուրսներով: Եթե չկա հավասարության մշակույթ, կանայք դուրս են մնում ազդեցիկ դիրքերից»:

«Գենդերային հավասարությունը քաղաքական կուսակցություններում» հետազոտությունը¹⁴⁷, ուսումնասիրելով գենդերային հավասարությանը վերաբերող կուսակցությունների ներքին ընթացակարգերը, փաստում է. «Կուսակցությունները, որոնք ունեն գենդերային ռազմավարություն, մենթորության ծրագրեր և թափանցիկ առաջխաղացման մեխանիզմներ, ավելի շատ են

143 Կանանց քաղաքական առաջնորդությունը Հայաստանում. ձեռնարկ կուսակցությունների համար, ՄԱՋԾ 2021թ

144 «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր», Օքսֆորդի հիմնադրամ, 2022. <https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief-to-Support-Women-Political-Participation-Nov-2022-Final-Arm.pdf>

145 Քաղաքական կուսակցություններում և քաղաքական նախաձեռնություններում կանանց ներկայացվածությունն ու մասնակցությունը Հայաստանում. գենդերային վերլուծություն / «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, 2016. <https://armunicat.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=1324252>

146 Corporate thematic evaluation of UN Women’s support to women’s political participation: Insights from the field. UN Women, 2024 <https://www.unwomen.org/en/digital-library/publications/2024/05/corporate-thematic-evaluation-of-un-womens-support-to-womens-political-participation-insights-from-the-field>

147 IDEA International – Gender Equality in Political Parties, <https://www.idea.int/publications/catalogue/gender-equality-political-parties>

նպաստում կանանց կայացմանը»: Հետազոտությունը արձանագրում է նաև, որ կուսակցությունների ներսում կանանց առաջընթացը պահանջում է ոչ միայն կառուցվածքային փոփոխություններ, այլ նաև արժեքային վերանայում:

Հանուն գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (EIGE) հեղինակավոր կազմակերպությունը¹⁴⁸ Եվրամիության անդամ պետություններում կուսակցությունների գործունեության վերլուծության արդյունքում պարզել է, որ կանանց ներգրավվածությունը բարձր է այն կուսակցություններում, որոնք ունեն գենդերային հավասարության հանձնաժողով, կանանց քաղաքական դպրոցներ և ներքին մոնիթորինգի մեխանիզմներ. «Կուսակցությունների ներսում կանանց առաջընթացը հնարավոր է միայն այն դեպքում, երբ գենդերային հավասարությունը դիտարկվում է որպես ինստիտուցիոնալ պարտավորություն, ոչ թե PR գործիք»:

Հիմնվելով վերը նշված հետազոտությունների արդյունքների, այդ թվում՝ սույն հետազոտության շրջանակում մատնանշված հիմնախնդիրների վրա՝ կանանց քաղաքական առաջընթացում կուսակցությունների դերը նկարագրող հիմնական գործոնների վերլուծությունը կարելի է ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում.

Գործոն	Հայաստան ¹⁴⁹	Միջազգային փորձ ¹⁵⁰
Քվտաների կիրառում	Օրենսդրորեն պարտադրված, սակայն հաճախ ձևական, առանց իրական ազդեցության	Քվտաները դիտարկվում են որպես մեկնարկային քայլ, ժամանակավոր միջոց, բայց ոչ բավարար ներկուսակցական մշակույթի բացակայության պարագայում
Կուսակցական մշակույթ	Տղամարդկային, հիերարխիկ, կանանցից սպասվում է կազմակերպչական, ոչ ռազմավարական դեր	Հավասարության սկզբունքի վրա կառուցված կուսակցությունները խթանում են կանանց առաջնորդությունը և նախաձեռնողականությունը
Աջակցություն և վերապատրաստում	Հաճախ բացակայում է կամ իրականացվում է ընտրություններից առաջ	Աջակցության ծրագրերը դիտարկվում են որպես կայացման կարևոր գործիք

148 European Institute for Gender Equality (EIGE) – Gender Equality in Political Decision-Making, 2022 <https://eige.europa.eu/publications-resources/publications/gender-equality-political-decision-making>

149 Ըստ վերոնշյալ աղբյուրների:

150 Նույն տեղում:

<p>Ռեսուրսների հասանելիություն</p>	<p>Կանայք հաճախ չունեն հավասար հնարավորություն օգտվելու ֆինանսական, մեդիա և ցանցային ռեսուրսներից</p>	<p>Ռեսուրսների հասանելիությունը դիտարկվում է որպես հաջողության նախապայման</p>
<p>Գենդերային ռազմավարություն</p>	<p>Հաճախ բացակայում է կամ ձևական է, առանց կիրառման մեխանիզմների</p>	<p>Գենդերային ռազմավարությունը պետք է լինի ինստիտուցիոնալացված և գործող</p>
<p>Մասնակցություն որոշումների կայացմանը</p>	<p>Կանայք հաճախ դուրս են մնում կուսակցության որոշումների կայացման մակարդակից</p>	<p>Կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման մեջ դիտարկվում է որպես ժողովրդավարության ցուցիչ</p>



ՄԱՍ 7. ԱՊԱԳԱ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՏԵՍԱԿԱՆԸ

Հարցված կանայք փորձել են նկարագրել իրենց հետագա քաղաքական կարիերային առնչվող ծրագրերը՝ պատասխանելով հետևյալ հարցին՝

- Մտադի՞ր եք շարունակել ձեր քաղաքական կարիերան: Եթե այո՝ ինչ ուղղությամբ եք տեսնում դրա զարգացումը:

Իրենց քաղաքական ապագայի վերաբերյալ հարցվածների պատասխանները կարելի է պայմանականորեն խմբավորել ըստ այն գործոնների, որոնք առանցքային են կանանց համար հետագա կարիերայի մասին որոշում ընդունելու հարցում: Այդ գործոնները սերտորեն կապված են քաղաքականություն մտնելու նրանց շարժառիթների հետ:

Քաղաքականությունը որպես գաղափարական ընտրություն, ոչ թե կարիերա. Բազմաթիվ կանայք քաղաքականությունը դիտարկում են ոչ թե որպես կարիերա, այլ որպես արժեքային պայքար կամ հանրային ծառայություն: Սա մեկ անգամ ևս հաստատում է իրենց այն պնդումը, որ կանայք մուտք են գործել քաղաքականություն՝ ոչ անձնական շահի, այլ հանրային նպատակի համար:

«Ես երբևէ չեմ էլ մտածել քաղաքականության մասին՝ որպես կարիերա: Այս փուլում, այո, բնականաբար, շարունակելու եմ պայքարել, բայց ոչ թե հանուն կարիերայի, այլ որովհետև գիտեմ, որ այնքան մեծ խնդիրներ կան մեր երկրում, և եթե ես կարող եմ դրանց մի մասի վրա ներազդել, ուրեմն պիտի լինեմ քաղաքականության մեջ: Որ օրը ես տեսնեմ, որ այլևս չեմ կարող ոչինչ փոխել, նույն օրը կհեռանամ:»

«Ես շատ երկար ճանապարհ եմ անցել, ու դա ինքնությունիցս բաժանվելու պես մի բան է, որովհետև ինձ համար սա գաղափարական ընտրություն է, կարիերա չի սա, գաղափարական ընտրություն է: Կարող է չլինեմ ղեկավար մարմնի անդամ և այլն, բայց իմ գաղափարական ազդեցությունը այլևս ողջ կյանքի համար է:»

Նման դիրքորոշումը հաստատում է այն տեսակետը, որ կանայք քաղաքականության մեջ հաճախ առաջնորդվում են սոցիալական պատասխանատվությամբ, ոչ թե իրենց հավակնություններով:

Անորոշություն, վերապահումներ և պայմանական մոտեցում. մեծ թվով կանայք իրենց ապագա քաղաքական ներգրավվածությունը պայմանավորում են արտաքին գործոններով՝ քաղաքական իրավիճակ, ընտանեկան հանգամանքներ, կուսակցության դիրքորոշում: Սա վկայում է նրանց ապագայի պատկերացումներում որոշակի անորոշության և զգուշավորության մասին:

«Չգիտեմ՝ ինչպես կուսակցությունը կգնահատի ինձ... Բայց ես ինձ տեսնում եմ միայն և բացառապես իմ ներկա թիմում:»

«Անկեղծ ասած, այդ հարցի պատասխանը դեռ չունեմ... Ես շատ արվեստի մարդ եմ... Ես ինձ ավելի շատ արվեստի մեջ եմ տեսնում, քան քաղաքականության:»

«Չգիտեմ, երկրի վիճակից է կախված, չգիտեմ: Զարգացումներից է կախված, այս պահին չգիտեմ:»

Հարցվածների 17.8%-ն է անորոշություն հայտնել իր ապագա ծրագրերի և քաղաքականության մեջ իրենց ակտիվ դերակատարության վերաբերյալ: Դա կարող է պայմանավորված լինել կանանց՝ քաղաքականության մեջ ինքնադրսևորման դժվարություններով, ինչպես նաև ոլորտների ընտրության փնտրտուքով: Ապագայի հարցում դժվար են կողմնորոշվում նաև այն կանայք, որոնք մտել են քաղաքականություն հանգամանքների բերումով կամ շրջապատի հորդորով, առանց հստակ գաղափարական հենքի:

Տարածքային և համայնքային ներգրավվածության նախապատվություն. համայնքային մակարդակում ներգրավված կանայք հաճախ նշում են, որ իրենց քաղաքական գործունեությունը պայմանավորված է տեղական խնդիրներով և համայնքի հետ անձնական կապերով: Նրանք հաճախ չեն ձգտում բարձր պաշտոնների կամ ազգային մակարդակում ներկայացվածության, այլ կենտրոնանում են տեղական ազդեցության վրա՝ ընտրելով համայնքային ներգրավվածությունը որպես առավել արդյունավետ և իմաստալից քաղաքական մասնակցություն:

«Ես սիրում եմ համայնքային աշխատանքը... ուզում եմ շարունակել համայնքին օգտակար լինել:»

«Իմ կյանքը առանց դպրոցի և իմ աշակերտների չեմ պատկերացնում... ընտրությունը չի լինի քաղաքականության օգտին:»

Նման մոտեցումը բնորոշ է նաև այն կանանց, որոնք նախընտրում են շարունակել իրենց մասնագիտական աշխատանքը՝ դուրս գալով քաղաքականությունից:

Կանանց դերը քաղաքականության մեջ՝ որպես փոփոխության գործիք. որոշ կանայք իրենց ապագա քաղաքական ներգրավվածությունը կապում են կոնկրետ ոլորտների հետ՝ կրթություն, սոցիալական քաղաքականություն, կանանց իրավունքներ: Նրանք տեսնում են իրենց դերը որպես կոնկրետ ոլորտում փոփոխություն բերողներ:

«Կխորանամ հիմնականում «կանանց դերը կրթության ոլորտում», այդ գաղափարով առաջ կգնամ:»

«Ես ինձ տեսնում եմ սոցիալական բլոկում... տեսլական ունեմ, ավելի, քան այլ ոլորտներում:»

«Ես հետագայում տեսնում եմ իմ քաղաքական գործունեությունը քաղաքականության մեջ երիտասարդ կադրերի պատրաստման մեջ: Ինձ համար դա շատ լուրջ քաղաքական գործունեություն է՝ քաղաքական դպրոցներում ապագա քաղաքական գործիչներ պատրաստել:»

Նշված դիրքորոշումը վկայում է, որ կանայք քաղաքականությունը դիտարկում են որպես ոլորտային բարեփոխումներ իրականացնելու գործիք, հատկապես այն ոլորտներում, որոնք ավանդաբար կանանց հետ են ասոցացվում:

Վստահություն, պայքար և ինքնության հաստատում. որոշ կանայք իրենց ապագան տեսնում են քաղաքականության մեջ՝ որպես ինքնության անբաժանելի մաս: Նրանք ընդգծում են իրենց պայքարի շարունակականությունը և քաղաքական խոսքի կարևորությունը:

«Ես արդեն սկսում եմ ինձ չպատկերացնել առանց քաղաքականության... իմ տեսակը պետք է:»

«Ես պատրաստվում եմ շարունակել իմ պայքարը:»

Սա վկայում է, որ կանայք կարող են ձևավորել կայուն քաղաքական ինքնություն, որը դուրս է գալիս պաշտոնի սահմաններից և հանրային դերակատարում ստանձնում:

Քաղաքական ներգրավվածության կտրուկ մերժում. հարցված կանանց մի մասն իրենց ապագա ծրագրերի մասին խոսելիս կտրուկ մերժել է քաղաքական կարիերայի շարունակությունը: Պատճառների թվում, նրանց ներկայացմամբ, խոր հիասթափությունն է անբարենպաստ քաղաքական միջավայրից, երկրորդը՝ նրանց նպատակների իրականացման հանգամանքն է, երրորդը՝ սերնդափոխության պայմաններում իրենց նոր դերակատարման մասին պատկերացումը:

«Ես կարող եմ շատ վստահ ու անկեղծ ասել՝ առանց տատանվելու, որ այլևս չեմ շարունակելու քաղաքական գործունեությունս: Ես երեք հիմնական նպատակ ունեի քաղաքականության մեջ լինելու, որոնք, մեծ հաշվով, իրականացել են:»

«Իրականում ես այնքան խոր հիասթափություն ունեմ, որ գրեթե վերջնական որոշում ունեմ, որ հետագայում այլևս չեմ առաջադրվելու: Հիասթափվել եմ, որ, ցավոք սրտի, փողոցային բարքերով են լուծվում շատ-շատ հարցեր:»

«Քաղաքական գործունեությունը շատ ավելի լայն է ինձ համար, քան ԱԺ պատգամավոր լինելը: Ես միշտ կարևորել եմ երիտասարդների մուտքը քաղաքականություն, և պետք է գա մի պահ, երբ մենք՝ որպես կայացած, հասուն մարդ, տեղ բացենք երիտասարդ քաղաքական գործիչների համար:»

Քաղաքական դաշտում բարքերը, ատելության խոսքը, ընտանիքների թիրախավորումը հետագա ընտրության առջև են կանգնեցնում նույնիսկ քաղաքական մեծ փորձ ունեցող կանանց, որոնք, իրենց բնորոշմամբ, մի կողմից՝ տհաճություն են զգում քաղաքական գործընթացների աղճատվածությունից, մյուս կողմից՝ պատասխանատվություն՝ պայմանավորված երկրի անորոշ վիճակով:

Միջազգային հեղինակավոր հետազոտությունները նույնպես գալիս են հաստատելու սույն հետազոտության շրջանակում ստացված արդյունքները:

Օրինակ՝ «Ներկայացվածությունն ու մարտահրավերները կանանց քաղաքական կարիերայում» աշխատությունը¹⁵¹, անդրադառնալով Եվրամիությունում կանանց ապագա քաղաքական ծրագրերին և կարիերային ձգտումներին, դիտարկում է դրանք կարիերայի փուլերի, անձնական մոտիվացիայի և հավակնությունների, ինչպես նաև հնարավորությունների համատեքստում .

151 Gendered European careers? Representation and the challenges in women's political careers Elena Frech Institute for Political Science, Otto-Friedrich-Universität Bamberg, Bamberg, Germany, 2021, <https://journals.sagepub.com/doi/epub/10.1177/14651165241300281>

- **կարիերայի փուլեր**¹⁵² նախաինստիտուցիոնալ, ինստիտուցիոնալ և հետինստիտուցիոնալ փուլեր: Յուրաքանչյուր փուլում կայացրած որոշումները ազդում են հաջորդի վրա՝ ձևավորելով քաղաքական ձգտումների շրջանակը.
- **անձնական մոտիվացիա և հավակնություն**¹⁵² կարիերայի շարժիչ ուժեր են, որոնք ուղղակիորեն կապված են ապագա պաշտոնների ձգտման հետ:
- **հնարավորությունների ընկալում**¹⁵² կանայք հաճախ սահմանափակվում են կուսակցական ընտրության մեխանիզմներով, հասարակական կարծրատիպերով և ինստիտուցիոնալ նորմերով, որոնք ազդում են ապագա պաշտոնական առաջխաղացման պլանավորման վրա:

Հետաքրքրական է, որ հետազոտությունը ուսումնասիրել է նաև «**քաղաքականությունից հետո**» **իրավիճակը**, նշելով, որ կանայք բախվում են դժվարությունների բարձր վարձատրվող պաշտոններ ստանալու հարցում, ինչը սահմանափակում է նրանց հետագա կարիերայի պլանավորումը: Սյո իրավիճակը հաղթահարելու համար հետազոտությունն առաջարկում է տեսական շրջանակ՝ «ով, ինչ, երբ, ինչպես» ձևաչափով, որը կարող է օգնել քաղաքական որոշում կայացնողներին հասկանալ, թե երբ և ինչպես են կանանց կարիերային ձգտումները խոչընդոտվում, և ինչ բարեփոխումներ են անհրաժեշտ՝ այդ խոչընդոտները հաղթահարելու համար:

Մեկ այլ հետազոտությունում¹⁵², որը հիմնված է **տարբեր երկրներում կին պատգամավորների հետ հարցումների վրա**, անդրադարձ է կատարվում կանանց քաղաքական ուղու մեկնարկին և հետագա առաջընթացին և ընդգծվում է, որ կանայք հաճախ ավելի քիչ հավակնություն են ցուցաբերում բարձր պաշտոնների նկատմամբ, քան տղամարդիկ, ինչը պայմանավորված է հարցվածների նշած մի շարք խոչընդոտներով: Դրանց թվում են՝ ֆինանսական դժվարությունները, կուսակցությունների՝ որպես քաղաքականություն մուտք գործելու «դարպասների» ներառականության և թափանցիկության պակասը, հանրային կարծրատիպային ընկալումներով, մեդիայի ուշադրությամբ և օնլայն բռնությամբ պայմանավորված ճնշումը և այլ գործոններ, որոնք ազդում են ոչ միայն ներկա մասնակցության, այլ նաև ապագա քաղաքական ձգտումների վրա:

Հարցված կանայք նշել են, որ իրենց քաղաքական ներգրավվածությունը պայմանավորված է մի շարք նախադրյալներով.

- **հասարակական ազդեցության ձգտում**¹⁵² քաղաքականությունը դիտարկվում է որպես «ամենաարագ և արդյունավետ միջոց՝ փոփոխություն իրականացնելու» համար:
- **ընտանեկան աջակցություն**¹⁵² 80%-ից ավելին նշել է, որ ընտանիքի անդամները կամ ամուսինը խրախուսել են նրանց առաջադրվել ընտրություններում.
- **կրթություն և մասնագիտական փորձ**¹⁵² հարցվածների մեծ մասը բարձրագույն կրթություն ունի և ղեկավար պաշտոններ է զբաղեցրել, ինչը նպաստել է ապագա քաղաքական ձգտումների ձևավորմանը:

152 WOMEN'S POLITICAL CAREERS 2022, By Sofia Collignon, Queen Mary University of London and Minna, Cowper-Coles, King's College London, Global Institute for Women Political Leaders AISBL

Վեստմինստերի ժողովրդավարության հիմնադրամի (WFD) կողմից հրապարակված հետազոտության զեկույցը¹⁵³ հաստատում է այն հիմնական ազդակները, որոնք ձևավորում են կանանց քաղաքական կարիերայի ձգտումները.

- **ընտանեկան ներգրավվածություն և աջակցություն՝** քաղաքականությամբ զբաղվող ընտանիքի անդամները հաճախ ոգեշնչել են կանանց՝ քաղաքականություն մտնելու համար: Սա ոչ միայն մղել է դեպի քաղաքականություն, այլ նաև օգնել է հասկանալ դրա մեխանիզմները.
- **քաղաքական խնդիրներ և անձնական փորձառություններ՝** բազմաթիվ կանայք նշել են, որ կոնկրետ խնդիրների նկատմամբ անհանգստությունը կամ ակտիվությունը մղել է իրենց դառնալու քաղաքական առաջնորդ.
- **հանրային ծառայության զգացում՝** «աշխարհն ավելի լավը դարձնելու» ցանկությունը նշվել է որպես հիմնական շարժիչ ուժ՝ մոտ 50% հարցազրույցներում:

Ջեկույցը մանրամասնորեն ներկայացնում է, թե ինչպես են կանայք պատրաստվում քաղաքական առաջնորդության համար՝ իրենց ձգտումները կյանքի կոչելու նպատակով, ինչպես նաև անդրադառնում է այն խոչընդոտներին, որոնք կարող են սահմանափակել կանանց քաղաքական ձգտումները:

Փաստելով սույն հետազոտության արդյունքների համադրելիությունը միջազգային հետազոտությունների մոտեցումների հետ՝ կարելի է եզրակացնել, որ կանանց քաղաքական ապագայի պատկերացումները բազմաշերտ են, արտահայտում են թե՛ գաղափարական մոտեցումներ, թե՛ գործնական վերապահումներ: Սույն հետազոտության մասնակից կանանց պատասխանները վկայում են, որ կանայք հաճախ ընկալում են քաղաքականությունը ոչ թե որպես դասական կարիերա, այլ որպես հանրային ծառայություն, արժեքային պայքար և սոցիալական պատասխանատվություն: Սա հաստատվում է նրանց դիրքորոշումներով, որոնք շեշտադրում են ոչ թե պաշտոնի ձգտումը, այլ ազդեցության հնարավորությունը՝ հանրային բարեփոխումների միջոցով:

153 Westminster Foundation for Democracy: Women’s political careers: Where do leaders come from? Rebecca Gordon, Shannon O’Connell, Sophia Fernandes, Keerti Rajagopalan & Rosie Frost, London, March 2021



Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ

- Հարցված կանայք նշում են, որ մուտք են գործում քաղաքականություն ոչ թե անձնական շահի, այլ հանրային ծառայության, գաղափարական համոզմունքների և համայնքային պատասխանատվության հիմքով: Դրա հետ մեկտեղ, գենդերային հավասարության հարցը դեռևս քիչ է արտացոլված նրանց մոտիվացիայում:
- Հարցված կանանց առաջնորդության մոդելը հիմնված է համագործակցության, արժեքայնության և հանրային զգայունության վրա՝ հակադրվելով մրցակցային և հիերարխիկ մոտեցումներին:
- Հաջողությունը հարցված կանայք կապում են հանրային ազդեցության, սկզբունքայնության և սոցիալական փոփոխությունների վրա ունեցած ազդեցության հետ՝ ընդգծելով համերաշխության և թիմային աշխատանքի կարևորությունը:
- Չնայած կանանց մեծ ներուժին՝ նրանց առաջընթացը սահմանափակվում է համակարգային խոչընդոտներով, կարծրատիպերով և ընտանեկան պարտականությունների բեռով, ինչը պահանջում է բազմաբնույթ և համակարգային աջակցություն:
- Ընտրողների, քաղաքացիական հասարակության, մեդիայի և տեխնոլոգիաների հետ արդյունավետ կապը կարևոր նախապայման է կանանց քաղաքական հաջողության համար, սակայն թվային միջավայրում առկա ռիսկերը պահանջում են պաշտպանական մեխանիզմներ:
- Կուսակցությունները հաճախ գործում են փակ և հայրիշխանական մշակույթի շրջանակում, ինչը սահմանափակում է կանանց իրական ներգրավվածությունը և նրանց քաղաքական առաջխաղացումը, սակայն ներքին քվոտաների և գենդերազգային ռազմավարությունների միջոցով հնարավոր է ապահովել հնարավորությունների հավասարություն:
- Հարցված կանանց պատկերացումները իրենց քաղաքական ապագայի մասին բազմազան են՝ տատանվելով շարունակական ներգրավվածությունից մինչև հիասթափություն և հրաժարում, ինչը վկայում է միջավայրի, իրավիճակի, արժեքների և հնարավորությունների վրա հիմնված ընտրության մասին:

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ձևակերպելու կանանց քաղաքական կարիերայի աճին նպաստող միջարքառաջարկություններ՝ հասցեագրված բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ կին քաղաքական գործիչներին, կուսակցություններին, ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Կառավարությանը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և լրատվական դաշտին, ինչպես նաև Հայաստանում կանանց զորացմանն ուղղված ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպություններին:

Առաջարկությունները միտված են հետազոտության ընթացքում բացահայտված խնդիրների լուծմանը և ենթադրում են կանանց քաղաքական առաջընթացին աջակցող գործողություններ հետևյալ ուղղություններով.

1. Ինստիտուցիոնալ և օրենսդրական աջակցություն

- Մշտադիտարկել կանանց մասնակցությունը առաջիկա խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններին՝ կանանց քաղաքական առաջընթացի միտումները և հնարավոր մարտահրավերները բացահայտելու նպատակով:
- Գնահատել կանանց մասնակցությունը առաջիկա ՏԻՄ ընտրություններին՝ նախկինում արձանագրված խախտումների հաղթահարման նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքում ներդրված գենդերային քվտայի պահպանման լրացուցիչ երաշխիքների արդյունավետության տեսանկյունից:
- Մշտադիտարկել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսվող պետական նպատակային ֆինանսավորման մեխանիզմի արդյունավետությունը՝ կուսակցությունների ղեկավար կազմում կանանց ներկայացվածությունն ապահովելու հարցում:
- Աջակցել կուսակցությունների ներսում կանանց ներգրավումը և առաջխաղացումը խթանող ռազմավարությունների մշակմանը, ներքին ընթացակարգերի թափանցիկությանը և գենդերային զգայունությանը նպաստող մեխանիզմների ներդրմանը, ընդլայնել ներքին քվտայների կիրառման նախադեպային պրակտիկան:
- Բարձրացնել երկրի կառավարմանը մասնակցող բոլոր կուսակցությունների պատասխանատվությունը կանանց քաղաքական առաջընթացն ապահովելու հարցում՝ խրախուսելով նրանց մասնակցությունը պետական գենդերային քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերին և միջոցառումներին, մասնավորապես, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարության մեջ կուսակցությունների հասցեագրված նպատակին¹⁵⁴ հասնելու ուղղությամբ:
- Նպաստել ՀՀ Ազգային ժողովում ներկայացված կին պատգամավորների համախմբմանը կանանց առաջընթացի ապահովման օրակարգի շուրջ և ընդօրինակելով այդ ուղղությամբ խորհրդարանական կառավարման երկրների միջազգային լավագույն փորձը, ստեղծել կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդարանական հանձնաժողով:
- Վերանայել ««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծով¹⁵⁵ նախատեսվող ավագանու անդամների գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի փոխհատուցման համակարգը՝ ապահովելով ավելի արդար և թափանցիկ մոտեցում ավագանու անդամների ներգրավվածությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

154 ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարություն, թիվ 1 գերակայություն, նպատակ՝ «Քաղաքական կուսակցությունների կողմից գենդերազգայուն քաղաքականությունների մշակում և պրակտիկաների կիրառում»:

155 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ <https://www.e-draft.am/projects/9105/about>

2. Կարողությունների և հմտությունների զարգացում, կրթական ծրագրեր

- Ներդնել կանանց զորացման և առաջնորդության զարգացման ուղղությամբ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերում հատուկ դասընթացներ՝ կանանց առաջնորդության համար անհրաժեշտ քաղաքական հաղորդակցության, բանակցային, լրատվամիջոցների հետ շփման, ժամանակի կառավարման, սթրեսի հաղթահարման հմտությունները կատարելագործելու նպատակով:
- Մշակել և իրականացնել ազգային և տեղական մակարդակում հատուկ ծրագրեր կին քաղաքական գործիչների թվային հմտությունների զարգացման ուղղությամբ՝ սոցիալական մեդիայի, քարոզչական ռազմավարության, կիբեռանվտանգության և տեխնոլոգիական գիտելիքների ընդլայնման նպատակով:
- Ընդլայնել տեղական և ազգային մակարդակներում մենթորական ցանցերը՝ փորձառու կին քաղաքական գործիչների և սկսնակների համագործակցության նպատակով:
- Ապահովել Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության ընդլայնման ուղղությամբ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերի շարունակականությունը ու արդյունքների կայունությունը:
- Նպաստել տեղեկատվական-վերլուծական օնլայն հարթակի ստեղծմանը՝ քաղաքականության մեջ ներգրավված կանանց հետագա քաղաքական կարիերային և նրանց ցանցային համագործակցությանը տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

3. Հանրային աջակցություն և կանանց համերաշխություն

- Նպաստել կանանց համերաշխության կայացմանը կին քաղաքական գործիչների և քաղաքացիական հասարակության կազմակերպություններում ներգրավված կանանց հետ համագործակցության հարթակների ձևավորման միջոցով՝ կանանց զորացման օրակարգի շուրջ:
- Նպաստել մեդիայում կանանց քաղաքական մասնակցության մասին դրական պատկերացումների, կին քաղաքական գործիչների ոչ կարծրատիպային կերպարի ձևավորմանը՝ լրագրողական համայնքի հետ համագործակցության տարբեր ձևաչափերի ստեղծման միջոցով:
- Իրականացնել հանրային քարոզարշավներ՝ ուղղված կարծրատիպերի հաղթահարմանը, գենդերային հավասարության գաղափարի տարածմանը, սեքսիզմի և ատելության խոսքի բացառմանը, ընտանիքի՝ որպես կնոջ առաջնորդությանն աջակցող միջավայրի դերի բարձրացմանը:
- Ցուցաբերել միասնականություն և հանդես գալ նախաձեռնություններով երեխաների խնամքի ենթակառուցվածքների զարգացման և ընդլայնման, ընտանիք-աշխատանք հավասարակշռության ապահովման ուղղությամբ՝ կանանց քաղաքական և աշխատանքային կարիերայի խոչընդոտները վերացնելու նպատակով:

- Մշտադիտարկել խորհրդարանում և ՏԻՄ-երում կանանց ու տղամարդկանց համեմատական ակտիվության ցուցանիշները (ելույթները, օրենսդրական նախաձեռնությունները, հարցադրումները)՝ նպաստելով կանանց քաղաքական գործունեության տեսանելիությանը և դրա վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարմանը:

4. Տղամարդկանց որպես դաշնակիցների ներգրավում

- Խթանել տղամարդ քաղաքական, հասարակական գործիչների, մասնագետների և հայտնի դեմքերի ներգրավումը՝ որպես գենդերային հավասարության և կանանց առաջնորդությանը աջակցող դաշնակիցներ:
- Իրականացնել կանանց և տղամարդկանց համատեղ քաղաքական դպրոցներ՝ ներառելով քաղաքական հմտությունների և առաջնորդության զարգացմանն ուղղված ուսումնական ծրագրերում գենդերային զգայունության դասընթացներ:
- Ներգրավել տղամարդ պատգամավորներին ատելության խոսքի դրսևորումների դեմ պայքարում, կանանց կողմից նախաձեռնվող ակցիաներին, հանրային քարոզարշավներին, համատեղ մասնակցություն ապահովել հանրային շահերի ու մարդու իրավունքների պաշտպանության տարբեր այլ միջոցառումներում և ծրագրերում:
- Նպաստել կանանց մասնագիտական ներուժի ավելի լայն ներգրավմանը Ազգային ժողովի աշխատանքներում՝ ընդլայնելով կին և տղամարդ պատգամավորների կողմից տարբեր ոլորտներում օրենսդրական նախաձեռնությունների համատեղ մշակման պրակտիկան:

